[illegible]

[illegible]

[illegible]

# ՅԱՂԱԳՍ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Հաւատոյն Քրիստոնէականի, Առ Շահ
Աբբաս Արքայն Պարսից.

Ի Պօղոսէ փիրոմալլէ՛ ի կարգէն քարոզողաց Վարդապետաց, և Արհիեպիսկոպոսէ Նախիջևանայ Նահանգին,
Շարադրեցեալ.

Ես եմ ճանապարհն, և ճշմարտու



թի, և կեան. Յոհաննու. գլուխ 14. համար 6.

Ի ՄԵԾՆ ՀՌՈՄ.

Romæ, Apud Paulum Monetam. 1674.

SVPERIORVM PERMISSV.

*Imprimatur, si videbitur Reuerendiss. P. Mag. Sac. Pal. Apostol.*

I. de Angelis Archiep. Vrbin. Vicesg.

*Imprimatur.*

Fr. Raymundus Capisuccus Sac Pal. Apost. Magister.

# ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Փառք, և պատիւ, և իշխանութի արքայից արքային, որոյ զօրութին է անզրաւելի, գիտութին անչափելի, և սէրն անճառելի: Նմա գովութի անդադար, որոյ զօրութին է անյաղթելի, իմաստութին անբաւելի, և սէրն անքննելի.

Այնմ գերագունոյ արքային փառք յաւիտենականք, և երկրպագութիւք մշտնջենականք, որոյ՝ զօրութին կոչեաց զամինչ 'ի գոյութի էութե, որոյ՝ իմաստութին զստեղծուածս հանուրս կառավարէ, և որոյ՝ սէրն զբնաւս էակս 'ի մի յօդաւորէ: փառք, պատիւ, և գովասնութի այնմ տէրանց տն, որոյ կարողութին 'յոչումեքէ է, և իմաստութին 'ի կարողութե իւրմէ, իսկ սէրն 'յերկաքանչիւրոցն իբրև 'ի միոյ աղբերէ արտաբղխեցեալ: Նմա՝ միայնում տէրութի, որոյ էութին է անսկզբնական, իմաստութին անեզրական, և սէրն 'ի յերկոցունցն անզանազանական:

Այ: Գ գերագունոյն պատիւ, և երկրպագութի, որոյ էութին ոչէից ամենեւին ոչէ ներ ընդունական, որոյ իմաստութին զամ գի-

տութի՛ 'ի բաց հերքէ, և որոյ սէրն յա՛ծ առէ լութէ մեկուսի է։ Այնմ բարձրագունեղի ա՛ծ միապետութի, որոյ էութիւն է անունն իւր, և որոյ անունն է անսահմանելի, որոյ գոյութիւն է անփոփոխարկելի, և որոյ էականութիւն է անիմանալի : Որ ոչ զանցեալ ներընդունի, և ոչ զապառնի, այլ զբ' գոլով քան զամենայն յաւիտեանս, և զժամանակս, և զբովանդակութի ամանակաց ամփոփէ 'ի մի կէտ անտրոհելիականս որոյ' և ոչ զնաստութի, և ոչ զերիցութիւն 'յինքէ անընդերէ : Է միշտ մի և նոյն էութի պարզագունեղ, անքակտելի, անփոփոխելի, անայլայլելի, անտեսանելի, անշօշափելի, անպարագրելի : Ինքն պարզագունեղ գոլով, զպարզս և զբաղադրեցեալս հաստատեաց, և անշարժ գոլով շարժէ զա՛մս : Ինքն անտեսանելի գոլով, զա՛մ ինչ տեսանէ, և աներևոյթ գոլով երևեցեալ և աներևութից է արարչագործ, և տեսանօղ : Ինքն անպարագրելի գոլով զհամօրս էակս բովանդակէ, չափէ, և պարագրէ : Է էութի բոլորովի մե՛ զերքան զա՛մ, ներամենեսեան, և արտաքոյ ամենեցուն. Այս է ա՛ծն քրիստոնէից ո՛վ Թագաւոր մեծազգոյ: Եւ այս է ա՛ծն, զոր մեք քրիստոնեայքս պաշտեմք. և որում երկիրպագանեմք : Զոր, և երկրպագելի, և պաշտելի

գոլ

գոլ ընդ հանուրս տիեզերս հռչակեմք և աւե-
տարանեմք: Այս՝ ուրեմն ա̄ծ է ստեղծօղ ամե-
՚նից գոյից, և արարիչ գոլով, հետևապէս է
ամենեցուն սիրօղ զի զա̄մ ինչ սիրէ. և ամենե-
ցուն զգոլ շնորհէ. և՚ի գոլն պահէ, և առ բա-
րին վերաբերէ: Եւ մանաւանդ զմարդն սի-
րէ, զոր ՚ի վ̄ր տիեզերաց մեծ, և գերյարգոյ
իշխան կացոյց. բաշխելով ՚նմա զհոգի մտա-
ւոր, անմարմին, և անմահ. և յաւիտենակա-
՚նաց, և անտեսանելեաց բարութեց տեսանօղ:
Բայց տեսանելով զմարդն խոտորեցեալ ՚յուղ-
ղութե̄ ևփառաթարապէս մոլորեցեալ. կամե-
ցաւ ուղղել զնա. Սակս որոյ զբանն իւր-
որ է իմաստութի̄ իւր: առաքեաց ՚յաշխարհ
զգեցմամբ մարմնոյ; այսինքն՝, զտ̄րն մեր,
յս̄ քս̄, զոր ո̄յ բան, և Մեսիհ ՚իսրբոց մար-
գարէիցն յառաջագուշակեցեալ համադաւա-
՚նիմք: Զայսցանէ բնաւից համառօտաբար
՚ըն գրգոջ այսմիկ բացատրեալք վերանւի-
րեմք, և մատուցանեմք քում մեծարգութեդ,
տ̄զլի՝ սոլաւ վերահասու լեալ տեղեկանայ
ցես, թէ ՚նորում կայանայցեն մանկունք
քրիստոնէականի հաւատոյս մերոյ, զորս վ̄ս դի-
տրութե̄ բովանդակեցաք ՚ի յերկուս հատորս:
Որոց առաջինն ընձեռ է, զմ̄յ միոյ ներրակէ;
իսկ երկրորդն, զբ̄նէ ըստ որում է Մսիհ.



Գնացեալք ուրեմն՝ ուսուցէք զա̅մն ազգս, մկրտելով զնո̅ յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ: Մթ̅ի. 28. ՚ի թիւն. 19.

Հատոր Առաջին

# ՅԱՂԱԳՍ Ա̄Յ՝ ՄԻՈՅ և ԵՐՐԱԿԻ :

## Գլուխ Առաջին.

### Յաղագս Ճանաչելութեան ա̄յ :

ԶԱնբաղդատելով ընդ ստեղծա-
կանացս. բնականաւ իւիք կա-
րողութեամբ ճանաչեմք զոլ մե-
ծագունեղ. և վեհագունեղ, ա-
մենակարող. ամենիմաստ, և
ամենասէր, հեռացեալ ամե-
նեքումբ՝ 'ի մարմնականութենէ, մեկնեցեալ բո-
լորովին՝ 'ի նիւթականութենէ, և անընդգու-
նակ համայնից բաղադրութեանց : Անեղր, և
անդր՝ քան զա̄մ սահման: Անչափ, անքննելի,
անորակ, և ամենից չափուց, և քանակու-
թեանց, և որակութեանց. իւրով գերունակութեամբ
ներընդունող: Անժամանակ, և գերագոյն դըր-

նաւս ժամանակս , և բովանդակութիք ան-
ցելոց և ապառնեաց առաջի նորա հանդէպք
են և հաւասարք : Անուր , և գերքան զամ
ուրեք, և ոչէ ուրեք, որ ոչ լնանի նովաւ : Գոյ
ութի գեր 'ի վերոյ քան զամ իմացումն մտաց ,
զոր ոչ միտ իմանալ . և ոչ լեզու արտաբե-
րել կարէ , և առ որ յղացմունք իմացողու-
թեց , քննութիք բանականաց , և խոկմունք
իմաստասիրաց ժամանել ոչ բաւեն . քանզի զա
մենեքումբ անպարագրելեաւ իւիք վեհակա-
նութեմբ գերազանցէ : Անտեսանելի , անշօշա-
փելի , անփոփոխելի , անայլայլելի , անախտ ,
անմահ , և զուտ կեան . որոյ և կեանն է էու-
թի իւր , իսկ էութե նորա գոլով նախնագու-
նեղ և գերազանցագունեղ զհանուրս էութիս
պարփակէ , և պարունակէ . Անսկիզբն , անվախ
ճան , և անհուն , և բովանդակիչ հանուրց
տեղականութեց . Բոլորն արտաքոյ ամե-
նից ուրանօրութեց . բոլորն 'ի մէջ ամենից
ուրանօրութեց , բոլորն 'ի վերոյ քան զամ
ուրանօրութի , բոլորն 'ի ներքոյ ամենից ուրա-
նօրութեց : Բոլորն 'ըն բոլորում աշխարհի ,
բոլորն 'ըն իւրաքանչիւր մասունս աշ-
խարհի , բոլորն 'ի վերոյ աշխարհի , և բո-
լորն 'ի ներքոյ աշխարհի , անպարփակա-
պէս պարունակեցեալ : Առ արտաքս ո՛չ

տրոհեցեալ, ՚ի վեր ոչ վերամբարձեցեալ, ՚ի
վայր ոչ ստորադրեցեալ: Այլ է՛ բոլորն
ը՛ն՝ բոլորում աշխարհի, և բոլորն ՚ը՛ն իւրա-
քանչիւր մասնկունս նոյն, զօրութ̃բ, ներ-
կայութ̃բ, և էութ̃բ: Զօրութ̃բ, զի զա̃մ-
ե̃նչ տ̃րութե իւրում հպատակեալ հնազան-
դէ: Ներկայութ̃բ*, զի ամենից զգոյն շնոր-
հէ, և անմիջաբար ՚ի գոյութե պահէ: Է և ս
տ̃ր տէրանց, անեղ, և անստեղծ և ամե-
նից իւրաց ստեղծօղ, արարիչ, կառավա-
րիչ, և կերակրիչ. ներշնչօղ, և առ բարիս
ուղղեօղ: Ամենեցու՛ն սիրօղ: և ողորմած.
ամենեցու՛ն փրկիչ և զխոստմանն պարգևօղ,
և վարձատրօղ. վ̃ն զի իւր է ա̃մ ինչ առ հա-
սարակ: Զայսպիսս և զայլն նմանս առեմք
զա̃յ բաղդատելով զնա ընդ ստեղծականացս
՚ի ձեռն բնականի ուրուք իմացողութե:

* զի զա̃մ ի՛նչ ՚ներքոյաբար նկատէ: Էութ̃բ,



## Գլուխ Երկրորդ.

## Յաղագս Գոյութեն այ:

Զգոյն այ հաստատեմք նախ 'ի շարժմանէ, այսպէս: Գոյ շարժումն 'յաշխարհի. ուրեմն և առաջին շարժօղ: Եւ այն է ած:

Երկրորդ՝ 'ի հարկաւորութե և 'ի կարևորութե, որգոն. Գոյ իր կարևոր 'յաշխարհի այսմիկ, ուրեմն երբեմն ոչէր և յետոյ եղև. ապա ուրեմն 'ի գոյէ իմեքէ հարկաւորէ յառաջածու: Եւ այն է ած: Երրորդ՝ 'ի կարգաւորութե պատճառաց, որգոն, Գոյ կարգ պատճառաց 'յաշխարհի այսմիկ. ապաուրեմն և առաջին կայուցիչ կարգին. Եւ այն է Աստուած:

Չորրորդ՝ 'ի յաստիճանաց կատարելութեց: որգոն. Գոյ 'յէակս կարողութի ինչ փոքրագոյն, և կարողութի ինչ մեծագոյն: իմաստութի ինչ սակաւագոյն, և իմաստութի ինչ յոլովագոյն: բարութի ինչ նուազագոյն, և բարութի ինչ առաւելագոյն, էութի ինչ ազնուագոյն, և էութի ինչ անազնուագոյն, Ուրեմն

գոյ

գոյ եւ կարողութի իմն մեծագունեղ, իմաստութի իմն յոլովագունեղ. բարութի իմն առաւելագունեղ եւ էութի իմն ազնուագունեղ ՚յորմէ են հանուրք աստիճանք կատարելութեց. Եւ այն է այծ. Քանզի ոչ առաւելութի ննուազութի իւրոյն ջերմացելոց յառաջագոյն ՚ի հրոյն, որ է ջերմագունեղ, այսպէս առաւելութի ննուազութի ամենից կատարելութեց յառաջագոյն ՚յայն, որ է կատարելագունեղ.

Հինգերորդ՝ ՚ի հաղորդակցութէ ներհակաց, որգոն, Գոյ ՚յեակս հաղորդակցութի ներհակաց, ոչ ՚յին բաղադրեցեալս ՚իչորից տարերց. Ուրեմն գոյ եւ կարողութի իմն զօրեղագունեղ. որ ժողովէ զնոսա ՚ի մի, Եւ այն է Այծ,

Այս ուրեմն՝ որով իմացողութե ճանաչեմք զայծ, նովիմբ և հաստատեմք զգոլ Նորին;

## Գլուխ Երրորդ:

## Յաղագս Միութեն այ:

ԶԱծ մի գոլ, եւ ոչ՝ բազում, հաստատեմք ՚նախ՝ այսպէս: Ած կատարումն ագունեղ իմն է, և ամենից կատարելութեց տր: իսկ եթէ գոյին երկու ածք, զանազանիւք կատարելութեք տարբերեցեալք բաժանեին ՚ի միմեանց. վասնզի գոյր կատարելութի իմն ՚ի միում. որ ոչ գտանիւր ՚ի միւսում. Ուստի՝ այն որում ոչինչ պակասիւր, գոյր միայն ած, եւ ոչ այն՝ որում նուազիւր: զի ած ամենակարող է. Ուրեմն մի է ած. այլ ոչ բազում.

Երկրորդ՝. Որք ՚ի մի սեռ համագումարին, ՚ի հարկէ կախին ՚ի միոջէ. զի ամ սեռ մի գոլով համահանգէտ է բազմութե, եւ ամ բազմութի ՚ի միոյ թէ առնու զսկիզբն: Արդ էակք ամենեքեան ՚ի մի էութի համագումարին, Ուրեմն ՚ի հարկէ եղիցի մի միակ, այն, որ ընդհանրից էութեց է համահանգէտ, եւ այն է Ած.

Երրորդ՝. Էն եւ մին են հակադարձականք, ուրեմն

ուրեմն նեղակն անեզր հակադարձի ընդ միոյն անեզրի. իսկ ամենակարողն ա̅ծ է եակ անեզր, ապա ուրեմն է և մի անեզր:

Չորրորդ՝. ա̅ծ գերունակ է էութի̅ անեզր ո̅պ ասացաք. իսկ երկու էութիք՝ ոչ կարեն * զանեզերք լինիլ միանգամայն, ուրեմն ա̅ծ մի է. և ոչ բազում.

Բայց 'յայսցանէ ունիմք և զայլս գիտութիս զա̅յ, որք զքննութե̅ մերով գերազանցեն, բնականաւ իմացողութե̅ 'ի բաղդատմանէ ստեղծուածոյս իմանիլ ոչ կարեն. Ուստի՝ առ այնոսիկ հաւատով միայն՝ հաստանիմք, քանզի իրքն, զորոց են գիտութիքն, գոն մեզ աներևոյթք. Բայց՝ ա̅ծն ամենասէր զայնոսիկ, 'ի ձեռն մարգարէից իւրոց սրբոց առ մեզ հասուցանէ. Ո̅պ ասէ Ամովս մարգարէն 'ըն գլխոյն 3. 'ի թիւն 7. Զի ոչ առնէ տ̅ր ա̅ծ վբան ինչ. եթէ ոչ յայտնիցէ զխորհուրդ իւր. ծառայից իւրոց Մարգարէից:

Գլուխ

## Գլուխ Չորրորդ ։

Թէ գիտիցեմք եւ զբազում ինչ միայն գեր-
բնապէս ՚ի ձեռն յայտնութե
մարգարէիցն .

Զբազում ինչ հաւատամք եւ դաւանիմք , զորս ա̃ծ ծանուցեալէ մեզ ՚ի ձեռն սրբոց մարգարէից, զո՛ր օրինակ . Թէ ա̃մ մարդ յառնելոց իցէ ՚ի մեռելոց հանդերձ մարմնով իւրով ։ Թէ ՚ի յարութե յաւուրն յետնում հատուցանելոց իցէ ա̃ծ իւրաքանչիւրումէք զփոխարէնն ըստ գործոց . Եւ թէ իցէ արքայութի երկնից , եւ դժոխս . Արքայութիւն յաղագս անոցիկ, որք ա̃ն ծառայեցին ։ իսկ դժոխն սակս ապստամբիցն . որք զօրէնս ա̃յ ոչ պահեցին, եւ զգործս չարութեց իւրեանց ոչ ապաշխարեցին ։ Զայսոսիկ եւ զսոցին նմանս , զորս իմացեալքեմք ՚ի լոյս բանիցն ա̃յ , հաւատամք եւ խոստովանիմք գոլ ճշմարիտս . Բայց՝ եթէ ոք հարցանիցէ մեզ , թէ ընդէր զայսպիսիս ընդունիցիմք եւ քարոզիցեմք . Պատասխանեմք՝. Թէ վասնորիկ, զի են ասացեալք ՚ի մարգա-

րէիցն

բնիցն արգոյ, որք իբրև խորհրդածուք այ՟ բար-
ձրելոյն. զոր լուանն 'ի նմանէ, յայտնեցին
մեզ նկատուիրեցին: Եւ թէպէտ թուին մասաց
մերոց, այսոքիկ անհնարինք, և բնականաւ իմա-
սութեամբ մերով իմանալ զնոյնս, ոչ բաւեմք.
սակայն զհաւատութեամբ 'նոցին ոչունիմք
ամենևին զերկբայութիւն, զի յայ՟ էն մեզ յայտ-
նեցեալք, որոյ բանն ամենևին հեռի է 'ի
ստութենէ, և խաբէութենէ իբրև զառանիլն 'ի նմա
անհնարին է: Որպէս' եթէ ոք առարկիցէ
մեզ ասելով, թէ զի՞ արդ հաւատայցեմք յա-
րութեան մեռելոց, որով հետև հանուրց ամէ-
զերաց ուսումնականք առ հասարակ' անհնարին-
թէ 'ի պակասութեան ունակութեան ոչ որի
ցի անդրադարձումն: Եւ թէ զինչ բաժան-
մանն հոգւոյն 'ի մարմնոյն անկարելի իմն իցէ,
զի 'նոյն մարմինն, որ էր յառաջագոյն, գոլով
փոխարկեցեալ 'ի հող. և վերլուծեցեալ 'ի տա-
րերս, վերստին' միաւորիցի ընդ հոգւոյ իւրոյ,
և յարուցեալ 'ի մեռելոց կենդանանայցէ: Պա-
տասխանեմք, թէ վ՟ս այնորիկ հաւատամք, զի
է ճշմարտութիւն իմն հաստատեցեալ 'ի մար-
գարէից, և հեռի 'յամենից երկբայութեց. Քան
զի Յոբ բարձրելոյն այ՟ մարգարէն 'ըն գլխոյն
19. 'ի թիւն 25. ասէ. Գիտեմ զի փրկիչն իմ
կենդանի է, և 'ըն յետնում աւուր 'ի հողոյ յառ-
նելոցեմ,

նելոցեմ, և վերստին՝ շրջապատեցայց մտօ֊
թով իմով, և 'ի մարմնի իմում տեսից զԱծ֊
իմ. Զոր տեսանելոց եմ ես ինքնին, և աչք
իմ հայելոց են, և ոչ այլոք. յարադրեցաւ
է յոյս այս, 'ի ծոցոյ իմում: Ապաքէն՝ եթէ
ոք ոչինչ անհաւատ, ոչ կարէ ուրանալ զյա֊
րութիւն մեռելոց, և ոչ իշխէ բացասել, թէ
ընաւք մեռեալք կենդանոյս այսորիկ յառ֊
նելոցք իւեն 'ի մեռելոց հանդերձ մարմնովք
իւրեանց:

Իսկ յաղագս արքայութեան երկնից մար֊
գարէքն Տէր միահաղոյն՝ 'ի գրեանս իւրե֊
անց զեկուցին մեզ 'ի կողմանէ այ ասելով.
թէ արքայութիւն երկնից իցէ կեան յաւիտե֊
նական, և թագաւորութի անվախճան, այս֊
ինքն՝ կեան թարց մահու, և թագաւորութի
անապական, և ամենից բարութեց համագու֊
մարումն, թարց ումէք թշուառութե, զոր
միտք մարդկան ոչէն բաւական առ 'ի իմա֊
նալ: Զայսմանէ խօսելով Սողոմոն իմաս֊
տունն 'ի գիրս իմաստութե, 'ի գլուխն 5.
'ի թիւն 16. ասէ. իսկ արդարքն 'ի յաւի֊
տեան կեցցեն, և առ Տր են վարձք նոցին,
և խորհուրդք նոցին առ բարձրագունեղն.
վասն՝ ընկալցին զարքայութին վայելչութե,
և զպսակն գեղոյ 'ի ձեռանէ տն; Եւ 'ի գլխ֊
ոյն.

տղ՛ն. 6. ՚ի թիւն 21. Նոյնոյ իմաստութե՛ն ասէ, Ըղձականութի իմաստութի՛ն. վերածէ ՚ի յարքայութի՛ն յաւիտենական. Արդ՝ եթէ տենչայք գահոյից և գաւազանաց ո՛վ թագաւորք ժողովրդեան, սիրեցէք զիմաստութի. զի ՚ի յաւիտեան թագաւորիցե՛ք: Եւ Եսայի մարգարէն ՚ըն գլխոյն 64 ՚ի թիւն 4. ՚ի յաւիտենից ո՛չ լուան, և ո՛չ ունկամբք ըմբռնեցին. և ակն ոչ ետես, Ած բաց ՚ի քէն, զոր նախապատրաստեցեր սպասողացն քեզ: Ապա ուրեմն գոյ արքայութի երկնից, զոր Տրք և արդարք, որք ՚ի կեանս իւրեանց բոլորով սրտիսիրեցին զԱծ, և պահեցին զպատուիրանս նորա վայելելոց են. Եւ որք փափաքեցան Ածային իմաստութեն, անձառելեօք և մշտընջենականօք բարեօք զմայլելոց են ՚ի նմա.

Իսկ յաղագս դժոխոյն, որ է մահ և ծառայութի. պատիժ, և չարչարանք. Նեղութի, և անձկութի, հուր և տարտմութի, և ա̃մ թշուառութի. խօսի Դաւիթ մարգարէն ՚ի սաղմոսին. 54. ՚ի թիւն 16. ընդէմ մեղաւորաց ասելով: Եկեսցէ մահ ՚ի վր նոցա, և կենդանոյն՝ իջցեն ՚ի դժոխս: Եւ ՚ի գիրս թւոց, ՚ըն գլխոյն. 16. ՚ի թիւն 31. ասի. Թէ իբրև դադարեցաւ մովսէս ՚ի խօսելոյ, իսկոյն՝ պատառեցաւ երկիր ՚ի ներքոյ ոտից նոցա. և

բացեալ զբերան իւր եկուլ զԴադան, եւ զԱբի-
րոն հանդերձ խորանօք իւրեանց, եւ ամենիւք
գոյիւք նոցին, եւ իջին կենդանւոյն՝ ՚ի դժոխս,
ծածկեցեալք ՚ի հողոյ, եւ կորեան ՚ի միջոյ բազ-
մութեան: Իսկ մարգարէն Եսայիաս խօսե-
լով զլիմարաց. ՚ըն գլխոյն. 5. ՚ի թիւն 13-
ասէ. Վասն որոյ գերի վարեցաւ ժողովուրդն
իմ, զի ոչ ընկալաւ զգիտութիւն, եւ բազմու-
թիւ նորա ծարաւու տոչորեցան. Վասն որոյ
լայնացոյց դժոխ զորովայն իւր, եւ եբաց զբերան
իւր անեզրաբար, եւ իջցեն հզօրք նորա, ժո-
ղովուրդ նորա, եւ վսեմք նորա, եւ փառաւորք
նորա ՚ի նա: Այս ուրեմն հաւատոյ իմն է. թէ
իցէ արքայութիւն եւ դժոխս աներկբայապէս: Եւ
թէ ՚ըն յաւուրն յետնում յառնելոց իցեն
մարդիք ՚ի միաւորելոյ հանդերձ նոյնովք մարմ-
նովք իւրեանց, զորս ունէին նախ յաշխար-
հի այսմիկ, եւ թէ գնալոց իցեն արդարքն յար-
քայութիւն երկնից, իսկ մեղաւորքն ՚ի դժոխս:
Զորս բնաւս հաստատեմք ՚ի բանից մար-
գարէիցն: Եւ թէպէտ միտք մեր ոչ են բաւա-
կանք առ ՚ի ըմբռնել զնոյնս, սակայն՝ հաւա-
տամք ՚ի հարկէ զի ՚ի նոցունց են վկայեցեալք.
քանզի որ ոք ոչ հաւատայ այսոցիկ ճշմար-
տութեց, ընդ անհաւատս դատապարտելի է
՚ի տանջանս յաւիտենականս:

՚Յասա-

'Ցաստացելոյս հետևի, թե կրկին իցէ եղանակ ճանաչելոյ զա՟ծ . Նախ՝ բնականաւ շաւղիւ 'ի ձեռն բաղդատութե՟ ստեղծականացս . Եւ երկրորդ՝ գերբնականաւ ճանապարհաւ 'ի ձեռն յայտնութե՟ և համաստուգութե՟ մարգարէիցն ;

## Գլուխ Հինկերորդ .

### Ցաղագս մարդկայնոյ բնութե՟ տ՟ն մերոյ յի՟ քի՟ .

Հետևելով վերոգրեցելոցն շաւղաց , զերկուս իրս ճանաչեմք և հաստատեմք 'ի ք՟ս յ՟ս ; Նախ զմարդկութի՟ Նորա , զի տ՟րն մեր յ՟ս ք՟ս է ճշմարիտ ևկատարեալ մարդ, բաղկացեալ 'ի մարմնոյ և 'ի հոգւոյ բանականէ ; Եւ երկրորդ զա՟ծութի՟ Նորա , զի տ՟րն մեր յ՟ս ք՟ս է ա՟ծ ևորդի ա՟յ , զոր թէպէտ բնականաւ իմացողութե՟ ոչ եմք բաւական 'ի ըմբռնել . Սակայն 'ի ներշնչմանէ և 'ի յայտնութե՟ հոգւոյն սրբոյ առ մարգարէս համահաւաստեմք : Եւ զնոյն հաւատամք և խոստովանիմք, և քարոզելով հռչակեմք ամենից մարդկան ;

Ասեմք ուրեմն յաղագս մարդկութե տն մերոյ յի քի, թէ իբր ծնիցեալ ՚ի սրբուհւոյ կուսէն Մարիամայ. ՚ի խանձարուրս պատեցեալ, ըստ նմանութե հասարակաց մանկանց կաթամբ դիեցուցեալ, և կերակրօք անուցեալ, և զարգացուցեալ, մինչև ՚յարբունս հասակին իւրոյ: Եւ թէ յղացումն Նորին ոչ իբր լեալ ՚ի սերմանէ առն, այլ ՚ի մաքրագունեղէ արենէ սրբուհւոյ կուսին Մարիամու, զոր յառաջ քան զծնունդն, և յետ ծննդեան կոյս ամբիծ նանխախտ խոստովանիմք: Գոլով ուրեմն տն մերոյ յի քի, մարդ կատարեալ, մարմնով, զգայարանօք, յատկութեք, և հոգւով իմացականաւ ամենևին նման մեզ, բաց ՚ի մեղանչականութե. տեսանէր, շօշափէր, քաղցէր, ծարաւէր, շրջէր, կենցաղավարէր ընդ մարդկան, և խոնջիւր: Նստէր, հանգչէր, խօսէր, քարոզէր, աղօթէր, տքնէր, պահէր. տրտմէր, և լայր: Ուստի և կալաւ ՚ի փարիսեցւոյն, կապեցաւ, չարչարեցաւ, պսակեցաւ փշով, տարածեցաւ ՚ի վր խաչին, ՚յոր և բևեռեցաւ, խոցաւ գեղարդեամբ կող Նորին, և հեղաւ արիւն Նորա առաջի բազմութե ակնարկողաց: Բաժանեցաւ սրբազնագունեղ հոգի Նորա ՚ի յամենագունեղէ մար-

ծնոյ իւրմէ , և մեռաւ . և այր ոմն Յովսէփ կոչեցեալ , եառ զնա և եդ ՚ի գերեզմանի : Եւ զկնի երից աւուրց յարեաւ ՚ի մեռելոց , և ել ՚ի գերեզմանէն , և զաւուրս քառասուն երևեցաւ յայտնապէս , և խօսեցաւ ընդ աշակերտաց , և ընդ բարեկամաց իւրոց : Իսկ յետ քառասնից աւուրց առաջի աչաց նոցա համբարձաւ ՚յերկինս .

՚Յայսմանէ ամենից հաւաստապէս գիտեմք և իմանաք , թէ տէ̃րն մեր յս̃ քս̃ իցէ մարդ ճշմարիտ , և ընդ ժամանակաւ ծնիցեալ . Եթէ մարդկութի̃ նորա ոչ իցէ նախ քան զՄարիամ կոյսն . այլև թէ զէութի̃ իւր մարդկային վերընկալեալ իցէ ՚ի ձեռն ստեղծագործութէ̃ հասարակաց արարչին :

Սակս որոյ զմարդկութի̃ նորա զբաղկացեալն ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ , ոչ ասեմք գոլ ած̃ ստդիտաբար նանմտապէս . Զի ոչ եմք այն քան անիմաստք , մինչ զի զարարածն արարիչ գոլ խոստովանիցիմք , և զստեղծուածն ստեղծօղ գոլ դաւանիցիմք , քան զի ստեղծօղն ՚ի հարկէ է մշտնջենաւոր և յաւիտենական , և էութի̃ նորա ոչունի զսկիզբն և ոչ զվախճան . Իսկ ստեղծուածն ՚ի հարկէ ոչէր երբեմն , և յոչնչէ ածաւ ՚ի գոյութի̃ : Ապաուրեմն անհնարին է ամենևին զի արարածն

արարիչ լինիցի, եհակադարձեալ, անկարելի է, զի արարիչն արարած լինիցի, եստեղծողն ստեղծուած.

Եւ առ՚ի համահաւաստութի՟ ճշմարտութե՟ս այսորիկ հաւաքաբանեմք. Նախ այսպէս. Էութի՟ն ա՟յ ոչունի զսկիզբն, իսկ մարմին եհոգի տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի, որքէն մարդկութի՟ նորա, ունին զսկիզբն ՚ի սրբուհւոյ կուսէն Մարիամայ, ապա ուրեմն ոչէն ա՟ծ.

Երկրորդ. Ամենայն ինչ որ է այժմ, և ոչէր երբեմն, ոչէ ա՟ծ. զի ա՟ծ միշտ է. իսկ մարմին և հոգի տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի եղեն ՚ի ժամանակի յառաջածեցեալք ՚ի յարգանդէ անարատի կուսին Մարիամայ, և ոչ էին երբեմն, ապա ուրեմն ոչէն ա՟ծ:

Երրորդ. Որինչ ՚ի միում ժամանակի էր, և՚ըն միւսում ոչէր, ոչէ ա՟ծ. եւոչ կարէ գոլ ա՟ծ. իսկ մարմին և հոգի տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի չէին ՚ըն միում ժամանակի. եւոչէին ՚ըն միւսում, այսինքն, նախ քան զՄարիամ կոյսն, ուրեմն ոչէն ա՟ծ, եւոչ կարէն գոլ ա՟ծ.

Չորրորդ. Ա՟ծ մարմնաւորիւ աչաւք ոչ տեսանի. իսկ մարմին տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի տեսանիւր աչաւք մարմնաւորիւ, ապա ուրեմն ոչէ ա՟ծ:

Հինգերորդ. Ա՟ծ ամենակարօղ ոչ ու-

տէ,

տէ, ոչ ըմպէ, ոչ աշխատի, ոչ վաստակի ոչ քաղցի, ոչ ծարաւի, ոչ տրտմի, ոչ ՚եր-կնչի, ոչ ըմբռնի, ոչ չարչարի, ոչ մեռանի, եւ ոչ թաղի. Ուստի զայսպիսիս ստորոգելին զնմանէ հայհոյութի՟ է ասել. իսկ մարմին տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի կրեաց զայսոսիկ ամենե-սեան, ուրեմն ոչէ ա՟ծ:

Վեցերորդ. Ա՟ծ ամենակարօղ ոչ առնէ եւ ոչ կարէ առնել զաղօթս, և զերկրպագութի՟ս, քան զի ոչոք է մեծագոյն քան զինքն, որում վայելեսցէն աղօթք և երկրպագութիւք. իսկ տ՟ն մեր յ՟ս ք՟ս հոգւով եւ մարմնով իւրով առնէր զաղօթս և զերկրպագութի՟ս, ուրեմն մար-մին և հոգի նորա ոչէն ա՟ծ.

Եօթներորդ ա՟յ ամենակարողի էութին է անեզր և անչափ. իսկ մարմին տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի եզերեցեալ գոյր և չափաւոր, ուրեմն ոչէ ա՟ծ.

Ութերորդ. Ա՟ծ էութե՟ն իւրով է ՚ըն բոլորում աշխարհի, և բոլոր էութի իւր ՚ըն իւրաքանչիւրս մասնկունս նորին. իսկ մար-մին տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի գոյր յայտնապէս պա-րագրեցեալ ՚ըն միում տեղւոջ, քանզի մինչ էր ՚յերուսաղէմ, ոչէր ՚ի պարսկաստանի, եւ ոչ ՚ի մեծն Հռոմ. եւ մինչ էր ՚ի վ՟ր խաչին, ոչէր ՚ի գերեզմանի: Եւ յորժամ բաժանեցաւ

հոգի տ̅ն մերոյ յի̅ քի̅ 'ի մարմնոյն իւրմէ և էջ 'ի դժոխս, ոչէր ընդ նմա մարմինն, ուրեմն հոգի և մարմին տ̅ն մերոյ յի̅ քի̅ ոչէն ա̅ծ.

Իններորդ. Որ 'յոչնչէ ածի 'ի գոյութի̅, անհնար է զի լինիցի ա̅ծ, իսկ մարմին տ̅ն մերոյ յի̅ քի̅ 'յոչնչէ ածաւ 'ի գոյութի̅, քանզի առաւ 'ի Մարիամայ, և նորայն 'ի յԱդամայ, և Ադամայն 'ի յերկրէ, իսկ երկիրն ստեղծաւ 'ի յոչնչէ, ապա ուրեմն անհնարին է զի մարմին տ̅ն մերոյ յի̅ քի̅ իցէ ա̅ծ.

Տասներորդ, ոչոք էութի̅ կարելի. է էութի̅ հարկաւոր. իսկ մարմին տ̅ն մերոյ յի̅ քի̅ է էութի̅ կարելի, և ա̅ծութի̅ն է էութի̅ հարկաւոր, ապա ուրեմն մարմին և հոգի տ̅ն մերոյ յի̅ քի̅ ոչէն ա̅ծ:

Զայսոսիկ և զայլս սոյն նմանս կարեմք առբերել բանս: բայց առ ինչ այսքան աշխատութի̅, զի մարմին և հոգի տ̅ն յի̅ էն արարածք, և գոլով ժամանակեայք ոչէն ա̅ծ: քանզի ո̅պ անհնարին է ա̅յ լինիլ արարած, և անեղին եղեալ, այսպէս անհնարին է արարածոյն և եղելոյ լինիլ ա̅ծ: Զայս ճշմարտութի̅ համայնք քրիստոնեայք, և նոյն իմաստասէրք առհասարակ, այլև գրեանք նոյն

ստոր-

ստորասէն և խոստովանին : Ունիմք ևս զվը
կայութիւս աւետարանին սրբոյ , որ զ՟տրն
մերյ՟ս ք՟ս ասէ մարդ և որդի մարդոյ : Եւառա-
քեալք նորին քարոզեն զնա, եղեալ ՚ի զաւակէ
Դաւթի ըստ մարմնոյ : Եկոչեն զնա առա-
քեալ . քահանայ , փոքր քան զհրեշտակս ,
ևկերպարանաւ ծառայի : Արդ եթէոք ընդի-
մանայցէ այսոցիկ , անբանէ , ևնուազագոյն
քան զանբան , զի զարարածն արարիչ առ-
նէ , ևզստեղծւածն ա՟ծ : Ուստի ևընդ անհա-
ւատս և ընդ կռապաշտս համարեսցի . որք ոչ
ճանաչեն զա՟ծ , ևզկեանս իւրեանց ՚ըն հայ-
հոյանս , և՚ ըն մեղանս , կորուսանեն :

## Գլուխ Վեցերորդ .

### Յաղագս Ա՟ծայնոյ բնութե՟ տ՟ն մերոյ յի՟ քի՟ .

Յետ խօսելոյ զմարդկութե՟
տ՟ն մերոյ յի՟ քի՟ . Ճառեսցուք
սակաւինչ եզա՟ծութե՟ նո-
րին , քանզի զտ՟րն մեր յ՟ս
ք՟ս ոչ սոսկ մարդ , եւ ոչ սոսկ
ա՟ծ, այլ ա՟ծ եւ մարդ հաւա-
տամք եւ խոստովանիմք . եւ զայս ճշմարտութի՟
համահաւասատեմք ՚ի բանից սրբոց մարգա-
րէից ; Եւ նախ վկայութե՟ն Դաւթի որ ՚ըն
սաղմոսին . 2. ՚ի թիւն 7. ասէ , Տ՟ր ասաց ցիս
որդի իմես դու , ես այսօր ծնայ զքեզ ։ Եւ
՚ըն սաղմոսին . 109. ՚ի թիւն 3. ասէ . Ընդ
քեզ է սկիզբն ՚յաւուր զօրութե՟ քոյ , ՚ի պայ-
ծառութի՟ս սրբոց , ՚յարգանդէ յառաջ քան
զարուսեակ ծնայ զքեզ ։ ՚Ըն սաղմոսին. 88. ՚ի
թիւն 27. ասէ, ՚ի բերանոյ Հօր ա՟յ ՚ի դէմս քի՟.
Նա կարդասցէ առիս , հայր իմ ես դու,
ա՟ծ իմ, եւ վերընդունող կեցութե՟ իմոյ ։ Արդ
քանզի հայրն ծնող , եւ որդին ՚ի յարգանդէ
նորին ծնիցեալ, են ըստ նոյնոյ բնութե՟, ապա
ուրեմն ք՟ս որ է ծնիցեալ ՚յա՟յ հօրէ , է որ-
դի ա՟յ , եւ ա՟ծ ։

Դար-

Դարձեալ նոյն Դաւիթ 'ըն սաղմոսին 44. 'իթիւն 2. խօսելով յաղագս քի, կոչէ զնա ած եւմարդ, և ասէ, Բղխեաց սիրտ իմ զբան բարի, ասեմ ես զգործս իմ Թագաւորի: Լեզու իմ գրիչ դպրի, արագապէս գրողի: Գեղեցիկ կերպարանաւ, գերագոյն քան զորդիս մարդկան: Սփռեցաւ շնորհ 'ի շրթունս քոյս, վասնայնորիկ օրհնեաց զքեզ ած 'ի յաւիտեան: Ած զսուր քո 'ի վր ազդեր քոյ հզօրագունեղ: Տեսլեամբ քով եգեղեցկութբ քով դիտեա. աջողակի դիմեա, եթագաւորեա: վն ճշմարտութե, հեզութե, եարդարութե, եառաջնորդեսցէ քեզ սքանչելապէս աջ քո: Նետք քոյք սրեցեալք են, եժողովուրդք 'ի ներքոյ քոյ անկցին, 'ի սիրտս թշնամեաց Թագաւորի: Աթոռ քո ած 'ի յաւիտեան յաւիտենի, գաւազան ուղղութե, գաւազան արքայութե քոյ: Սիրեցեր զարդարութի, եատեցեր զանիրաւութի: վն այն որիկ էօծ զքեզ ած, ած քո ձիթով ուրախութե առաւել քան զկիցակակիցս քոյս:

Այսորքիկ ամենեքեան ասին վն միոյ և նորայնոյ անձին քի, այսինքն վն օծեցելոյն. որոյ երկու տունքն առաջինք են առաջաբանութիք: Եւ 'ի տանէն այնմանէ որ ասէ. Գեղեցիկ կերպարանաւ, մինչև 'ցտունն այն,

որ ասէ. Աթոռ քո ա՟ծ, խօսի Մարգարէն զք՟նէ ըստ որում է մարդ, քան զի գեղեցիկ կերպարանաւն, ած զսուր քո 'ի վ՟ր ազդեր քո, հայլն, մարդոյ միայնում վայելէն :

Իսկ 'ի տասնէն այնմանէ որ ասէ, Աթոռ քո ա՟ծ, մինչև 'յաւիտեանն, խօսի Մարգարէն զք՟նէ ըստ որում է ա՟ծ, քան զի ասէ. Ով ա՟ծ, աթոռ քո 'ի յաւիտեան յաւիտենի, գաւազան ուղղութ՟ե, գաւազան արքայութ՟ն քոյ. Սիրեցեր զարդարութի՟ և ատեցեր զանիրաւութի՟, վ՟այնորիկ ո՛վ ա՟ծ, եօծ զքեզ ա՟ծ քո ձիթով, ոչ հասարակաւ, ըստ որում եղէն այլք օծեցեալք, այլ ձիթով ուրախութ՟ե, որ գեր'ի վերոյ է քան զօծութի՟ն այլոց, այսինքն, ձիթով ա՟ծութ՟ե իւրոյ : քանզի եօծ զքեզ ուրախութ՟ե՟ն իւրով էութենականաւ : Ուրեմն այսուքիւք ամենեքումբ բացայայտէ մեզ Մարգարէն, թէ տ՟րն մեր յ՟ս ք՟ս ոչ էր միայն մարդ, այլ և ա՟ծ, այսինքն, մի և նոյն անձն, 'յոր ա՟ծութի՟ն ընդ մարդկութ՟ե գոյ միաւորեցեալ : Եւ զի ք՟ս ըստ մարդկայնոյ բնութ՟են մարդ կոչի, սակս որոյ ասէ Դաւիթ. Գեղեցիկ կերպարանաւ առաւել քան զորդիս մարդկան : Իսկ ըստ ա՟ծայնոյ բնութ՟են ա՟ծ կոչի, վասն որոյ ասէ նոյն Դաւիթ. Աթոռ քո ա՟ծ 'ի յաւիտեան յաւիտենի : վ՟ս այնորիկ

ով

ա՛լ Ա՟ծ, եւծ զքեզ Ա՟ծ քո ձիթով ուրախութե՟ն : Եւ հետեւի ՚յասացելոյն Մարգարէին, թէ իւր Ա՟ծ օծեցեալ , եւ Ա՟ծ օծանող . Ա՟ծ օծանող է հայրն Ա՟ծ , եւ Ա՟ծ օծեցեալն է որդին նորա ։ իսկ ձէթն ուրախութե՟ն է Ա՟ծութիւն , որով օծաւ մարդկութի՟ն Տ՟ն Յ՟ի : Քանզի բանն Ա՟ծ որ է յաւիտենական եւ համագոյակից որդի հօր Ա՟յ , հաճեցեալ ՚ի ժամանակի մարմնացաւ ՚ի սրբուհւոյ կուսէն Մարիամայ , եւ առեալ զբնութի մարդկային, այսինքն զհոգի եւ զմարմին, միաւորեաց ընդ Ա՟ծութե՟ն ՚յանձն իւր: Եւ ՚ի ձեռն միաւորութե՟ն այնորիկ, այն որ նախ Ա՟ծ էր , զկնի ժամանակաց մարդ եղև, թարց իմիք փոփոխութե՟ն , և այլայլութե՟ն, ոչ ՚ի կողմանէ Ա՟ծութե՟ն , և ոչ ՚ի կողմանէ առեցելոյ մարդկութե՟ն . Ուստի այն որ էր յառաջագոյն, այսինքն Ա՟ծութիւն, մնաց նոյնպէս , եւ այն , որ ոչ էրն , այսինքն զմարդկութիւն էառ ։ Եւ այսպիսի առելութի , և միաւորութի մարդկային բնութե՟ն ընդ Ա՟ծութե՟ն , օծումն կոչեմք . զմարդկութիւն ասեմք օծեցեալ , և զԱ՟ծութիւն օծանող , կամ ձէթ ուրախութե՟ն . Որեմն Ք՟ս զորով մի անձն , օծեցեալ եղև ըստ մարդկութե՟ն ՚յԱ՟ծութե՟ն իւրմէ: Սակս որոյ Ք՟ս Ա՟ծ է յաւիտենականապէս Ա՟ծութե՟ն իւրով, եւ մարդ է

յաւ-

ժամանակապէս մարդկութե՟ն իւրով . Որ և ծնեցեալ ասի յա՟յ հօրէ ձիթով ուրախութե՟ , այսինքն ա՟ծութե՟ն , գերագունեղապէս առաւել քան զկիցակակիցս իւրս , զծնեցեալս շնորհօքն ա՟յ . քանզի ծնաւ ք՟ս ա՟ծութե՟ն, որ է աղբիւր ամենից շնորհաց , ևնոյն ինքն է շնորհ ըստ էութե՟ : Ասեմք ուրեմն ըստ մարգարէին Դաւթի , թէ ք՟ս իցէ մարդ , գեղեցիկ կերպարանաւ , առաւել քան զորդիս մարդկան: Եւ թէ իցէ ա՟ծ, զի աթոռ նորա է'ի յաւիտեան յաւիտենի . ևէօծ զնա ա՟ծ ձիթով ուրախութե՟ .

Դարձեալ նոյն Դաւիթ մարգարէն բացայայտելով զա՟ծութի՟ն ք՟ի , կոչէ զնա ինքեան տ՟ր , 'ի սաղմոսին . 109. 'ի թիւն 1. ևասէ . Ասաց տ՟ր 'ց տ՟ր իմ 'նիստ ընդ աջմէ իմէ, մինչև եդից զթշնամիս քոյս պատուանդան ոտից քոց : Քանզի 'նոյնէր թէ ասէր, Ասաց ա՟ծ 'ց ք՟ս ,'նիստ ընդ աջմէ իմէ : Արդ եթէ ք՟ս ունի զնոյն անուն , ևզնոյն աթոռ ընդ ա՟յ . ուրեմն է ա՟ծ , և հաւասար հօր : Այլև գոլով ք՟ի ըստ մարմնոյն որդի Դաւթի , ոչ յարմարապէս կոչիւր 'ինմանէ տ՟ր, եթէ ոչ ըստ ա՟ծութե՟ն , զի որդին ոչ կարէ առասիլ տ՟ր հօր իւրոյ : Զայս ճշմարտութի՟ յառաջարկեաց ք՟ս հրէից ասելով . Եթէ Դաւիթ զք՟ս

տր կոչէ ինքեան, զի մրդ որդի նր իցէ. իսկ նոքա վն ոչ խոստովանելոյ զածութին քի, ոչինչ ետուն պատասխանի. Բայց մեք ըստ Մարգարէին նկատելով զմարդկութին քի, հաստատելով զածութի նորա, դաւանիմք զնա որդի Դաւթի ըստ մարդկութեն, եւնոյնն տր Դաւթի ըստ ածութեն.

Դարձեալ նոյն Դաւիթ մարգարէն խօսելով զքէ ՚ի սաղմոսին. 71. ՚ի թիւն 17. ասէ. Եղիցի անուն նորա օրհնեցեալ ՚ի յաւիտեանս, յառաջ քան զարեւ յարամնայ անուն նորա ։ Եւ օրհնեսցին ՚ի նմա ամք ազգք երկրի ։ Արդ՝ եթէ յառաջ քան զարեւ է անունն քի, յորմէ ընդունելոցք են զօրհնութի համայնք ցեղք երկրի. Ուրեմն է ած ։ Քանզի այ միայնում վայելէ լինելն նախ քան զարեւ, այսինքն, ունելն զանունն եզէութի յառաջ քան զհամօրէն ստեղծականս, որոյ էութին անուամբն ճանաչի.

Երկրորդ, վկայութիւն Եսայեայ մարգարէի, որ ՚ի գլխոյն 7. ՚ի թիւն 14 խօսելով զքէ վերաձայնէ զնա էմմանուէլ ասէ. Ահա կոյս յղասցի, եւ ծնցի զորդի, եւ կոչեսցի անուն նորա էմմանուէլ. Արդ էմմանուէլն ըստ բարբառոյն եբրայականի, թարգմանի,

ընդ

ընդ մեզ ա̅ծ, ապա ուրեմն ք̅ս ա̅ծ է.

Դարձեալ նոյն Եսայիաս մարգարէն 'ի գլխոյն. 9. 'ի թիւն 6. ասէ. Քանզի մանուկ ծնաւ մեզ. որդի տուաւ մեզ. եւ եղեւ իշխանութիւն 'ի վերայ ուսոց իւրոց, եւ կոչեսցի անուն նորա, սքանչելի, խորհրդական, ա̅ծ, հզօր, հայր հանդերձելոց յաւիտենի, իշխան խաղաղութե̅: Բազմասցի իշխանութի̅ նորա, եւ խաղաղութե̅ ոչ եղիցի վախճան; 'ի վե̅ր գահոյին Դաւթի, եւ 'ի վե̅ր արքայութե̅ նորա նստցի, զի համահաստիցէ զնա, եւ զօրացուցանիցէ. դատողութե̅ եւ արդարութե̅, 'յայսմհետէ եւ մինչեւ 'յաւէժ աւիտեան: Արդ՝ եթէ ք̅ս վերածայնի ա̅ծ, հայր հանդերձելոց յաւիտենին, եւ իշխան խաղաղութե̅, ուրեմն է ա̅ծ: Քանզի ա̅յ միայնում ասի, հայր յաւիտենից, որ է ստեղծօղ յաւիտենից: Եւ նա միայն է իշխան խաղաղութե̅, որ ըստ էութե̅ն իւրում, է խաղաղութի̅:

Երրորդ, Վկայութի̅ն Բարուքայ մարգարէի, որ 'ի գլխոյն. 3. 'ի թիւն 36. ասէ. Սա է ա̅ծ մեր, եւ ոչ համարեսցի այլոք ընդ նմա, Սա ստեղծ զա̅մ ճանապարհ խրատու, Եւ աւանդեաց զնա Յակոբայ մանկանն իւրում, եւ Իսրայէլի սիրեցելոյ իւրում: Յետ այսորիկ 'ի յերկիրս երեւեցաւ, եւ ընդ մարդկան

կեն-

կենցաղավարեցաւ : Արդ տ̃ծ գոլով անտե-սանելի , ոչ կարէ երևիլ 'ի յերկրի , ուրեմն խօսի մարգարէն զք̃նէ , որ մարմնով իւրով երևեցաւ 'ի յերկրի , և կենցաղավարեցաւ ընդ մարդկան , ապա ուրեմն ք̃ն տ̃ծ է ճշմարտա-պէս :

Չորրորդ վկայութի՛ն Ամբակումայ մար-գարէին, որ 'ըն գլխոյն . 3. 'ի թիւն 18. առէ Այլ ես 'ի տ̃ր խնդացից , ցնծացայց յա̃ծ Յ̃Ս իմ : Արդ ահա պարզապէս մարգարէն զ Յ̃Ս տ̃ծ վերաձայնէ . ապա ուրեմն է տ̃ծ :

Հինգերորդ հաւաքականութե̃ աստուա-ծոյն մարգարէից , որք զտ̃ծ տ̃ր վերակոչէն , քան զի Երեմիա մարգարէն 'ըն գլխոյն . 33. 'ի թիւն 2. առէ . Զայսոսիկ ասէ տ̃ր , որ առնելոց է , և կերպարանելոց է զնա , և պատ-րաստելոց է , Տ̃ր է անուն նորա :

Եւ Եսայեա 'ըն գլխոյն . 42. 'ի թիւն 8. առէ . Ես տ̃ր , այս է անուն իմ : Դաւիթ մարգարէն 'ըն սաղմոսին. 67. 'ի թիւն 5. առէ. Երգեցէք ա̃յ , և զսաղմոս ասացէք անուանն նորա , զճանապարհ արարէք այնմիկ , որ ելանէ 'ի վ̃ր արևմտից , Տ̃ր անուն ն̃ր : Եւ 'ըն սաղմոսին. 82. 'ի թիւն 19. առէ . Եւ ծա-նիցեն զի անուն քո Տ̃ր է , դու միայն բարձ-րագունեղ յա̃մենայն երկրի: Իսկ զնոյն անունն

տ՟ր առընձեռ է նոյն մարգարէն Դաւիթ ք՟ի, ասելով, Ասաց տ՟ր ց՟տր իմ, այսինքն ասաց. Ա՟ծ ց՟ք՟ս. ապա ուրեմն ք՟ս ա՟ծ է, որդի ա՟յ. ևյաւիտենականապէս ծնեալ ՚ի յէութե՟ հօր ա՟յ. Որոյ անունն յառաջ քան զարև յարամնայ, ևէմմանուէլ վերաձայնի, այսինքն, ընդ մեզ ա՟ծ. Զի կերպարանաւ մարդկայնով երևեցաւ ՚ի յերկրի, ևընդ մարդկան կենցաղավարեցաւ :

Յայսցանէ բնաւից վերոգեցելոց հետևի, Թէ ք՟ս ոչ միայն մարդ իցէ, այլև ա՟ծ : մարդ է ըստ մարդկայնոյ բնութե՟ն, և ա՟ծ է ըստ ա՟ծայնոյ բնութե՟ն : կրասեր է քան զհայր ըստ մարդկութե՟ իւրում, ևհաւասար է նմին ըստ ա՟ծութե՟ իւրում:

Վասնորոյ առընձեռեմք նմա զնաւս առընձեռուածս մարդկայինս բաց ՚ի մեղաց, ըստ որում է մարդ. ևառընձեռեմք նոյնում զբնաւս առընձեռուածս ա՟ծայինս, ըստ որում է ա՟ծ: քան զի զերկուս բնութիւս ՚ի մի ք՟ս խոստովանիմք : այսինքն զա՟ծայինն, և զմարդկայինն : զա՟ծայինն, զի ք՟ս յաւիտենականապէս է որդի հօր ա՟յ: ևզմարդկայինն, զի ք՟ս ժամանակապէս է որդի մարդոյ:

## Գլուխ Եօթներորդ .

Յաղագս միոյ բնութե նորին անձանց ամենասուրբ երրորդութեն , բնականապէս տրամաբնթանալով , ի ձեռն բաղդատութե ստեղծականացս :

Ի յէութեանց ստեղծականաց մինչև ցէութիւն այ , զընթացս մտաց մերոց վերասլացուցանելով , ի մէջ այլոց առընձեռուածոց ածայնոց , զերիս գլխաւորսն նախնագոյնս գոլ նշմարեմք . այսինքն , զկարողութի , զիմաստութի , ըզսէր :

Քանզի ած կարող է , և կարողութի . իմաստուն է և իմաստութի , սիրող է և սէր : Նա և էութիւն իւրով կարող է , իմաստուն է , և սիրող : Բայց առընձեռուածքս այսոքիկ ունին յինքեանս զբարեյարմար ինն կարգաւորութի , զի առաջինն է սկիզբն երկրորդին , իսկ երկրորդն ոչ է սկիզբն առաջնոյն , այսինքն , կարողութիւն է սկիզբն իմաստութե . բայց իմաստութիւն ոչ է սկիզբն կարողութե : Քանզի թէ գոյ իմաստութի , ապա գոյ կարողութի : իսկ եթէ ոչ գոյ կարողութի , ոչ գոյ իմաստութի :

տութի : Արդ գոյ իմաստութի, ուրեմն գոյ եւկարողութի : Բայց ոչ հակադարձեալ. զի ոչ բարեպէս ասի, թէ գոյ կարողութի, ուրեմն գոյ իմաստութի : քանզի կարողութի գոլոյն իմաստութի, նախ է քան զգոլն նորոյն իմաստութե : ապա ուրեմն իմաստութին ոչէ սկիզբն կարողութե. այլ կարողութինէ սկիզբն իմաստութե : վն զի իմաստութին իկարողութե յառաջագայի, իսկ կարողութին ոչ յառաջագայի ի յիմաստութէ :

Նմանապէս ասեմք. թէ Սէրն ի կարողութե եւ ի յիմաստութէ յառաջագայի, իսկ կարողութին եւիմաստութին ոչ յառաջագային իսիրոյ : վզի եթէ գոյ սէրն, գոյ եւկարողութի եւիմաստութի. զի սէրն ոչ լինի թարց գիտութե եւկարողութե. Բայց եթէ գոյ կարողութին եւգիտութին, ոչ ի հարկէ գոյ Սէրն :

Ուստի եթէ հարցանիցէ ոք, թէ յումէ յառաջագայիցի կարողութին, պատասխանեմք. թէ յոչումեքէ, քանզի ոչ ունի զսկիզբն. վնորոյ եւէ նախկին իմէջ երից այսոցիկ առընձեռուածոց : Եւ եթէ խնդրիցէ ոք, թէ յումէ յառաջագայիցի իմաստութին, ասեմք թէ իկարողութէ, քանզի կարողութին է սկիզբն իմաստութե, վնորոյ եւիմաստութին է երկ-

րորդ.

րորդ 'ի մէջ երից այսոցիկ առընձեռուածոց : Այսուստ մինչ 'ի միտ ածեմք զիմաստութիւն, զերկուս իբր գոլ նշմարեմք 'ի նմա , այսինքն , զճանաչումն , և զկարողութիւն : Զսոյն առեմք , և յաղագս սիրոյ , քանզի եթէ հարցանիցէ ոք թէ յումէ յառաջագայի սէրն , պատասխանեմք 'ի կարողութենէ և 'ի գիտութենէ , զի մինչ 'ի միտ ածեմք զսէրն , զերիս գոլ նշմարեմք 'ի նմա . այսինքն , զսիրեցումն , զկարողութիւն, և զճանաչումն , վ̃ որոյ և սէրն է երրորդ . 'ի մէջ այսոցիկ երից առընձեռուածոց :

Արդ առ 'ի հաւաստութիւն այսորիկ , ընթանալով մտօք 'ի սիրոյն առ կարողութիւն առեմք, թէ մ̃դ էակ բնականաբար սիրէ զինքն , ըստ որում ուսուցանէ մեզ ներհմտութիւն , քանզի տեսանեմք զամենայն կենդանիս , զգազանս և զթռչունս , և զայլս էակս , որք բնականաբար հետևին բարեկամաց , և օգտակարաց բնութեան իւրեանց , և մարանչին ընդէմ թշնամեաց և վնասակարաց իւրեանց: Իսկ եթէ սիրեն զինքեանս , ուրեմն և ճանաչեն , զի եթէ ոչ ճանաչէին զինքեանս , ոչ սիրէին , Եւ զայս հաւաստեն իմաստասէրք առհասարակ ասելով , թէ ոչինչ է սիրեցեալ , որ ոչ իցէ 'նախ ճանաչեցեալ:

Բայց առընձեռուածք այսորիկ , այսինքն,

կարողութիւն , իմաստութիւն , եւ այլն զանազանին 'ի միմեանց զանազանութբ առընչականաւ . նկատելով 'ի յառաջագայութիւն զոր ունին 'ի միմեանց : Վասն զի որ յառաջածեցեալն է 'ի սոսա , կամ առբերեցեալն , ունի զհայեցուած ինչ առ յառաջածօղն կամ առ առբերօղն իբրեւ առ համառընչականն իւր . Նմանապէս եւ յառաջածօղն է կամ առբերօղն . ունի զհայեցուած առ յառաջածեցեալն , կամ առ առբերեցեալն , որ որդի ունի զհայեցուած առ հայր , եւ հայր առ որդի . եւ ըստ այսմ են համառընչականք եւ հետեւապէս հակակայք միմեանց :

Իսկ որք առընչութբ հակակայքն միմեանց զանազանին 'ի միմեանց : Այսպ ուրեմն կարողութիւն , իմաստութիւն , եւ այլն , նկատելով 'ի յառաջագայութիւն զոր ունին 'ի միմեանց , զանազանին 'ի միմեանց , զանազանութբ առընչականաւ : Մեծագոյն յայտ է . զի ըստ իմաստասիրաց մինն 'ի հակակայիցն է առընչութիւն . փոքրագոյն հաւաստի է , զի ուր ոչինչ հակակայութի , անդ ոչինչ զանազանութի . եւ հակադարձեալ , ուր հակակայութի , անդ եւ զանազանութի . Ուրեմն որք առընչութբ հակակայքն միմեանց , զանազանին 'ի միմեանց :

Աստուա

Աստուստ կարողութիւն որ է առբերող , եւ իմաստութիւն, որ է առբերեցեալ են առընչականք . եւ իբր առընչականք , են հակակայք միմեանց , եւ ըստ որում հակակայք , են զանազանք : Նմանապէս եւ սէրն որ է առբերեցեալ , եւ կարողութիւն եւ ճանաչումն որք են առբերողք , զանազանին 'ի միմեանց . Զի որք առընչաբար հակակային , առընչաբար եւ զանազանին :

Բայց գիտելի է նախ, զի երեք առընչեալածքս այսոքիկ, այսինքն, կարողութիւն, իմաստութիւն եւ սէրն, թէպէտ նկատելով 'ի վերոգրեցեալն յառաջագայութի զանազանիցին 'ի միմեանց, սակայն՝ ոչ վն այնորիկ անջատին 'ի միմեանց . Քան զի իմաստութիւն առբերեցեալ 'ի կարողութէ , ոչէ արտաքոյ կարողութե . զի եթէ լինէր արտաքոյ կարողութե , բաժանիւր 'ի նմանէ , եւ առանձնանայր 'յայլիմն էութի : ըստ որում տեսանեմք 'ի յառեղծուածս , Որպէս որդի առբերեցեալ 'ի հօրէ է արտաքոյ հօր , եւ անջատեցեալ 'ի նմանէ . եւ առանձնացեալ 'յայլիմն էութի : Իսկ իմաստութիւն ոչէ այսպէս , զի 'յորմէ եւ յառաջագայի նա,'ի նմին եւ յարամնայ : ոպ բանն 'ի մտաց մերոց առբերեցեալ , ոչէ արտաքոյ մտաց մերոց , այլ 'ի միտս : Նոյնպէս եւ սէրն առբե-

րեցեալ 'ի խորհողէն առ սիրեցեալն , ո՛չէ ար-տաքոյ սիրողին , այլ 'ի մէջ սիրողին :

Դարձեալ իմաստութի՛ն յառաջագայեցեալ , է էակ ինչ , ուրեմն ունի 'յինքեան զկարողութի գոլոյ , ապա ուրեմն յառաջագայելով 'ի կարողութէ ոչ անջատի 'ի նմանէ : Նախնթացն հաստատի է , զի ոչի՛նչն ո՛չ կարէ յառաջագայել : Հետեւումն յայտէ , զի որի՛նչ ոչունի 'յինքեան զկարողութի գոլոյ ոչինչէ , ուրեմն ընդհէմն սորին , որինչ էակ է , ունի 'յինքեան զկարողութի գոլոյ . ապա ուրեմն իմաստութի՛ն յառաջագայեցեալ 'ի կարողութէ ո՛չ անջատի 'ի նմանէ :

Երկրորդ , իմաստութի՛ն յառաջագայեցեալ 'ի կարողութէ եթէ անջատիւր 'ի նմանէ , ունէր զայլի՛մն էութի . նոյնժամ խնդրիւր , թէ ունէր արդեօք եւ 'յինքեան զկարողութի գոլոյ , թէ ոչ : Արդ եթէ ո՛չունէր , ոչինչ էր . քանզի որինչ ո՛չ կարէ գոլ , ոչինչ է . բայց տեսանեմք հաստատեաւ , զի ունի տակաւին զկարողութի գոլոյ . ըստ այնմ որ էակ է , ապա ուրեմն իմաստութի՛ն յառաջագայեցեալ 'ի կարողութէ ո՛չ անջատի 'ի նըմանէ .

Երրորդ , սէ՛րն բղխեցեալ 'ի կարողութէ է էակ իմն եւ գոյ , ուրեմն ունի 'յինքեան զկարո-

ղութի

ղութի գոլոյ , ապա ուրեմն յառաջագայելով ՚ի նմանէ ոչ անջատի .

Չորրորդ . սէրն վերաբերեցեալ առ սիրեցեալն ունի ՚յինքեան զճանաչումն , զի ոչինչ է , որ կարիցէ սիրիլ . եթէ ոչ ՚նախ ճանաչիցի , ապա ուրեմն յառաջագայելով ՚ի գիտութենէ , ոչ անջատի ՚ի նմանէ :

Հինգերորդ , եթէ սէրն բղխեցեալ ՚ի կարողութենէ և ՚յիմաստութենէ , անջատիւր ՚ի նոցունց և ստանայր զայլ իմն էութի , յայնժամ ոչ ունէր ՚յինքեան զկարողութի գոլոյ . և հետևապէս ՚յոչինչ փոխարկիւր , քանզի ոպ ասացաք , որ ոչունի ՚յինքեան զկարողութի գոլոյ , ոչինչ է . Նաև՝ եթէ էութին այն սիրեցեալ գոյր անճանաչելի , ոչ սիրիւր , զի ոչինչ է , որ կարիցէ սիրիլ . եթէ ոչ ՚նախ ճանաչիցի . Եւ այսպէս սէրն բղխեցեալ ՚ի կարողութենէ և ՚յիմաստութենէ , եթէ անջատիւր ՚ի նոցունց ՚յոչինչ փոխարկիւր , վն ոչ ունելոյ ՚յինքեան զկարողութի գոլոյ , և զճանաչումն սիրեցելոյն , Բայց այս անկարելի է , ուրեմն սէրն յառաջագայեցեալ ՚ի նոցունց ոչ անջատի :

Դարձեալ , եթէ իմաստութին և սէրն յառաջագայեցեալք ՚ի կարողութենէ անջատէին ՚ի նմանէ . կարողութին ՚յոչինչ փո-

խայր-

խարկիւր, վ՟ ոչ ունելոյ 'յինքեան զսէր, եւ զ-
ճանաչումն, քան զի ո՟վ տայցուք, ա՟մ էակ
բնականաբար սիրէ զինքն, եւ հետեւապէս ճա-
նաչէ զինքն : Այս ուրեմն ըստ այսմ, եւ ըստ
վերոգրեցելոյն առարկութեց, երեք այսպիսի
առընձեռուածք, այսինքն, կարողութիւն,
իմաստութիւն, եւ սէրն, 'յոչինչ փոխարկեսցին :
Այլ այս է անհնարին եւ հակասական, ուրեմն
առընձեռուածքս այսոքիկ յառաջագայելով
'ի միմեանց ոչ անջատին : Աստուած եթէ
իմաստութիւն յառաջագայի 'ի կարողութե՟,
բայց ոչ արտեղանէ, եւ ոչ եւս անջատի 'ի նմա
նէ . Նմանապէս եւ սէրն եթէ յառաջագայի
'ի կարողութե՟ եւ յիմաստութե՟, բայց ոչ ար-
տեղանէ, եւ ոչ եւս անջատի 'ի նոցունց, ուրեմն
ունին զմի եւ զնոյն էութի՟ եւ զգոյութի՟ : Բայց
նկատելով 'ի յառաջագայութիւն . գոն զա-
նազանեցեալք զանազանութե՟ առընչակա-
նաւ : Մի են բացարձակապէս, եւ մի էու-
թի՟ եզական . այլ բազումք են առնչապէս
նկատելով յառաջագայութիւն :

Արդ՝ ըստ այսմ խորհելով զէութե՟ն ա՟յ
բարձրելոյն, տեսանեմք զվերոգրեցեալս այսո-
քիկ գերունակաբար 'ն ա՟յն պատկանիլ . Քան
զի իմաստութի 'նորին յաւիտենականապէս եւ
անեզրաբար յառաջագայի 'ի կարողութե՟ իւր-
մէ

մի, նոյն ՚ի կարողութե և ՚յիմաստութե: Ուրեմն ՚ի՛նարկէ գտանին ՚ի նմա յառաջագոյութիւքն այնոքիկ վերոդրեցեալք:

Եւ զի ուրանոր են յառաջագայութիւքն այնոքիկ, անդ են և առընչութիւք և հակադրութիւք. Ուստի հետևապէս ՚ի՛ն յաստուածում գտանին առբերող և առբերեցեալ, յառաջածող և յառաջածեցեալ: Եւ զի երեք առընձնաւորութիւքն այնոքիկ՝ այսինքն կարողութիւն, իմաստութիւն, և սէրն, յառաջագայելով ՚ի միմեանց ոչ զատելանեն, և ոչ անջատին ՚ի միմեանց, այլ այն են մի էութի, և մի գոյութի, Ուստի էակն, որ է ամենակարող, ամենիմաստ, և ամենագութ, մի էութի. և մի բնութի, և աղբիւր ամենից էութեց, իմաստութեց, և գթութեց վերանշամարեմք:

Խոստովանիմք ուրեմն զած մի, եզակութի՛ն ՚ի կարողութե, ՚յիմաստութե և ՚ի սիրոյ անեզրաբար յարակայացեալ: Վա զի որինչ է, իւրով էութե՛ն է, այլ այսմ մի գոլ իմանի, այսինքն, մի ած, մի անեզր, մի յաւիտենական, մի անհուն, մի անեղ, մի ամենակարող. մի ամենիմաստ, և մի ամենագութ: Բայց սակայն տեսանեմք զիմաստութիւն եզակին գոլ անանջատ ՚յէութե՛ նորա,

իսկ

իսկ զառաջադայութիւն , զառնչութիւն , և զհակակայութիւն առբերեցելոյն և առբերողին գոլ զանազանս: Վ̅ն որոյ զմ̅ծ միակ, յաղագս միոյ և անբաժանելւոյ էութեան դաւանիմք , ներրեակ , յաղագս առնչութեացն , Եւ բայց 'յառնչութեացն զոչինչ զանազանութի գտանեմք 'ի նմա :

## Գլուխ Ութերորդ .

### Յաղագս Միոյ էութեան ներհակ անձանց ամենասրբոյ Երրորդութեան, գերբնապէս, 'ի ձեռն վկայութեանց սրբոց Մարգարէիցն :

Մինչև ցարդ խօսեցաք զէութե հարկաւորի էակին, բաղդատելով ստեղծականացս ըղնոյնն, զոր իմաստասէրք հետազօտելով իմացան , նմեզ աւանդեցին : իսկ այժմ ամբառնալով զաչս մտաց մերոց 'ի վեր քան զարտափայլումն արարածոցս , այլ իմն ասեմք և հաւատամք , որ թեպէտ այլազնեաց մտաց դժուարին թուի , սակայն մեզ Քրիստոնեայքս իմաստասիրապէս բացայայ-

տեմք զնոյնն , և պայծառացուցանեմք իբրև զարեգակն : Ոչ ՚ի ձեռն մակամտածութեանց մերոյ , այլ ՚ի ձեռն յայտնութեան ամենակարողին այ , որ խօսելով ընդ ծառայս իւր Մարգարէս , ազդեաց նոցա հոգւովն սրբով, և նոքա գրեցելովք իւրեանց սրբազանիւք մեզ աւանդեցին : իսկ մեք ընկալեալք ՚ի նոցունց հաւատացաք, և հաստատեցաք ՚ի նոյնն: Քանզի այլապէս ոչէր մեզ կարողութի ճառել յաղագս այ բարձրելոյն զայնպիսիս , որք գերազանցեն զտեսութիւս ըստեղծուածոց : Իրաւի է թերևս , զի ՚ի կատարելութեանց էղէլոյս ըստ դուզնաքեայ իմացողութե մերում սակաւ ինչ՝ կարեմք խօսիլ զայ . ըստ որում վկայէ . Սողոմոնն ՚ի գիրս իմաստութե ՚ի ն գլխոյն. 13 . ՚ի թիւն 5 . ասելով . Քանզի ՚ի մեծութե գեղեցկութեն և ստեղծուածոյն , ճանաչելաբար կարասցէ ստեղծօղ նոյին տեսանիլ :

Եւ զնի սակաւուց ՚ի ն Թուոյն. Յ. կշտամբէ նյանդիմանէ զայնոսիկ , որք ոչ ծանեան զայ , ասելով . Դարձեալ և ոչ սոցա պարտէ ներել . քան զի եթէ այսքան կարացին գիտել . զի կարիցեին վարկանիլ զկենցաղս , զիարդ նորին զտէրն ոչ դիւրագոյնապէս գտին ; Բայց թշուառելիք են ,

և ՚ի մեջ

և 'ի մէջ մեռելոց է յոյս 'նոցա , որք առատացի՛ն ա՛ծս զգործս ձեռաց մարդկա՛ն , զոսկի , և զարծաթ, զփիւտն արհեստի, և զնմանութիւն կենդանեաց, կամ զքար անօգուտ զգործ հնոյ ձեռին : Սակայն առաւել քան զկայն մեր ոչ կարեմք ձգտիլ :

Այսպ ուրեմն 'ի ձեռա՛ն բաղդատութե՛ անեղծանկանաց կարեմք յայտնապէս 'ներբերել 'ի մեզ զծանօթութի՛ն ա՛յ . և ճառել զնմանէ բան կարի. Բայց որպէս ասացաք, 'ի վեր քա՛ն զտեսութիւն ստեղծուածոց զոչինչ կարեմք զնմանէ խօսիլ , և մանաւանդ եթէ խօսիցի ոք, մեղս համարիմք :

Աստուած՝ հաւատամք և խոստովանիմք միայն զասացեալս 'ի սրբոց Մարգարէից, որք 'ի ձեռա՛ն 'ներշնչման հոգւոյն սրբոյ տեղեկացեալք խորոցն ա՛ծայնոյ , ծանուցին մեզ զնոյնս . Զորս թէպէտ 'նուաստութի իմացողութե՛ մերոյ պարագրել ոչ կարէ . Սակայն որովհետև 'ի ստեղծուածոցս զա՛ծն բարձրեալ Ճշմարտախօս ծանեաք , թարց ումեք երկբայութե՛ ասյենումք 'ի նոյնս : զի որ ոչ ընդունի զբանս ա՛յ, սուտ առնէ զա՛ծ, և դասի ընդ անհաւատս :

Հաւատամք ուրեմն, զի ա՛ծ մի է և երրեակ, մի էութի և երրեակ անձնաւորութի , այսինքն ,

ինքն , զէութիւն այ մի ճանաչեմք , և զերիս անձինս 'ի նմա իմանամք . որք են Հայր , և Որդի , և Հոգին սբ:

Զմի էութիւն հաւատամք , վասն զի ած խօսելով Մովսիսի 'ի գիրս երկրորդի օրինաց 'ի գլխոյն. 6. 'ի թիւն 4. ասաց, Լուր իսրայէլ, տր ած մեր , տր մի է : Եւ 'ի նոյն գլխոյն . 32. 'ի թիւն 39. ասէ, տեսէք զի ես միայն եմ, և ոչ գոյ այլ ած բայց 'յինէն :

Այս ուրեմն հաստատեմք զած մի գոլ. Քանզի հաւատամք բանից նորին: Եւ թէպէտ 'ի ստեղծուածոցս յաղագս այ միութեն զպատճառս ոչ ունիմք . Սակայն 'ի յայտնութենէ նորին առաւել հաստատեմք զմիտս մեր , քան թէ 'ի պատճառաց բնականաց:

Հաւատամք ևս 'ի միում աստուծում գոլ զերիս անձինս . Եւ զայս ճշմարտութի թէ պէտ ոչ կարեմք հաստատել 'ի յեղելոցս , քանզի 'ի ոչ ումեք էութե ստեղծականի զերիս անձինս գտանեմք, այլ 'ի իւրաքանչիւրումեք էութե զմի անձն. Սակայն հաստատեմք զմիտս մեր 'ի յասացելոցն սրբոց Մարգարէից, որոց ինքնին ած յայտնեաց:

Եւ նախ 'ի բանից Եսայեայ մարգարէի, որ 'ի նոյն գլխոյն. 66. 'ի թիւն 9. ասէ , Մի թէ ես որ այլոց զծնունդ շնորհեմ, ես ինքն ոչ

ծնա

ծնանիցիմ, ասէ տ̄ր: 'ի բանս այսոսիկ, զորս ա̄ծ ասէ ըստ եղանակի հարցման, ցուցանէ մեզ, թէ ունիցի ինքն զծնունդ. վասն զի ասէ, թէ ես որ այլոց զծնունդ շնորհեմ, ոչեմ անծնունդ, այսինքն անկար է, թէ իցեմ թարց ծննդեան: Բանք այսոքիկ են ա̄յ բարձրելոյն, եւ զի որ հակառակիցի սոցա, թարց մոլորութե. Ապա ուրեմն 'ը՛ն յաստուածում գոյ ծնունդ, զի որ այլոց զծնունդ շնորհէ, ինքն ոչէ ամուլ: Իսկ որոյ է ամուլ, ծնանի զորդի, եւ հայր որդւոյ;

Երկրորդ 'ի բանից Դաւթի մարգարէին, որ 'ը՛ն սաղմոսին. 109. 'ի թւն 1. խօսելով յաղագս ք̄ի ասէ, Ասաց տ̄ր ց̄տր իմ, Նիստ ընդաջմէ իմմէ, մինչեւ ցայն տեղին ուր ա̄ծ խօսի առ որդին իւր ասելով. Յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ: այսինքն, Նախ քան զստեղծուածս ծնայ զքեզ:

Երրորդ 'ի բանից նոյնոյ Դաւթի Մարգարէին, որ 'ը՛ն սաղմոսին. 2. 'ի թւն 1. ասէ. Ընդէր փրփրեցան հեթանոսք, մինչեւ ցայն տեղին, ուր խօսի ք̄ս զ̄այ հօրէն իւրմէ ասելով: Տ̄ր ասաց ցիս, որդի իմ ես դու. Ես այսօր ծնայ զքեզ:

Չորրորդ 'ի բանից նոյնոյ Դաւթի մարգարէին որ 'ը՛ն սաղմոսին. 88. 'ի թւն 21. ասէ.

Գտի զդաւիթ ծառայ իմ. ձիթով սրբով իմով օծի զնա : Եւ 'ի Թուոյն. 27. ասէ. Նա կարդասցէ առիս. Հայր իմ ես դու. Ած իմ, ընդունող կեցութե իմոյ :

Արդ 'ի մարգարէից այսոցիկ սրբազանից աւանդի մեզ, թէ ած ծնանիցի, եւ լինիցի զորդի : Եւ բանք սոյին այնքան են լուսաւորք, յայտնիք, մինչ զի ոչինչ կերպիւ թողու- ցուն 'ի մեզ զտեղի տարակուսութե. ապա ուրեմն ճշմարտապէս գոյ ծնունդ 'ի յաւ- տենում :

Հինգերորդ 'ի բանիցն Եզրասայ մարգա- րէին, որ 'ի չորրորդում գրոցն 'ի գլուխն. 7. 'ի թիւն. 26. տալով մեզ զհաստատուն վկայութի ասէ. Ահա ժամանակ եկեսցէ. Եւ եղիցի մինչ գայցեն նշանքն, զորս նախա- ասացի քեզ, եւ երեւեսցի հարսն, երեւելով ցուցցի երկիրն, որ այժմ խուսափէ. եւ ամ որ ազա- տեցեալ է 'ի նախասացելոցն չարեաց, նա տեսա- ցէ զսքանչելիս իմ. Քանզի յայտնեսցի որդի իմ յս, հանդերձ նոքօք, որք են ընդ նմա, եւ վայելչասցին, որք մնացեալքն են յամս չորս հարիւր, եւ եղիցի զկնի ամացս այսոցիկ, եւ մեռանիցի որդի իմ քս :

Այսոքիկ համայնք վկայութիք լուսաւորք մնայ, մեզ եւ ձեզ ընդունելիք. ոչթէ եմ

սուտ մտածութիւք , կամ երեւակայութիւք եւ ցնորք , այլ յայտնութիւք հոգւոյն սրբոյ. Ուստի ո՛վ է այնքան դժուարին, եւ յանդուգն, որ զայսոսիկ ուրանալ իշխիցէ, եւ հակառակիցի ճշմարտութեան. զմարգարէսն ոչ ընդունիցի , եւ զմարգարէութիւս նոցին սուտս վարկիցէ , եթէ ոչ այն, որ է արտաքոյ բանականութեան : Բայց մեք քրիստոնեայքս ընկալեալք լրջմտութեամբ զճշմարտութիւս զայսոսիկ առ ի յա̃յ 'ի ձե՛ռն մարգարէիցն հաւատամք , եւ խոստովանիմք , եւ հաստատապէս պատուեմք :

Հաւատամք եւս , եւ խոստովանիմք զՀոգին ս̃բ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ մի ա̃ծ ճշմարիտ , ըստ վկայութեանց սրբոց մարգարէիցն: Եւ նախ Դաւթի , որ լցեալ Հոգւովն սրբով խնդրէ 'յա̃յ 'ըն սաղմոսին . 50. 'ի թիւն 13. եւ ասէ. Մի ընկեներ զիս ի՛ր 'յերեսաց քոց, եւ զՀոգի քո ս̃բ մի 'ի բաց բառնար 'յինէն:

Եւ 'ըն սաղմոսին. 32. 'ի թիւն 6. ասէ. Բանիւ տ̃ն երկինք հաստատեցան, եւ հոգւով բերանոյ նորա ա̃մք զօրութիւք նոցա: այսինքն, ա̃ծ բանիւն իւրով, որ է որդին իւր միածին , զերկինս եստեղծ , եւ հոգւով իւրով սրբով հաստատեաց զզօրութիւս նոցա :

Դարձեալ 'ըն սաղմոսին . 103. 'ի թիւն

30. ասէ

30. ամէ. Առաքեսցես զհոգի քո, և ստեղծանեսցին, և վերանորոգեսցես զերեսս երկրի:

Երկրորդ վկայութե՛ն Յոբայ մարգարէի, որ 'ի գլուխն. 33. 'ի թիւն. 4. ամէ. Հոգին ա͞յ արար զիս: Եւ 'ի նմին գլխոյն. 26. 'ի թիւն. 13. խօսելով զա͞յ ամէ. Հոգի նորա զարդարեաց զերկինս.

Երրորդ վկայութե՛ն Սողոմոնի. որ 'ի նմին գիրս իմաստութե, 'ի գլուխն. 1. 'ի թիւն. 5. ամէ, Քան զի ս͞բ Հոգին խրատու, փախեսցի 'ի կեղծմանէ, և 'ի բաց բարձցէ զինքն 'ի խորհրդոց, որք են թարց իմացման.

Չորրորդ վկայութե՛ն Սիրաքայ. որ 'ի գլուխն մէկ. 'ի թիւն. 8. ամէ. Մի է բարձրագունեղ ստեղծօղն ամենակարօղ, և արքայ հզօր, և ահեղ յոյժ, որ նստի 'ի վե͞ր գահոյի նորա, և տիրօղ ա͞ծ, ինքն ստեղծ զնա հոգւովն սրբով.

Հինկերորդ վկայութե՛ն Յովելեայ մարգարէի, որ 'ի գլուխն. 2. 'ի թիւն. 28. ամէ. Եւ եղիցի յետ այսորիկ հեղից զհոգի իմ 'ի վե͞ր ա͞մի մարմնոյ, և մարգարէասցին ուստերք ձերք, և դստերք ձերք: ծերք ձերք երազով երազեսցին, և մանկունք ձերք զտեսիլս տեսցեն. Այլև 'ի վե͞ր ծառայից իմոց, և աղախնեաց 'յաւուրս յայնոսիկ հեղից զհոգի 'իմ:

Արդ բանք մարգարէից այսոցիկ լուսատուք, եւյայտնիք, ուսուցանէն մեզ զ՚որդին մի գոլ ա̄ծ, եւարարիչ, յորմէ առորաբաշխին համայնք շնորհք, եւբարութիւք արարածոյս. Ապա ուրեմն հաւաստի է, եւճշմարիտ խոստովանութիւն մեր, որ յաղագս ամենասուրբ Երրորդութեն.

## Գլուխ իններորդ:

### Յաղագս ընդիմադրութեան հակառակորդաց ընդէմ բացայայտեցելոյ հաւատոյս մերում, եւմերոյն պատասխանատուութեց:

Առարկէն անհաւատքն ընդէմ մեզ ասելով, ՚նախ թէ Ա̄ծ անմարմին է, եւզկնի ոչ ճա՚նաչէ, ուրեմն ոչ կարէ ծնա՚նիլ զորդի.

Եւ եթէ ա̄ծ ունէր զորդի, նմա հարկէր գոլ ա̄ծ, եւայսպէս լինէին երկու ա̄ծք. իսկ եթէ եւհոգին ս̄բ է ա̄ծ, ուրեմն են երեք ա̄ծք.

Երկրորդ, եթէ ՚ի յաստուծում գոյին երեք անձինք, ՚ի հարկէ պարտէր խոստովա-

՚նիլ

նիլ զերիս ա՟ծս, քանզի ՚ի յառեղծուածս հայրն, և որդին, որքէն երկու անձինք, են երկու մարդիկ, ուրեմն, և՚յաստուածում եթէ գոյին երեք անձինք, գոյին երեք ա՟ծք.

Բայց այսօրիկ դժուարիմացք են մտաց մարդկան, և անհասանելիք. Ապա ուրեմն խոստովանիլն զնոյնս է մեծ մոլորութի, և հայհոյութի.

Պատասխանեմք նախ, թէ ա՟մ որ, որ հաւատայ ա՟յ ճշմարտապէս, ոչինչ կերպիւ պարտի երկբայիլ ՚ի վ՟ր բանից սորա մարգարէիցն, զի բանք մարգարէիցն են աստուածայինք քան զա՟մ ստուգութի, ըստ որում են ներշնչեցեալք ՚ի հոգւոյն սրբոյ. Եւ թէպէտ իմացողութի մտաց մերոց ոչ կարէ պարագրել զնոյնս, և հաստատել բնականիւք պատճառօք, սակայն ոչ վասնայնորիկ պարտի բացասել զնոյնս, զի որ բացասէ զբանս ա՟յ բարձրելոյն, սուտ առնէ զնա, որ է մեծ հայհոյութի.

Դարձեալ հաւատն է զիրաց աներեւանելեաց, և անհասանելեաց, որք դժուարապէս պարագրին ՚ի մտաց առեղծականաց. վ՟ս որոյ առ՚ի հաստատել զնոյնս, ոչ ունիմք զայլ պատճառս, եթէ ոչ զբանս ա՟յ, և զվկայութիս սրբոց մարգարէից. Աստուստ թէպէտ դժուա

բազոյնս գոլ խոստովանիմք զնոյնս ՝, բայց ոչ անհնարինս , կամ անկարելիս , քանզի յոգունք իրք են 'ի յօդս, զորս տեսանեմք աչօք, նշօշափեմք ձեռօք , սակայն այնքան դժուարիմացս գոլ գտանեմք զնոյնս , մինչզի զկատարեալ ինչ ապացուցութի, առ 'ի ամենեւին հանգուցանել զմիտս առբերել ոչ կարեմք .

Զոր օրինակ , զիրս յառաջադրեցելս մեզ տեսանեմք , բայց ոչ գիտեմք հաստատապէս, թէ արդեօք տեսութին լինիցի 'ի յաչս 'ներբերմամբ պատկերայն, եթէ արտաքս առաքմամբ , շնչոյն տեսողականի առ առարկայն : Եթէ ասիցեմք , թէ տեսութին արտաքոյ աչաց լինի . Պատասխանեն հակառակորդք , թէ զիարդ տեսողականն շունչ , իսկոյն թարց յամենայն սլանայ առ արեգակն , եւ առ աստեղս բարձրագունեղս , առ 'ի կերպաւորել զտեսութի : Եւ թէ հիմ արդեօք հոգին ստանիկ տարացրելով զտեսողականն շունչ , ոչ խափանէ զտեսութին . Եւ թէ մինչ աչք 'յերկնից 'յերկիր , եւ յերկրէ առ արեգակն , եւ անտուստ 'ի յերինս ուղղէ զտեսողականն զօրութի , որպէս անտի այսր , եւ աստուստ անդր փաղփաղակի ընթանայ , եւ ետես դառնայ : կամ զիարդ զառաջագոյն 'նկատեցեալ առարկայն իսկոյն 'ի բացթողու , եղիմէ առայլ ինն .

իսկ

Իսկ եթէ ասիցեմք, թէ տեսութիւն 'ի ներքս աչաց լինի. Պատասխանեն հակառակորդք, թէ զիարդ արեգակն, և լերինք մեծամեծք 'ի փոքր բբոջ ական պարունակին: Առ այս եթէ ասիցեմք, թէ ոչ արեգակն կամ լերինք, այլ պատկերք նոցին 'ի յաչս ներբերին. Կրկին պատասխանեն հակառակորդք, թէ զի՞արդ պատկերքն այնոքիկ, կամ երևակերպութիւնք մեծամեծք կարիցեն 'ի փոքր ական 'ներ զետեղիլ: Եթէ են պատկերքն այնոքիկ 'ի հեռաստանէ մօտաբերին.

Հարցանեն և մեզ, թէ առարկայն այն զոր աչքն տեսանեն, ունի՞ զմի միայն պատկեր, թէ զբազումս. Եթէ ասիցեմք թէ ունի զմի միայն պատկեր. Առարկեն թէ, Ուրեմն 'ի բազմաց 'նկատողաց մինն միայն կարէ տեսանել զառարկայն, որ 'նախապէս 'ներընկալաւ 'ի յաչս իւրս զպատկեր նորին, այլ ոչ ամենեքեան: Քանզի եթէ ամենեքեան տեսանիցեն զնա, 'ի հարկէ եղիցին պատկերք բազումք, ըստ որքանութեան 'նկատողացն.

Հարցանեն ևս, թէ պատկերք արեգական, աստեղաց, լերանց, ծառոց և քարանց մինչ դիմե՞ն 'ի յաչս, ուր հնան, և սպասեն առաջին մտից. Առ այս եթէ ասիցեմք, 'ի յօդս. Առարկեն թէ զիարդ 'ի մտանելն 'ի յաչս զիր-

էարս ոչ 'ի բաց մերժեն, ո՞չ զի մինն նախագոյն մտանիցէ քան զմիւսն : Կամ ընդէր ամենեքեան իմաստին ոչ մտանեն առ'ի կերպաւորել զտեսութիւն :

Առարկեն ևս ասելով, եթէ պատկերքն են արտաքոյ աչաց զետեղեցեալք 'ի յօդս, ո՞ 'ի ժամանակի տեսութեան յառաջբերէ զնոյնս զի նկատիցին : Եւ եթէ պատկերքն ըստ ինքեանց յառաջագային, զի՞ արդ ոչ խոտորին կամ արտուղեն : Այլև եթէ խփիցին աչք, կամ առ այլ ինչ առարկայ ուղղիցեն զտեսութիւն, զինչ լինի պատկերին նախադիտեցեալ, ոչնչանայ արդեօք, թէ դառնայ անդրէն առ առարկայն, որոյ էր պատկեր, և եթէ մնայ 'ի յաչս : Իսկ եթէ այլով իւիք յառաջագային պատկերքն, ընդէր 'ի նկատել ականն թիւրապէս, ոչ մօտաբերին 'ի նոյունց.

Առարկեն ևս ասելով. եթէ գոյ առբերող պատկերացն, մի է արդեօք, թէ բազում ըստ որքանութեան պատկերացն, և տեսանողացն. մի՞ ոչ կարէ գոլ, զի մի իր ոչ կարէ առ նմին աչս զպատկերս առբերել. Իսկ եթէ բազումք, զի արդ 'ի ժամանակի առմատուցման պատկերացն ոչ վանեն զիրեարս.

Առ այս եթէ ասիցեմք թէ ոչ իրք, և ոչ պատկերք իրաց, այլ ճաճանչք իրաց գունով

նորա-

նորակութբ ներկեցեալք, ՚ի յաչս զտեսութիս կերպաւորէն, նոյնք տակաւին յարամնան տարածութիք. Քանզի թէպէտ ներհմտութբ գիտեմք, թէ ՚յիւրաքանչիւրոց կիտից որք են շուրջ զառարկայիւն, և ՚յամենից կողմանց շրջաբերութեն, զառարկայն յառաջադրեցեալ տեսանեմք). Եթէ իւրաքանչիւր դուզնաքեայ մասն լուսոյն զիրն զայն մեծ մեզ երևեցուցանէ. Սակայն անգիտանամք զեղանակ նորին. Վասնզի եթէ իւրաքանչիւր մասն լուսոյն զիրն զայն մեզ երևեցուցանէ. Ուստի է զի ՚ըն մեծի իմիք հայելւոջ յառաջադրեցելում մի միայն պատկեր երևիցի, որով հետև բազումք են մանկունք ներտպեցեալք ՚ինմա։ Եւ եթէ հայելին այն ՚ի բազումս մանկունս բաժանիցի, իսկոյն ՚ըն յիւրաքանչիւրում մանկան հայելւոյն պատկերն այն երևեսցի։ Արդ ուստի է, զի լոյսն այն մեծ ՚ի մանկունս անջատեցեալ զպատկերս բազումս երևեցուցանիցէ. Այսոքիկ ամենեքեան արդարև ասեմք են դժուարինք, բայց ոչ անհնարինք վս դժուարութեն, զի զայսոսիկ այսպիսիս գոլ տեսանեմք, բայց զորպիսութի սոցին անգիտանամք.

Զսոյն ասեմք և ս յաղագս զգացողութե ջսելեացն. Քանզի մի ձայն բոլորակս, նկատ

տար

տարելապէս 'ի լսելիս բազումս ներմտանէ, եւ ոչ ոք կարէ տալ զպատասխանն, թէ զիարդ միով ձայնիւ անբաժանելեաւ այս եղիցի: Զի յորժամ ես բարբառիմ, դու եւ ամենեքեան, որք կայք զինեւ լսէք զձայն իմ. բայց թէ որով եղանակաւ մանկունք յօդոյն ժամանեալք 'ի յունկս տարածեցին ընդ բնաւ յօդն զբոլոր ձայնն իմ անգիտանամք. Զոր օրինակ յորժամ խօսիցք պարսկերէն, կամ արաբերէն, եւ կամ հայերէն, կերպագրէ լեզուն զշունչն 'ի յօդս թէ արտաբերմամբ, եւ թէ ներպիւ իւիք ներամփոփմամբ, իսկ յօդն վաղվաղակի զնոյն ձայնն մինչեւ 'ցլսելիս հասուցանէ, բայց թէ որով եղանակաւ այս եղիցի անգիտանամք.

Դժուարին եւս է առ 'ի մտածել, թէ ո՞չ սակաւ ինչ հուր այնքան ածէ, մինչզի զքաղաքս մեծամեծս եզմայրիս լայնատարածս այրիցէ, 'Նորս ոչ գոյր հուր. Արդ զայսոսիկ այսպէս լինիլ տեսանեմք, բայց զեղանակ աճեցմանն անգիտանամք:

Զարմանալի է եւս, զի 'ի յական թօթափելն 'ի միոյ ճրագէ հազար ճրագունք լուցանին, եւ բոց առաջնոյ ճրագին ոչինչ կերպիւ նուազի: Արդ զայսպիսիս հանապազօր՝ տեսանեմք, բայց զպատճառ եղելու-

թեն

թէն անգիտանամք ։ Սակայն ոչ վ̄այնորիկ ստորասեմք զնոյնս գոլ անհնարինս , վ̄ ոչ ունելոյ զպատճառս ՚ինոցունց .

Դարձեալ գիտեմք , զի աշխարհ եզերեցեալ է եւ ծայրունակ, վ̄ զի է եղական, քանզի ա̄մ եղական զծայր ունի եւ ընդ սահմանապարփակի , բայց զկերպ եզերեցման նորին ոչ իմանամք . Եւեթէ կամիցի ոք սահմանագրել զեզերս նորին , իսկոյն խնդրի ՚ինմանէ թէ զինչ իցէ անդր քան զնոյնս . զի եթէ պատասխանիցէ զոչինչ գոլ , հակամարտի մտի իւրում . որ ստորասէ զհակառակն ։ Իսկեթէ ասիցէ գոլ զտեղի ինչ . իսկոյն եզրակացուցանի , թէ գուցէ եւս աշխարհ .

Եւ այս ոմանք ազգիտաբար ասացին թէ ծայրունք աշխարհի լերինք են , եւ անդր քան զլերինս ծով . Եւթէ գուցեն հրեշտակք ոմանք , որք կրիցեն զաշխարհ , զիմի անկանիցի . Բայց հակադրի նոցա այսպէս , ծանի- այն եւ հրեշտակք ոչ են ՚ի մէջ աշխարհի , ուր ուրեմն իցեն , եւ անդր քան զդուռս զինչ իցէ , միթէ ա̄ծ գոլով ամենակարող , ոչ կարէր զաշխարհ այնպէս ստեղծանել , զիմի անկանիցի ուր , եւ եթէ անկանէր , յո՞ արդեօք անկանէր , որովհետեւ ոչ գոյ տեղի ։ Իսկ եթէ գոյ տեղի , ուրեմն գոյ եւ աշխարհ ։ Ապա-

րէն

ընդ աշխարհ ըստ որում արարած, է ծայրու-
նակ եւ վերջունակ, բայց թէ ըստ որում ոչ
գիտեմք.

Դարձեալ մինչ 'ի միտ ածեմք զստեղծագոր-
ծութիւն աշխարհի, եւ ժամանակի, ասեմք, թէ
ոչոք 'ի ստեղծուածոյս ունէր զլինելութիւն իւր
նախքան զստեղծանելն, ուրեմն եւ ժամա-
նակն նախքան զլինելն իւր, ոչ ունէր զգոլ.
Բայց իմացողութիւն մեր ըստ համոզման
Արիստոտելի դրդէ զմեզ ասել, թէ նախկնու-
թիւն այն յառաջ քան զարարչագործութիւն
իմանեցեալ իցէ ժամանակ, որովհետեւ նախ-
կնութիւն, եւ յետնութիւն են տարբերութիւնք
ժամանակի.

Եւ՛ յայսմանէ առարկեմք թէ, ուրեմն գոյր
ժամանակ նախքան զժամանակ, իսկ ժամա-
նակն ոչ կարէ գոլ առանց աշխարհի. Ապա
ուրեմն, եւ աշխարհ գոյր նախ քան զլինելն
իւր: Բայց այսոքիկ են անհնարինք, զի գոլն
նախքան զլինելն, այսինքն, մինչ ոչ գոյր, է
հակասութիւն: Վս զի գիտեմք, թէ ամ էակ
իցէ ստեղծեցեալ 'ի յէութէ Այ բարձրելոյն,
եւ ունիցի զսկիզբն իւրոյ լինելութեան. Բայց
զայսոսիկ մեք դժուարաւ իմանամք, սակայն
ոչ վասնորիկ ստորասեմք զնոյնս գոլ անհնա-
րինս, զի Ած 'ի յոչնչութէ 'ի գոյութի եած

զարա-

զարդարածս, ուրեմն էր երբեմն զի ոչէին նշետոյ եղեն .

Այս ևս է դժուարին առ՚իմանալ , զի ՚յերկինս զբաղում ինչ տեսանեմք , բայց թէ որով եղանակաւ լինիցին անգիտանամք , այսինքն , թէ զիարդ արևակայութիւք նգիչէրահանգիտութիւք ՚ի տեղեաց իւրեանց շարժեցան նչետս ընկրկեցան զքաւն նուէն աստիճանօք , ևնոր օրն , այսինքն , մուտ արեգականն ՚ի խոյն , որ՚ինախնումն հանդիպիւր ՚նառաջնում աստիճանի խոյին, այժմ հանդիպի ՚ներկրորդում աստիճանի ձկանն. Եւ աստեղքն անշարժք եանմոլարք ՚ի տանէն իւրեանց չուեցին ՚յայլ տուն . Ուստի նորագոյնք աստեղաբաշխք , ներկայաչափք զերկուս գօտիս կենդանակերպականս վարկանէն , զմինն կոչեն աստղային , եզմիւսն Թափուր յաստեղաց : Այլև աստեղքն մոլորականք փոխեցին զվերնակողմն իւրեանց եզներքնակողմն , այսինքն , զտեղիս բարձրագունիս եղցածագունիս ; իսկ իմաստասէրք ՚ի փոփոխմունս և՚ի տարբերութիս սոյին հայելով հակառակ՝ իրերաց խօսեցան . Ուրեմն կամ սոքա կամ նոքա եկամ երկաքանչիւրն մոլորեցան . Եւ այս վս այնր եղև , զի զկատարեալ հաւաստութի ոչ գտին վս դժուարիմացութե առաջակային .

Դար-

Դարձեալ, որք հետեւին աստեղաբաշխութե՛ ասեն, թէ աստեղք ՚յերկինս սեւեռեցեալք գո՛ն ոպ̃ ուռ՚ի փայտի, կբեեռ ՚ի տախտակի, եւ թէ շարժին միայն ՚ի շարժիլն երկնից, ՚յորս գո՛ն սեւեռեցեալք, նայապէս զերկուս շարժութիս ներհակս, ՚ընմիում շարժականում սահմանագրէն, իբր թէ նոյն շարժելին ՚ի միում եւ ՚ի նոյնում ժամանակի ՚յարեւելից ՚ցյարեւմուտս, եւ ՚յարեւմտից ՚ցյարեւելս շարժիլ կարիցէ: Արդ եթէ ճշմարիտ է այս, ուրեմն մոլորեցեալք են իմաստունքն, որք ուսուցանեն զմի եւ զնոյն շարժելին ՚ի միում եւ ՚ի նոյնում ժամանակի ոչ կարող գոլ արտածել զերկուս ներհակս շարժողութիս: Իսկ եթէ իմաստունքն ուղղապէս խօսեցան, ուրեմն աստեղաբաշխքն են մոլորեցեալք, որք ոչ գիտեն զինչ ասեն.

Առ այս պատասխանեն աստեղաբաշխք, թէ երկին է իբրեւ զանիւ իմն, եւ աստեղք են իբրեւ զմրջիւնս ՚ի վր̃ անւոյ, եւ յորժամ անիւն ՚յարեւելից ՚ցարեւմուտս թաւալի, մրջիւնքն ՚յարեւմտից ՚ցարեւելս ընթանան. Արդ այսպիսի շարժութիք ոչ են ներհակք, ուրեմն կարեն պատկանիլ երկնի եւ աստեղաց: Պատասխանեմք, թէ օրինակս այս, ըստ ինքեան է ճշմարիտ, սակայն ոչ յարմարի օրինակեցելոյն,

քանզի

քանզի անիւն եմրջիւնն էն երկու իրք շարժականք, վ̃ն որոյ կարէն ունել զերկուս շարժութիս 'ներհակս միմեանց. Բայց երկքին հաստեղքն բևեռ էցեալք 'ի նմա առնէն զմի միայն իր շարժական. Ուստի եթէ ոք սպանանիցէ զմրջիւնս զետեղեցեալս 'ի վ̃ր անւոյ, հաւնիցէ զնոսա անշարժս, ըստորում էն ատք 'ի փայտի, ոչ ևս երևեսցին ինմա երկու ներհակք շարժութիք, այսպէս ասելի է և զաստեղաց.

Դարձեալ 'նորագոյնք աստեղաբաշխք ըղհրաման, որէ 'ըն հինկերորդում երկնի եքան զարեգակն բարձրագոյն, մինչ 'խատործագոյն կէտն ժամանէ, ասէն գոլ ցածագոյն քան զարեգակն; իսկ զլուսաբերն, որէ ստորնագոյն քան զարեգակն, ևմերձաւորագոյն երկրի. մինչ 'իվերնագոյն կէտն հասանէ, ասէն գոլ բարձրագոյն քան զարեգակն ևհեռաւորագոյն 'յերկրէ: Արդ՝ եթէ սուտ է այս, ուրեմն 'իսոսցունց զհաւաստի գիտութի ունել ոչկարէն: իսկ եթէ ճշմարիտ է, ուրեմն հաստատուն իմն է ասացեալն, թէ աստեղք 'ի մէջ օդոյն զսևեռումն ոչունին, այլ ըստ ինքեանց շարժաբերին.

Դարձեալ ասի, թէ 'իժամանակէ Հիփարկոսի մեծի աստեղաբաշխին մինչև ցայժմ, որք

էն

են ամք 1700. մերձեցելոյն արեգական՝ յերկիր. 110000. մղոնիւք. բանս այս կերպիւ ինչ համաձայն ճշմարտութե տեսանիքսն զի 'ի դարս մերձակայս երևեցան յերկինս աստեղք բազումք, որք 'նանցեալս ժամանակս ոչէին երբէք 'նշմարեցեալք, յորոց չորքն են շուրջ զլուսնթագիւն, և երկուքն շուրջ զերևակիւն: Արդ՝ եթէ սուտ է այս, ուրեմն 'ի ձեռն տեսութե ոչինչ իմանի; իսկ եթէ ճշմարիտ է, ուրեմն աստեղք ոչէն լեեռեցեալք յերկինս իբրև զոստս 'ի փայտի. քանզի եթէ այսպէս էր զի մարդ աստեղքն, որք շուրջ են զերևակիւն և զլուսնթագիւն, կարէն երևիլ 'ի ներքոյ և 'ի վերոյ նոյն. արդեօք զմուտս կամ զպատուհանս ինչ ունիցին, ընդ որովք անցեալք իջանիցեն 'ի խոնարհ, ևելանիցեն 'ի վեր: Այսորիկ ամենեքեան են դժուարինք, բայց ոչ վասն այսորիկ անկարելիք.

Դարձեալ տեսանեմք, զի արեգակն ընթանայ շարժմամբ թաւալականաւ, և շրջաբերականաւ, այլ ոչ ուղղաձիւ գնացմամբ, վասն որոյ ասորասէն բազումք թէ 'ի նմին, այլև թէ յայլս աստեղս 'իցէ լինելութի կապականութի; և եթէ երբեմն բարձրանայցեն և երբեմն ցածանայցեն: Այլև թէ 'ի տրամագծին իւրեանց, հզօրագոյնք իցեն, 'ի տունս

հետ

հետակայս սակաւագոյնք , իսկ 'իոու՛նս տարակայս ամէննիմբ տկարագոյնք : Բայց մեք վաղուրեմն առփորձեցաք ևհաստատեցաք , թէ համայնք կէտք երկնից , առ որս շրջաբերին աստեղք , իցեն արևելք ևարեմուտք , բարձու՛նք , ևցածու՛նք : Այս ուրեմն արեգակն ևաստեղք ամէնեքեան 'ըն ջիւրաքանչիւրում կիտի բոլորակին իւրեանց լինին ևապականնին բարձրանալով ևցածանալով : Եւ հետևապէս իւրաքանչիւր տու՛ն երկնի տրամագծական , եղիցի հետակայ , ևտարակայ: Եւ ըստ այսմ աստեղք ամէնեքեան եղիցին միշտ զօրեղք ևանզօրք, կարօղք ևտկարք: Իսկ եթէ այսուքիկ այսպէս իցեն , մեծ իմն դըժւարութի՛ է ևանկարութի՛ ինչ : Եւ եթէ ըստ 'նկատման աշխարհի այսպէս թու իցին , կրկին դժուարութի է , որոյ զպատճառն ոչ գիտացին :

Բայց եթէ ասիցէն , թէ աստեղք ո՛չ ըստ ինքեանց շարժին , այլ ընդ երկնից . Առայս, հարցանեմք թէ ո՛ արդեօք իցէ շարժօղն այն: Արիստոտէլ , զոր կարծէն գերազանցագոյն քան զայլս 'ի գիտութիս և 'յիմաստութիս, ասէ, թէ հրեշտակք, որք 'նստին 'յարևելս շարժէն զերկինս . Ուրեմն ըստ բանից 'նորին 'ըն քնաւս կէտս երկնից պարտին գոլ հրեշտակք ,

որով հետև իւրաքանչիւր կէտ երկնից է ել արևու եմուտ նորին ։ ըստ որում ցուցաք ։

Բայց հարցանեմք այժմ, թէ զիարդ արեգակն մարմնական գոլով 'ի միում ժամու զհնգետասան աստիճանս շրջաբերութիւն երկնից կատարիցէ ; Եւ թէ զիարդ 'ի ծագելն նորին, իսկոյն շառաւիղքն թարց յամելոյ 'յարևմուտս ժամանիցեն ։

Դարձեալ՝ իմաստասէրք, որք ուսուցին թէ արեգակն ևաստեղք զգնտիւն երկրի շրջաբերիցին, կամ թէ գունտն երկրի միայն շարժիցի, և կամ երկաքանչիւրն իմիասին, այսինքն, աստեղք 'յարևելից 'յարևմուտս, ևերկիր 'յարևմտից 'յարևելս, նոքա ևոչ զթիւս երկնից գիտացին, քանզի ոմանք 'ի նոցանէ ինն գոլ զերկինս ասացին, ոմանք երկոտասանս, այլք վեշտասանս. Եւառ'ի հաստատել զայս հռչակեցին, թէ առաջին շարժունն իւրով սրագիւ ընթացմամբն զայլս ընաւս պարունակեցեալս քարշէ 'յարևելից 'յարևմուտս, բայց այսորիկ յառաջադրութե զոչինչ պատճառ առբերին ։

Իսկ մեք գիտեմք հաւաստեաւ, զի շարժողին, և շարժեցելոյն հարկէ գոլ իմիասին, կամ ըստ գոյացութե և կամ ըստ զօրութե ։ բայց գոյացութի նախկնոյ ևառաջնոյ շար-

ժողին

ժողին յոյժ տարակացեալէ ՚յայլոց շարժե-լեաց, ուրեմն ըստ գոյացութե՟ ոչէ՛ն իմիասին: Այլև ոչ ըստ զօրութե՟ , ո՟զի զօրութի՟, ՛նախկնոյ շարժողի՛ն առայլս շարժելիս հասա՛նիցէ :

Զայսոսիկ ՛եզայլս սոյի՛ն ՛նմա՛նս ասէ՛ն, բայց զբա՛նս ոչ առբերէ՛ն, այլ յե՛նու՛ն միայն ՚ի խօսս Արիստոտէլի, զոր իբրև զմարգարէ առ՛ընդու՛նի՛ն , և ոչ ՚ի միտ ածէ՛ն զասացեալ՛ն Դաւթի մարգարէի՛ն ՚ր՛ն սաղմոսի՛ն 115. Ես ասացի ՚ի յափշութե՟ իմում թէ ա՟մ մարդ ստասաց է: Այլ հաւատա՛ն մա՛նաւա՛նդ Արիստոտէլի քա՛ն թէ բա՛նից մարգարէից՛ն ա՟յ, ընդ որս ա՟ծ խօսեցաւ : Եւ վ՟ս այսորիկ զիրաց ա՟ծայնոց զբա՛ն պատճառի խ՛նդրէ՛ն : Բայց զորալիսիս պատճառս յառաջբերի՛ն իմաստասէրք ,որք ասէի՛ն , թէ գու՛նա՛ն երկրի ՛ի մէջ օդոյն կախեցեալ կայ ե՛մնայ, իբրև զծա՛նր ի՛նչ ՚ի մէջ թեթևոյն և ոչ ա՛նկա՛նի. Ասեմ թէ և ոչ զմի : Առայս, առասպելաբա՛նէ՛ն ոմա՛նք , թէ ՚ի՛ներքոյ երկրի այսորիկ իցէ այլ ի՟ն երկիր , որ կրէ զայս , զի մի ա՛նկա՛նիցի, և՚ի՛ներքոյ ՛նորի՛ն միւս ի՟ն, մի՛նչև ՚յեօթ՛ներորդ՛ն . իսկ ՚ի՛ներքոյ եօթա՛նց երկրաց այսոցիկ իցէ եզ՛ն , և ՚ի՛ներքոյ եզի՛ն ձուկ՛ն , և՚ի՛ներքոյ ձկա՛ն լեառ՛ն , և՚ի՛ներքոյ լերի՛ն ծով, իսկ ՚ի՛ներքոյ

նորին հողմ։ Արդ՝ եթէ այսօրինակ ստոյգ քոյեն, ʼի հարկէ հողմն այն ներքնագոյն, զոր մեք ոչ տեսանեմք, եղիցի մեծագոյն քան ըզ հողմս զայս՝ յորում եմք։ Բայց տեսանեմք ներ հմտութեամբ, զի կիսագունտն մեր հաւասար է ընդ միւսում կիսագնտոյն. Քանզի կենդանակերպիցն երկոտասանից վեցն միշտ են ʼի վերոյ կիսագնտիս, և վեցն ʼի ներքոյ, և յոր ժամ մինն ʼի նոցանէ յարևմուտս իջանէ, միւսն ʼի ներքուստ յարևելս ելանէ. ուրեմն երկու կիսագունտքն հաւասարք են միմեանց։

Դարձեալ՝ ʼի ժամանակի գիշերահանգիստութեան, արեգակն զայնքան ժամանակս յամէ ʼի ներքոյ երկրի, որքան ʼի վերոյ, ուրեմն երկոքեան կողմունքն հաւասարք են։

Դարձեալ՝ մեք ընդ ոլորտս տիեզերաց շրջեցաք, և ստուգիւ տեղեկացաք, զի ոչինչ ʼի վերագեցելոյն ʼի ներքոյ մեր գտանի. Այլ երկիր գոյ կախեցեալ ʼի մէջ օդոյ թարց ձեռնկալութեան, անպաստութեան ուրուք. Եւ որպէս ʼի կողմանէ յայսմանէ ոչինչ անկանի ʼի յերկինս, նմանապէս և ʼի կողմանէ յայնմանէ։ Եւ որ թուի մեզ զարմանալի իմն, թէ որպէս բնակիչք այնորիկ կողման ոչ անկանին, այլ ուղղակացութեամբ ձեմեն, գլխովք ʼի յերկինս առուղղեցելովք, և ոտիւք յերկիր. Զի որպէս մեք աստ բնա

կեցե-

կեցեալքս ՚ոչ անկանիմք ՚ի յերկին, այսպէս էն եւ անդ բնակեցեալքն :

Եւ ո՞վ մեք կարծեմք թէ հակոտնեայքն բնակիչքն անդ ՚ի վայր ունելով զգլուխս խրեանց, նոյնպէս եւ նոքա կարծեն վ՞ս մեր : Ուրեմն յայտ է, զի ՚ի տեսանելեացս եւ ՚ի զգալեացս զբաղումն ինչ գիտեմք, որոյ զպատճառն անգիտանամք, սակայն ոչ վ՞այնորիկ ասեմք զնոսա գոլ սնոտիս:

Դարձեալ՝ մեք մարդիկ, զիրաց ա՞ծայնոց զդոյն ինչ գիտեմք, զոր եւ ՚ի ստեղծուածոցս համահաւատեմք, ըստ որում խօսեցաք ՚ի վերոյ մինչ ճառեցաք զգոյութէն ա՞յ : Բայց զեղանակ գոյութէ նորին ոչ մարդիկ, այլ ինքն ա՞ծ միայն գիտէ ; Եւ եթէ ասիցէ ոք, թէ ես ծանեայ զնա, սուտ է, քան զի այն, զոր ծանեաւն է իր ինչ մտացածին, ըստեղծեցեալ, եզերեցեալ, եւ սահմանեցեալ, այսինքն, ՚ի միտի նորին պարագրեցեալ, որ ոչ կարէ գոլ էութի ա՞յ, որ է անեզր, անպարագրելի, անսահմանելի, եւ ՚ի յեղականն իմացողութե մարդկայնոյ անքննելի :

Ուրեմն ոչոք ՚ի ստեղծուածոցս զեղանակ գոյութէն ա՞յ մտօք ըմբռնել կարէ :

Դարձեալ՝ ա՞ծ է անբովանդակելի, զի ՚յոչ ումեքէ պարփակիլ կարէ : այլ բոլորն է ՚ի նո-

լորում աշխարհի, երկորին արտաքոյ բոլորի աշխարհի : գոլով 'ի ներքս, ոչինչ 'ի յիւրոյն անտի արտաքոյ գտանի, եզոլով արտաքոյ ոչ ինչ 'նորին նմա 'ի ներքս:

Դարձեալ՝ հաստատեմք զա̃ծ յաւիտենական գոլ, առաջի որոյ անցեալք, ապառնիք անցանողանք են, և եղեալք եղինելոցք եբրև 'ներկայք. բայց թէ զիարդ իցէ այս անգի տանամք, վ̃ զի անցեալք, և ապագայք համեմատեցեալք ընդ կայութե̃ մերում զէակութի̃ ոչունին, և թէ որպէս երկաքանչիւրքս այսօքիկ առանց էակութե̃ առաջի ա̃յ զգոլ ունիցին, անհնարին թուի մեզ, զոր օրինակ, աշխարհ 'նախքան զլինելն իւր, և օր դատաստանին չևևս եկեալ, առաջի ա̃յ անգամնագանք են, բայց մեզ յոյժ դժուարինք առ'ի յըմբռնել. Զայսոսիկ հաստատեմք հաստատապէս զի էութիւն ա̃յ է իմաստութի̃ 'նորին, որոյ բոլորն միանգամայն է անփոփոխելի, անաճելի, և աննուազելի. Որեմն զորինչ միանգամ տեսանէ, յաւիտենականապէս տեսանէ, ա̃ յառաջքան զլինելն աշխարհի, նոյնպէս և այժմ:

Բայց թէ որով եղանակաւ զիրս չևևս առեղծեցեալս, և զոչէնթակայացեալս իմաստութին ա̃յ 'նկատիցէ, մեզ դժուարին թուի,

և անհա-

անհասանելի իմացողութե՟ :

Դարձեալ՝ գիտեմք զի Ա՟ծ է ամենակարող, մինչզի զբիւր հազար աշխարհս սմին նմանս առեղծագործել կարիցէ . Բայց իմաստունք աշխարհիս այսորիկ ասեն , թէ յոչնչէ ոչինչ լինի , զի ոչ իմացան թէ յոչնչէ իրինչ կարիցէ լինիլ :

Արդ այսոքիկ զորոց մինչև ցարդ ճառեցաք յոյժ դժուարինք են , և երևին մտաց մերոց իբրև անհնարինք . վա՟ զի որովհետև էութին ա՟յ է անհուն , որինչ տեսանի ՚ի նմա , եղիցի նա անհուն , իսկ իմացողութիւնն մեր գոլով դուզնաքեայ , նուազի յայսպիսիս նկատմունս և վերջանայ : Զի եթէ իրք բնականք , և հարկաւորք , զորս ՚ի պատճառաց կարեմք հաստատել , թուին մեզ դժուարինք , որքան դժուարագոյնք և անհնարինք թուիցին մեզ իրքն գերբնականք , զորս իմանալ , և հաստատել ոչ կարեմք :

Դիմեսցուք ուրեմն առ Ա՟ծ , և առ մարգարէս նորին , և խնդրեսցուք ուղիղ սրտիւ , զհաւատս հաստատունս , առ ՚ի խոստովանիլ զճշմարտութիւ զայսոսիկ , մինչև ՚ցհեղումն արեան եթէ հարկ իցէ : Որով թէպէտ իմացւածն դժուարին իմն թուի մարդկային կարողութե՟ , և զբանս առբերեցեալս ոչ կարէ

բովանդակել, վս̃ ոչ անկանելոյ 'նոցին ընդ զգայութե̃, սակայն 'ի ձեռն տեսութեց զգալեաց կերպիւ ինչ կարէ լուսաւորիլ, եւ իմանալ զնոյնս :

Ասեմք ուրեմն թէ զմ̃ ինչ, զոր գիտեմք, եւ ճանաչեմք է դուզնաքեայ մասն ինն 'յանգիտելեացն անտի, քանզի մեք ըստ բնականի մերում կարողութե̃ ոչ զա̃ծ ճանաչեմք եւ ոչ զհրեշտակս տեսանեմք. Եւ ո՞չ էն զարմանք, զի եթէ ի ներքոյ այսորիկ լայնատարածի օդոյս զպարունակեցեալս անգիտանամք, զիարդ գիտիցուք զայնս, որք են արտաքոյ, քանզի ո՛վ է որ գիտէ, եւ ճանաչէ զայնոսիկ, որք են 'ի խորս ծովու, եւ 'ի ծոցս երկրի, ո՛վ ծանեաւ զձկունս համայնս զմեծամեծս, եւ զփոքրկունս, զբնաւս ծառս անտառոց, զբոյսս, զխոտս, զտերևս զծաղկունս, եւ զպտուղս նոցին զանազանս, զտեսակս, եւ զեղանակս բուսանելոյ նոցին, եւ աճելոյ. եւ ո՛վ է որ գիտայ զզօրութիւն, զտարբերութիւն, զյատկութիւն, զօգտակութիւն, եւ զքանակութիւն նոցին :

Ո՛վ 'ի միտ ածել կարէ, թէ 'ի ձեռն նշուլից արեգականն համայնք տունկք, եւ արմտիք բուսանիցին, եւ պտղաբերիցին. Եւ թէ 'ի ձեռն աղդմանց ճառագայթիցն աստեղաց զանազանապէս գունաւորիցին. Եւ կամ ո՛վ թուել կարէ

րէ զշիթս անձրևաց , զտերևս ծառոց , ևզաւազ ծովու :

Ով իմացաւ զաղբիւրս ջուրց, զգետս ևզծովս թէ ուստի ելանիցեն , և՚յո հեղանիցին , ևո՛վ գիտաց զորքանութ͞ի ալեաց ծովու , ևհողոյ երկրի : Ով վերահասու եղև լինելութ͞ե զանազանից գունոց , հոտից ևհամոց . ևո՛վ ծանեաւ թէ զինչ իցէ ’ի վերոյ , և՚ի ներքոյ երկրի : Ով իմացաւ զգանձս հողմոց, ևձեանց , և թէ ուստի հնչիցեն և՚յո՛ դիմիցեն : Գիտեմք զի զօրութ͞բն ա͞յ գործին այսոքիկ ամենեքեան , բայց զեղանակն որով գործէ անգիտանամք : Ոչ ապաքէն զարմանալի իմն է , զի ’ի սակաւու սերմանէ ’յերիկամանց անտի արտահոսեցելոյ կերպանան մարդիք , ևառանց աշխատութ͞ե ձեռաց հիանալեաւ ինիք արուեստագործութ͞բ ձևակերպին աչք, ևգործիք տեսանելոյ , ականջք, ևգործիք հոտոտելոյ . բերան , ևգործիք ուտելոյ , լեզու , ևգործիք խօսելոյ . ձեռք , ևգործիք շօշափելոյ . ոտք ևգործիք գնալոյ , ևայլք զգայութիք ներքինք , ևգործիք նոյին պատշաճաւորք առ զանազանս գործս , թէ առ հոգեկանս , ևթէ առ մարմնականս : Եւ մի թէ իցէ ոք , որ կատարելապէս իմանայցէ զայսոսիկ թէ որպէս եղանիցին , ևկամ գիտայցէ , թէ զիա՛րդ

կեն

կենդանիք ոմանք ծնանիցին առանց սեր-
ման, որպիսիք են որդունքն 'ի մէջ խնծորոց,
կարանրոց, և այլոց իրաց նիւթականաց:
Եւ կամ որպէս 'ի խոտորէ, որ զորդունս
սպանանէ ծնանին որդունք. Ո՞վ ոչ
զարմանայ զծառս, և զտունկս տեսանե-
լով, որոց թէև ամենեցուն հասարակ կերա-
կուր, և այրուստ երկիր միայն է, սակայն
յառաջածեն զտերևս, զծաղկունս, և զմրգս
տարբերս 'յիրերաց. և ո՞վ ոչ հիանայ 'ի դի-
տելն զծաղկունս. և զբոյս երկրի բազմերան-
գօք գունովք զարդարեցեալս, և պճնե-
ցեալս: Արդարև ասեմ, ոչ ոք:

Այս ուրեմն զորինչ գիտեմք հիւլէ իմն է,
իսկ զոր անգիտանամք գերազանցեն զսահմա-
նօք: Դարձեալ՝ զորինչ գիտեմք, անկատա-
րապէս գիտեմք, և մեկուսապէս 'ի ճշմարտու-
թեյ: Զի եթէ ստացելոյն իմաստասիրաց
զունկն դնիցեմք, զչնչութի գիտութե մերոյ
դիւրաւ ճանաչեմք. Զի ասեն իմաստասէրք,
թէ յայնժամ զիրինչ ճանաչեմք, յորժամ զպատ-
ճառս նորին հաստատեալ գիտեմք, ուրեմն
եթէ զպատճառս իրաց անգիտանամք, անգի-
տացեալք միան ևս իրքն գիտելիք: զոր օրի-
նակ, առ 'ի ճանաչել զթուղթս զայս կա-
տարելապէս, պարտիմք գիտել զպատճառս
սորին,

նորին, այսինքն, զնիւթականն, զարարչականն, զտեսակականն եւ զվախճանականն:

Այլ զպատճառս պատճառաց մինչեւ 'յառաջին պատճառն, այլ մեք զոչօք 'ի խոյանէ ամբողջապէս՝ գիտեմք, եւ ճանաչեմք, ուրեմն եւ ոչ զսա, ըստ որում ճանաչելի է ճանաչեմք: Քանզի առ այս պիտոյէ գիտել զէութիւն, զօրութիւն, զքանակութիւն, զառնչութիւն, եզամ ինչ որ է'ի նմա, այսինքն, զնըրմանութիւն, զանձնանութիւն, զհանգիստութիւն եւ զանհանգստութիւն, զտեղին, զկայն, զհամեմատութիւն առ այլս, զմերձաւորութիւն, եզտարակայութիւն: Ըստ այսմ, եւ'ի նկատմունս երկնայինս, 'նորա պիտոյէ զգուշապէս գիտել զբեւեռս հիւսիսային, եւ հարաւային, զհաւասարութիւն տուընջեան, եգիշերոյ, զաստեղս օգտակարս, եզխասակարս, զժամ ծննդեանն, զշրջանակս երկնից, եւ աստեղաց, զհայեցմունս, տրամագծականս: եզտարակացականս, եզայլս սոյին նմանս: Արդ՝ ո՛ է, որ զայս ամ անսխալապէս գիտիցէ, ուրեմն եւ ոչ զիրն ճանաչելի ստուգել կարէ:

Դարձեալ՝ մեք մարդիքս ճանաչեմք միայն զպատահմունս էակաց, եւ ոչ զգոյացութիւս 'նոյին, քանզի ըստ որում իմաստասէրք վկայեն, Ոչինչ է 'ի յիմացողութե, որ ոչ լեալ իցէ

'նախ

նախ 'ի զգայութիւն. իսկ զգայութիւնք զպատահմունս իւրեանց միայն ըմբռնեն, այսինքն, աչք զգոյնս, ականջք զձայնս, բերան զհամս, քիթ զհոտս, շօշափելիք զջերմն, զցուրտն, զթացն, զչորն, զկարծրն, եւ զկակուղն. Արդ այսոքիկ են պատահմունք եւ ոչ գոյացութիւնք, ուրեմն իմացողութիւն մեր ճանաչէ միայն զպատահմունս, եւ զպատկերս նոցին, եւ ոչ զգոյացութիւն:

Իսկ եթէ ասիցէ ոք, թէ իմացողութիւն մեր հետազօտելով զայսպիսի պատկերս, ճանաչէ զգոյացութիւն էակաց միջնորդութեամբ նոցին: Պատասխանեմք առ այս, թէ ուրեմն զիւրն զայն բացարձակապէս ոչ ճանաչէ:

Աստուստ՝ Արիստոտէլէս համարեցեալն 'ի մէջ փիլիսոփայից գերազանց, 'ի սահմանելն զէակս, ո՛չ ասաց թէ զի՛նչ իցեն, այլ թէ զի՛նչ առնիցեն, եւ կամ ուրանօր իցեն: ըստ որում 'ի սահմանելն զբնութիւն ասաց: թէ բնութիւն է սկիզբն շարժման, եւ դադարման իւրն: Եւ թէ հոգին է ներգործութիւն, եւ կերպ մարմնոյ կենդանւոյ: Եւ թէ լոյսն է կերպ թափանցիկի մարմնոյ: Եւ թէ որակութիւն է ըստ որում որակք ասիմք: Արդ՝ ստոյգ է զի շարժումն, եւ դադարումն եղանին 'ի բնութենէ, եւ հոգին է կերպ մարմնոյ կենդանականի, այլ

ոչ

ոչ կենդանութե՛ անընդունակի : այսպէս լոյսն լուսաւորէ զմարմինն թափանցիկ, այլ ոչ զմարմինն անընդունակ լուսոյ : Բայց թէ զինչ իցէ որակութիւն, էութիւն, եւ հոգի եւ լոյս, ոչ բացայայտեաց, քանզի ոչ էտես զգոյացութիւն իւրաց, այլ զպատահմունս եւ զպատկերս, որովք գոյացութիւն ոչ իմանի կատարելապէս :

Ասեմք ուրեմն, թէ զորինչ աստանօր շարագրեցաք, եւ զորինչ թողաք համառօտութե՛ աղագաւ, դժուարինք են, այլ ոչ անհընարինք, քանզի սոցա ամենեցուն ընթակայութիւն ՚յաշխարհի աստ գոյ յայտնապէս : զորս առ ՚ի յիմանալ, թէպէտ աշխատեցան մարդիք ՚ի զանազանս խուզմունս եւ հարցաքննութիւնս, սակայն կատարելապէս վերահասու լինել եւ ճանաչել ոչ երբէք կարացին : Ուստի ասէ Սողոմոն, ի գիրս Եկլեզիաստեայ ՚ի գլուխն 3. ՚ի թիւն 10. տեսի զտառապանս, զորս ետ ա՟ծ որդւոց մարդկան, զի զբաղիցին ՚ի նոսին : Եւ ՚ի թիւն 11. Զբնաւս բարիս արար ՚ի ժամանակի իւրում, եւ զաշխարհ աւանդեաց տրամախոհութե՛ նոցին, զի մի գտանիցէ մարդ զգործն, զոր գործեաց ա՟ծ ՚ի սկզբանէ մինչեւ ՚ի վախճան : Եւ արդ արեւ ճշմարիտ է այս, զի իմաստունք աշխարհիս այսո-

րիկ

րինկ մինչեւ 'ցայսօր զհակառակս, եւզանհնա-
րինս անթուելիս խօսեցան ընդէմ միմեանց,
եւմինչեւ 'ցկատարած աշխարհիս վիճաբանու-
թիք նոցին ոչէն սպառելոցք, զի զգործս
զորս անբաւ իմաստութիւն այ գործեաց, որ-
դիք մարդական ոչէն բովանդակելոցք: Ուրեմն
զորինչ համարիմք գիտել, խուն ինչ մասն է
անգիտելեացն: Ապա ուրեմն թէ զիրս առօ-
րանկեցեալս զգայութեց մերոց ոչ իմանամք
սակս նուաստութե ճանաչման մերոյ, զիարդ
իմասցուք զայնոսիկ, որք ընդ զգայութեք մե-
րովք ոչ անկանին: Եւ եթէ զայնոսիկ, զորս
տեսանեմք, անկատարապէս գիտեմք, եւան-
կատարապէս առհաւաստեմք, որպէս կա-
րասցուք կատարելապէս իմանալ, եւպատճա-
ռօք բանի ցուցանել զայնոսիկ, զորս ոչ տե-
սանեմք: Եւ եթէ զեակս, զորս ստեղծեալ
ամենակարօղն ած ոչ կարէ բովանդակել
մարդ, ըստ Սողոմոնի, զիարդ զստեղծօղն
նոցա բովանդակել մարթիցի: Եւ եթէ զմարդն,
որ է արարած ինչ, ոչ ճանաչեմք իսկապէս,
զիարդ զարարիչն նորին անտեսանելի ճանա-
չել կարիցուք: Եւ եթէ մարդ փոքրագունիւ
իմացողութեբն իւրով, որով զստեղծուածս
բնաւս գերազանցէ, զգործս այ ոչ կարէ համ-
ըմբռնել, զիարդ զէութիւն այ, եւզամենա-

կարո-

կարողութիւն ՚նորին, զանբաւութիւն, եզիմաստութիւն ՚նորին, որք գերազանցեն զբնաւս յարացոյս եզնմանութիւս, եզբնաւս իմացողութիւս ստեղծականս, բովանդակել կարիցէ ։ Ուստի որ առ՚ի յիմանալ զԱծ զպատճառս խնդրէ, եհամարի թէ իմացողութեամբն իւրով զնա չափել կարիցէ իբրև զստեղծական ինչ, ՚նա ոչ գիտէ թէ զինչէ անբաւն եանճառելին ; Գիտասցէ ուրեմն իւրաքանչիւրոք ՚նախ զինքն թէ զինչիցէ, ապա սկսանիցի ճա՚նաչել եգիտել զԱծ ։

Պատասխանի Երկրորդ ։

Պատասխանեմք երկրորդ, իմաստասէրք աշխարհիս այսորիկ ամէն հասարակօրէն, թէ ոչոք կատարելութիւն գոլ կարէ ՚իպատճառեցելում իմիք, որ ոչ իցէ ՚նախապէս, եգերազանցապէս ՚ըն պատճառի իւրում արարչականի. Զանզի որ ինչ է ՚իպատճառեցեալն, ունի զայն ՚իպատճառէն իւրմէ առընկալեալ ։ Արդ զոր ինչ ոչունի պատճառ՚ն, զայն ոչ կարէ տալ պատճառեցելոյն. Ուրեմն կատարելութիւնք, որք գտանին ՚իպատճառեցելումն

՚նախ ,

նախ գոլ պարտին 'ի պատճառին իւրում։ բայց այլապէս 'ըն պատճառում, եւ այլապէս 'ըն պատճառեցելում։ վ՛ն զի 'ի պատճառեցելն համայնք կատարելութիւնք խառնեցեալք են պակասութբ իւիք ։ իսկ 'ըն պատճառում թարց պակասութե ։ Արդ քանզի ա՛ծ էնախկին եւառաջին պատճառ, եւ պատճառ պատճառաց. Ուրեմն կատարելութիւնքն, որք գտանին 'ի ըստեղծուածս, 'յա՛յ են, քանզի ոչոք կարէ տալ զայն, զոր ոչ ունի ։

Աստուստ զկատարելութիւնս բազումս, որք են 'ըն յաստուծում, 'ի ստեղծուածոյս ճանաչեմք եւիմանամք. զո՛ր օրինակ, ճանաչեմք զա՛ծ գոլ ամենակարօղ, եամենիմաստ, քան զի կատարելութիւնք, որք են 'ի ըստեղծուածս, նախապէտապէս պարտին գոլ 'ներ ստեղծողին ։ Բայց 'ի ստեղծուածս միշտ են մասնապէս, եանկատարապէս, իսկ 'ըն յաստուծում ամբողջապէս, եկատարելապէս ։ զի որինչ 'ի ըստեղծուածս է պատահմունս, 'ներ ստեղծօղին է գոյացութի։ եորինչ 'իյէակս է եղերեցեալ, 'ներ արարչագործին է աներզր ։ Ըստ այսմ են եծնունդն եծնանիլն իյստեղծուածս, որք են կատարելութիւք ոմանք տրեցեալք 'յա՛յ, որոյ հրամանաւն աճին եբազմանան էակք, ո՛պ գրէ Մովսէս

Մօվսէս 'ի գիրս ծննդոց 'ի գլուխն առաջին 'ի թիւն 27. թէ Եստեղծ ա̄ծ զմարդն 'ի պատկեր իւր, 'ի պատկեր ա̄յ Եստեղծ զնա, արու և էգ Եստեղծ զնոսա, և օրհնեաց զնոսա ա̄ծ, և ասէ, աճեցարուք և բազմացարուք և լցէք զերկիր, իսկ 'ի գլուխն 15. 'ի թիւն 2. գրէ այսպէս, Եւ ասաց Աբրահամ, տ̄ր ա̄ծ զի՞նչ տացես ինձ, ես երթայց առանց ազատից, և որդի հօգաբարձուի տան իմոյ այդ Եղիազար դամասկեան: Յաւել ևս Աբրահամ, իսկ ինձ ոչ Ետուր զսերմն, և ահա ընտոծինն իմ ժառանգ իմ եղիցի: Եւ վաղվաղակի խօսն ա̄յ եղև առ նա ասելով, ոչ եղիցի այս ժառանգ քո, այլ որ ելանէ 'ի յորովայնէ քումէ, զի՞նքն ունէսցես քեզ ժառանգ: Արդ ասեմ թէ խնդիրքն և հայցուածքն Աբրահամու էին 'յա̄յ զի շնորհիցէր նմա զծնունդ, որ է կատարելութի̄ւն իմն, իսկ ա̄ծ մխիթարեաց զնա պարգևելով նմա զզաւակ: Ուրեմն ծնունդ և զաւակք կատարելութի̄ւք են և պարգևք 'յա̄յ բարձրելոյն, Այս ուրեմն և 'յաստուծում պարտին գոլ:

Դարձեալ զոր ա̄ծ արարածոյս պարգևէ, է զօրութի̄ւ և գիտութի̄ւ նսէր ծնողին և ծնիցելոյն. Ուրեմն և ինքն նախապէսապէս ունի զայսոսիկ, քանզի եթէ ոչ ունէր, ոչի՞նչ կերպիւ կարէր տալ սոեղծուածոյս:

Ասիցէ ոք թերևս թէ ՚ի յարարածս է այլինն զօրութի, այլինն գիտութի, և այլինն սէր ։ Պատասխանեմք առ այս , թէ ուրեմն ա̅ծ ոչ ունի զկատարելութիս զամենայնս , ուրեմն արարածք ոչ ՚յա̅յ , այլ ՚յայլմէ ումեքէ ունին զայսոսիկ, որ հզօրագոյն իցէ քան զա̅ծ . Բայց այսէ սուտ , և անտեղի , քանզի ա̅ծ է լրումն ամենից կատարելութեց , ուրեմն ոչինչ կատարելութի գոյ ՚յարարծս, որ ոչիցէ բաշխեցեալ ՚յա̅յ իբր ՚ի նախկնագունեղէ և ՚յընթհանրէ պատճառէ . Ապա ուրեմն ծնունդն ծնանիլն, որք գտանին ՚ի յստեղծուածս , գոն և ՚ըն յաստուծում ։ Ուստի մարգարէն Եսայիաս խօսելով ՚ի բերանոյ ա̅յ ՚ի գլուխն 66. ՚ի թիւն 9. ասէ, Միթէ ես որ այլոց զծնունդ շնորհեմ, ես ինքն ոչ ծնանիցիմ ։ Արդ թէպէտ իրաւի է և հաւաստի զի ՚ըն յաստուծում գոյ ծնունդ ևծնելութի . Սակայն զճշմտարտութիս զայս եթէ ոչէր ինքն յայտնեալ մեզ , ոչ իմանայաք . բայց որով հետև յայտնեաց մեզ , ՚ի հարկէ պարտիմք հաւատալ և պատճառօք հաստատել, թէ կատարելութիս այս , ոչ միայն ոչէ անհնարին , զի իցէ ՚ըն յաստուծում , այլ և յոյժ պատեհագոյն նմին ։

Իրաւի է և զի զեղանակ ծննդեան ևծնելութե իմանալն է դժուարին ինն , քանզի ՚յաշ-

խարհի

խառնի այսպիկ տեսանեմք լինիլ զծնելութ̅ին
՚ի շարադրութ̅է արուի ևիգի . և ոչ այլապէս ։
Բայց քանզի ա̅ծ է ամենակարող անմար-
մին ներգործելով հոգի , ուստի յոյժ դժուա-
րին է ՚ի միտ ածել , թէ զիարդ ՚ի նմին ոչէ
էակ ինչ զուտ ևպարզագունեղ ծնունդ ևծնե-
լութ̅ի լինիցի ։
Զիեթէ զնոյն եղանակ ծննդեան ևծնելու-
թ̅ե վարկիցիմք ՚ըն յաստուածում , զոր տեսա-
նեմք ՚ի յարարածս , ոչ միայն դժուարագոյն
ևանհնարին եղիցի վերահասութ̅ին, այլև խօ-
կումն զնմանէ եղիցի հայհոյութ̅ի ։
Վ̅որոյ վերածել պարտիմք ՚ի միտս զայն, զոր
յառաջագոյն ասացաք,թէ կատարելութ̅իք,որք
գտանին ՚ի յստեղծուածս, այլապէս են ՚ըն յաս-
տուածում, քանզի ՚ի սոսա են եղերեցեալք, ևժա-
մանակաւորք , անկատարագոյնք ևհունաւորք.
իսկ ՚ի ներ աստուածում անժամանակք ևան-
բաւք , անճառելիք , և՚յամենից անկատարու-
թ̅եց մեկուսացեալք ։ Արդարև նուաղի լեզու-
մեր ՚ի ճառելն զայսպիսեաց. ուստի զայս միայն
ասեմք , թէ վարկելն զկատարելութիս՚ըն յաս-
տուածում բատ որում են ՚ի յստեղծուածս ,
է մեծ հայհոյութ̅ի ։
Ուրեմն զորինչ համեմատաբար խօսիմք կամ
խորհիմք զա̅յ բարձրելոյն , զմիտս մեր ՚յամե-

նից անկատարութ̅եց արտաքարշել, և վերամ-
բառնալ պարտիմք: Ապա ուրեմն մինչ ասեմք
թէ 'ի՛ն յաստուծում գոյ ծնունդ, ածնելութ̅ի,
ոչ իմանամք ըստ որում են 'ի յստեղծուածս.
Զանզի թէպէտ ծնունդն է կատարելութ̅ի
ւն, բայց 'ի ստեղծուածս ոչէ ազատ 'յանկա-
տարութ̅եց, որով հետև է մարմնական, ևնիւ-
թական, ժամանակաւոր ևտեղական, 'ի յոչնչէ
'ի գոյութ̅ի եկեալ, և'ի մասնակցութ̅է ծնողաց
զգոյութ̅ի առեալ; 'Նորում մասնակցութ̅ե ոչ
զբոլոր գոյացութ̅ի, ևզգոյն 'ի հօրէն անջատե-
ցեալ, ևառանձնացեալ առընդունի որդի, այլ
զմասն իմն, ուստի' ևժամանակաւ է յետ քան
զէութ̅ի հօր իւրոյ. ևքանակութ̅ե փոքրագոյն
քան զնա: որ ևսակաւ առսակաւ զաճումն առ-
նու, և'ի ծնանիլն ո՛չ իսկոյն ընդունի զզօրու
թ̅ի, և ո՛չ զխօսս, ո՛չ զիմացողութ̅ի և ոչ զգը-
նայս: Բայց ծնունդն, որ է 'ի՛ն յաստուծում,
է 'ի բաց անջատեցեալ 'յամենից պակասութ̅եց,
որովհետև է հոգևոր և ոչ մարմնաւոր, անքա
նակ ևանժամանակ, անտեղի ևանսկիզբն, ան-
բաւ ևանվախճան; 'Նորում ծնօղն 'ի յաւիտե-
նից մինչև 'ցյաւիտեանս միշտ ևանհատաբար
ծնանի զորդին, որ և ոչ զանցեալ ունի և ոչ զա-
պառնի, այլ ըմ ժամանակ առաջինի էներ-
կայութ̅ի. Եւ հետևապէս որդին 'նր միածին

է ամե-

է ամենակատար , ոչ մասն 'ի գոյացութե՟ հօր ,
այլ բոլոր գոյացութի՟ , և էութի՟ նորին , 'ի յէ-
ութե՟ հօր առաջս ոչ ելանէ , այլ կայ յարա-
մնայապէս 'ի նմին :

Քանզի էութի՟ն ա՟յ է անեզրական , և թէ-
պէտ որդին ոչէ անձն հօր , սակայն էութի՟
նո՟ր նոյն է ընդ հօր , և թէպէտ որդին ոչէ հայր ,
սակայն է 'ի յէութե՟ հօր :

Այլև հայրն ոչէր երբեմն ա՟ծ և ոչ հայր , այլ
միշտ ա՟ծ , և միշտ հայր , և հետևապէս որդին
ոչէր երբեմն մանուկ , և յետոյ զարգացաւ , այլ
միշտ կատարեալ , և անբաւ , և հաւասար հօր ,
և ոչէր երբեմն տկար , և յետոյ զօրացաւ , այլ
միշտ ամենազօր , ո՟պ և հայրն : ոչէր երբեմն տը-
գէտ և յետոյ իմաստնացաւ , այլ միշտ ամենի-
մաստ ո՟պ և հայր :

Եւ ոչ երբեմն անխօս , և յետոյ սկսաւ խօ-
սիլ , այլ միշտ բարբառ նորան ա՟յ հօր : ոչ
ստորանկեցեալ ժամանակի , և ոչ սահմանա-
կեցեալ 'ի տեղւոջ , այլ գեր քան զա՟մ ժամա-
նակ և զտեղի : Այլև ոչ ստեղծաւ 'ի յոչնչէ ,
և ոչ արարաւ 'նայլմէ էութե՟ , այլ ծնաւ 'ի յէու-
թե՟ հօր , ոչ ըստ մասին հաղորդակցելով , այլ
բոլորի էութե՟ հօր համագոյակից գոյով :

Այսպա ուրեմն ամենևին և 'յա՟մուն ա՟յ հօր հա-
ւասար , յաւիտենական , ամենակարող , ան-

չափ, ևանվախճան ո՛չ ևհայրն ած. ոչ իւիք պակաս քան զհայր, ևկամ այլիւն 'ի նմանէ, այլ ընդ Նմա մի ած ամենակատար, ամենաբարի, ևամենամեծ:

Զսոյն ասեմք և յաղագս հոգւոյն սրբոյ, որ է հոգի այ և ոչ որդի, զի 'ի միում էութե ածայնում զերիս անձինս խոստովանիմք, այսինքն, զհայր ևզորդի ևզհոգին սբ, ո՛չ ասացաւ 'ի վերոյ, քանզի 'ի միում աստուծում գոյ կարողութի, ևիմաստութի ևսէր. Զկարողութին հայր գոլ իմանամք, զիմաստութին որդի ասեմք, ևզսէրն հոգի սբ անուանեմք: Եւզորինչ խօսեցաք 'ի վերոյ յաղագս կարողութե իմաստութե, ևսիրոյ. Ասա զնոյնս յաղագս հօր, ևորդւոյ ևհոգւոյն սրբոյ ասեմք. Եւ ոչ միայն զանուանս լոկապէս իմանամք, այլ ևզնշանակութիս անուանցն ճշմարտապէս խոստովանիմք, ըստ որում 'ի մարգարէին մեզ աւանդեցաւ. Ուրեմն ած ունի զծնունդ, ևզառհման ծննդեան: Եւ այս յայտնապէս ցուցանի 'ի բանից իմաստասիրացն, որք ասեն, թէ ծնունդն է յառաջագայութի կենդանւոյ 'ի կենդանւոյն, միաւորեցելոյ 'ի նմանութի նոյնոյ բնութե, 'ի զօրութե էլողութեն: Արդ' ուր միանգամ գտանի սահմանս այս, անդ 'ի հարկէ եղիցի ևծնունդ, ևհետևապէս ճշմա-

րիտ

րիտ ծնօղ և ճշմարիտ ծնիցեալ, այսինքն, ճշմարիտ հայր, և ճշմարիտ որդի: Բայց առ այս 'ի միտ ածցուք զառաջագոյն՝ ասացեալս յաղագս էութեան Աստուծոյ, որ ունի զերկուս յառաջագայութիւս, որոց մին է յառաջագայութիւն իմաստութեան, իսկ միւսն յառաջագայութիւն սիրոյ 'ի կարողութենէ, և 'ի յիմաստութենէ. Եւ այսոցիկ յառաջագայութեանց զ'ի նոցունց և զ'ի նոսա գոլն 'ի յայնցանէ, որք 'ի մեզ են յայտնապէս իմանամք: Արդ՝ յառաջագայութիւն իմաստութեան 'ի մեզ, է ըստ այսմ սարասի, զի իմացողութիւն մեր 'ի ձեռն պաշտամանց զգայութեանց զպատկերս իրաց, զորս արտաքուստ 'ներընդունի, յղանայ 'ի յինքեան, և երևակերպէ ևըստ նոցին զբան ինչ յառաջբերէ, որ է նման իրին իմացելոյ, ուստի և յառաջբերեցեալն բան զիրն իմանեցեալ երևակերպէ նցուցանէ:

Ըստ այսմ և Աստուած հայելով 'ի յէութիւն իւր տեսանէ 'ի նմա զբնաւս իմանալիս, և ասէ թէ ես այս ինչ եմ: և 'յասելն զբան իւր յառաջբերէ, և այս արտաբերեցեալ բանս նմանէ բոլորովիմբ իմացմանն, զի զնոյն երևակերպէ նցուցանէ: Ուստի բանն այն յառաջեկեալ ասի, զի յառաջագայի 'ի յիմացողէ և 'յասողէ: Բայց ասացեալն և ասօղն, յառաջածեցեալն և յառաջածօղն առնչաբար հակակայ-

ին, և հակակայելով համազանազանելն։ Ու-
րեմն այլ է ասօղն և այլ ասացեալն, այլ է յա-
ռաջածօղն, և այլ յառաջածեցեալն, քանզի
հակակայից պարտէ գոլ միշտ երկու։ Ու-
րեմն, և յառաջածօղն և յառաջածեցեալն
եղիցին երկու։ Ապա ուրեմն ա̃ծ, որ է յառա-
ջածող, և բանն իւր որ է յառաջածեցեալ են
երկու, զանազանութ̃բ առնչականաւ հա-
մազանազանեցեալք։ Նմանք միմեանց ըստ
էակութե̃ բանի։

Բայց բանն ա̃յ յառաջածեցեալ ոչէ պա-
տահմ̃բ, ըստ որում է ՚իմէզ, Զի ա̃ծ զիմաս-
տութի իւր ոչ ներընդունի յարտաքուստ ո̃ք
մարդիք, այլ ՚ի իւրմէ էութե̃, և զորինչ գիտէ,
՚յինքենէ գիտէ. և զայս վկայեն համայնք իմաս-
տասէրք։ Ուրեմն բանն այն է ՚ի գոյացութե̃
ա̃յ, և ՚յինքեան ենթակայացեալ։ Ապա ուրեմն
է ա̃ծ։ զի որինչ գոյ ՚ի յաստուածում, ա̃ծ է;
Աստուած բանն ա̃յ, գոլով յառաջածեցեալ
՚յա̃յ, է նման իրին իմացելոյն, և գոլով բան
ա̃յ, է ա̃ծ, և ինքեամբ ենթակայացեալ։ Եւ
ըստ այսմ բանն ա̃յ, գոլով ՚յա̃յ յառաջեկեալ,
կենդանի է, սակս յառաջագայութե̃ իւրում
՚ի կենդանւոյ միացելոյ ՚ի նմանութի̃ նոյնոյ
բնութե̃. ՚ի զօրութե̃ եղողութե̃ իւրոյ։ Ապա
ուրեմն յառաջագայութի բանին ա̃յ է ծնմա-

րիտ

րիտ ծնունդ: Եւ բանն յառաջեկեալ է ճշմարտապէս ծնիցեալ, որդի: իսկ ա̅ծ յորմէ է բանն յառաջեկեալ, է ճշմարիտ ծնօղ, և հայր:

Ուրեմն յառաջագայութ̅ի բանին ա̅յ է ծնունդ, և՛ յամենայ անկատարութ̅եց զատեցեալ, և բացորոշեցեալ: Վասնզի սահմանագրութ̅ի ծննդեանն ա̅միւ յարմարի նմին, զի զորմէ ևստորոգի սահմանն, ստորոգի և զնմանէ սահմանեցեալն:

Զոր օրինակ, կենդանի բանականն որ է սահման մարդոյ, զորմէ ևստորոգիցի, ստորոգի և մարդն:

Արդ՝ սահմանագրութ̅ի ծննդեանն է ելումն կենդանւոյ 'ի կենդանւոյն միացելոյ 'ի նմանութ̅ի նոյնոյ բնութ̅ե 'ի զօրութ̅ե ելողութ̅ե իւրոյ, ոպ̅ ասացաք 'ի վերոյ: իսկ յառաջագայութ̅ի բանին ա̅յ է ելումն կենդանւոյ 'ի կենդանւոյն միացելոյ 'ի նմանութ̅ի նոյնոյ բնութ̅ե 'ի զօրութ̅ե յառաջագայութ̅ե իւրոյ, ուրեմն յառաջագայութ̅ի բանին ա̅յ է ճշմարիտ և իսկական ծնունդ:

Դարձեալ թէպէտ ծնունդն 'ի յստեղծուածս է կատարելութ̅ի իմն ճշմարիտ, սակայն է խառնեցեալ ընդ անկատարութիւս բազումս, զի ծնեցեալն 'ի նոսա ոչ առնու զբովանդակութ̅ի ծնողին իւրոյ, այլ ոչ կարէ վաղվա-

ղակի

դակի հանդիտանալ կատարելութե̅ նորին, ո՛չ ըստ մարմնոյն, ո՛չ ըստ մտացն, ո՛չ ըստ զգայութե̅ցն, ո՛չ ըստ խօսիցն, ո՛չ ըստ գործոցն, ո՛չ ըստ վարուցն, և ոչ ըստ այլոց իրաց։ Բուստի թէպէտ նմանի ծնողին իւրում ըստ տեսակին, սակայն բիւրովք այլովք տարաձայնի, և հակակայի նմին։ Բայց յաւիտենական որդին ա̅յ, հօր իւրում ամենևին է հանգէտ, և հաւասար, և բոլորովիմբ նման, բայց ՚յայնմանէ, զի ոչէ հայր, ո̅պ այլուրեք ասելոցք եմք։

Արդ՝ վ̅զի որդին ա̅յ է բանն ա̅յ, իսկ իմանալն ա̅յ զէութ̅ի իւր, ասելն թէ ես այս ինչ եմ, է ծնունդ բանին, եւ զի ա̅ծն հայր ՚յաւիտենից մինչև ՚յաւիտեանս միշտ իմանայ զինքն ասէ, թէ ես այսինչ եմ, ուրեմն բանն ա̅յ միշտ ծնանի։ քան զի ա̅ծն հայր ոչ երբէք դադարի ՚յիմանալոյ, զի եթէ դադարիւր երբեմն, պակասիւր ՚ի գոլոյն։ բայց այսէ անկարելի ո̅պ ՚ի վերոյ ասացաւ, ուրեմն ա̅ծ հայր միշտ իմանայ, և միշտ զբան իւր յառաջածէ։

Այլև ա̅ծն հայր զինքն ամենակարօղ իմանալով, զբանն ա̅ծ ևս ամենակարօղ երևակերպէ, ուրեմն բանն ա̅յ է անբաւ, և նոյն ընդ բոլորի էութե̅ հօր, և գոլով յաւիտենական միշտ ծնանի, և միշտ ծնանիցի թարց

տար-

տարբերութե ժամանակի, որոյ ոչ անցեալ գոյ և ոչ ապագայ, այլ գոլով՝ներկայ զբնաւս յաւիտեանս 'ի միում կիտի պարունակէ: Եւ այս է բան մարգարէին, որ ասէ 'յարգանդէ յառաջքան զարուսեակ ծնայ զքեզ: Եւ թէ որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ: Արգանդն է էութիւն այ, կամ իմացումն նորին: Իսկ յառաջն նշանակէ զյաւիտենականութիւն, որ 'ի վերէ քան զբնաւս ժամանակս, Այսօրն նշանակէ զներկայութիւն յաւիտենականութեն, որ միշտ ներկայ է, և ներկայագոյն քան զայսօրն, զի ոպ ասացաք, ած մշտնջենաւոր է, ոչ զանցեալ ունի և ոչ զապառնի: Ուստի որ ոք զայսոսիկ իմանայ, ոչ երբէք երկբայի 'ի վր ասացելոյն յաղագս յաւիտենականին ծննդեանն բանին այ. Եւ հետևապէս հաւատայ 'ի քս, խոստովանի և քարոզէ զբանն այ գոլ ճշմարիտ և կատարեալ որդի այ, և բոլորովիմբ նման հօր, յաւիտենական, անչափ, անեղ, և 'յամենայն հաւասար նմին:

Իսկ միւս եղողութիւն, որ յառաջագոյն 'ի զօրութե և 'յիմաստութե, ըստ որում ասացաւ, զորև այսպէս և ըստ այսմ սահմանի բացայայտեմք: Յորժամ կամիս մեր միտք 'ի խնդրելի և 'ի սիրելի ինչ, այն՝ որով միտք, է սէր, որ դրդէ զսիրողն 'ի յստիպումն 'ի շարժումն, և 'ի հա-

և'ի հակամիտութիւն. Բայց սէրն և սիրողն տարբերին ի'միմեանց. Այսպէս Ա՟ծ զինքն կատարելապէս իմանալով գոլ ամենաբարի, ամենևիմբ նյա՟մուսուտէք զինքն կամի և սիրէ, վ՟ն զի բարի է, ուստի ևբղխէ 'յինքենէ զսէր իմն, այսինքն, զայն, որով զինքն սիրէ. Բայց բղխօղն ևբղխեցեալն տարբերին 'ի միմեանց, և առնչաբար հակակային, զի հակակայից միշտ պարտէ գոլ երկուս. Ուրեմն այլ է Ա՟ծ սիրօղ, և այլ է սէրն 'ի նմանէ բղխեցեալ: Աստուստ ունիմք զերկուս հակակայութիւս առնչականս 'ի յէութե՟ն Ա՟յ, որոց մինն է Ա՟յ սառղին, ևբանին ասեցելոյն: իսկ միւսն է Ա՟յ սիրողին, և սիրոյն բղխեցելոյ: Ապա ուրեմն հակակայութիւք այսորիկ առնչականք ելողութեյն, այսինքն, 'յայլմէն և այլն 'յԱ՟ծ է, և ոչ գոյ այլ բաց 'յասացելոյն:

Դարձեալ, ոչ է բնութի՟ սիրոյ զի'նմանիցի բղխողին իւրում, ըստ որում բանն նմանէ ասողին, Այլ յատկութի՟ էն՟ր միայն քարշել և խոնարհեցուցանել զսիրօղն առ սիրեցեալն. Ուստի սէրն Ա՟յ բղխեցեալ 'ի նմանէ, ոչ կարէ ասիլ որդի Ա՟յ, ո՟պ ասի բանն Ա՟յ, այլ մանաւանդ շունչ հոգի Ա՟յ վերակոչի:

Վասնզի 'ի բնութե՟ իւրմէ ունի, զի շնչիցէ, և շարժիցէ զսիրօղն, և առ սիրեցեալն դար-

դարձուցանիցէ, ևսակս այսորիկ շունչ ևհո-
գի ո՟ր անուանակոչի :

Դարձեալ սէրս այս, բղխեցեալ 'յա՟յ ոչ է պատահումն, վ՟ զի ոչ ելանէ 'ի գիտութէ իրաց յարտաքուստ բերեցելոց, ո՟պ հանդիպի 'ի մեզ, այլ 'ի ծանօթութէ էութեան ա՟ծայնոյ եգիտեալեայն 'ինմա :

Այլև ոչէ պատահումն, գոլով'ըն յէութեն ա՟յ, զի որինչ է'ըն յաստուածում, ա՟ծ է : Ուրեմն սէրն ա՟յ, է 'ի գոյացութեն ա՟յ ևինքնագոյ . Ուրեմն սէրն ա՟յ բղխեցեալ 'ի նմանէ զերկուս ունի զդիտմունս, մինն է'ի կողմանէ իւրմէ, որով զսիրօղն տանի առ սիրեցեալն : իսկ միւսն 'ի կողմանէ ա՟յ սիրողին, ըստ այսմ ինքն սէրն ա՟ծ է : Ապա ուրեմն յայտնապէս տեսանի, թէ որ աղագաւ բանն ա՟յ, ասի որդի ա՟յ, իսկ սէրն ոչ կոչի որդի ա՟յ, այլ հոգի ա՟յ : Քանզի բանն 'ի զօրութէ ելողութե իւրոյ 'նմանէ իւրում ասողին, ըստ սահմանագրութե ծննդեանն : իսկ սէրն 'ի զօրութէ բղխմանն իւրոյ յառաջադայի ո՟պ շարժողութի եշունչ . Եւ երկոքեանն սոքա ա՟ծ են ո՟պ ասացաւ : Ուրեմն պատեհաբար ևվայելչաբար մարգարէքն ա՟յ ուսեալք 'ի նմանէ վ՟ բանին, ևվ՟ սիրոյն ա՟յ խօսեցան . Զբանն որդի, եզսէրն հոգի

ո՟ր

ս՟բ անուանակոչելով:

Այլ յայտնի է թէ ո՛չ աղագաւ առըն-ձեռութիք այսոքիկ, ամենակարող, յաւիտե-նական, բարի, անչափ և այլք, ոչ ասին որդի և ոչ հոգի ս՟բ, և ոչ բազմացուցանեն զանձնաւո-րութիս, ո՟պ էն բանն ասէրն: Քանզի ա՟ծ, զայլ իմն զանազանութ՟ի ո՛չ ունի բաց 'յառըն-չականէ ելողութ՟էն, որէ միոյն 'ի միւսն, կամ 'յորմէ այլն, որև է կրկին ըստ կրկնոյ շարժմանն, որոց մինն է 'ի յիմացմանէ առ'ի յիմանալ, ըստ այսմ բանն ծնիցեալ լինի: Իսկ միւսն է 'ի կամաց առ'ի կամիլ և առ'ի-սիրել, ըստ այսմ սէրն բղխեցեալ լինի: Եւ բաց 'յայսցանէ երկուց շարժողութեց այլ իմն շարժումն 'ըն հոգւոյ իմացականում ո՛չ գտանի: ուրեմն և ոչ առընչական զանազա-նութ՟ի էլիցի:

Արդ՝ վ՟ս զի վերոգեցեալքն առընձեռու-թ՟իք ո՛չ ըստ իմացման, և ոչ ըստ կամաց յառաջագային ըստ որում են բանն ասէրն: ուրեմն ոչ որդի և ոչ հոգի ս՟բ ասիլ կարեն, և այսպէս ոչ բազմանան անձինքն ա՟ծայինք: Ուստի ուր հայր և որդի և հոգին ս՟բ ոչ նկա-տեն զառընչական տարբերութ՟ի ելողութ՟ե անդ ա՟միւ մի են: վ՟ս որոյ ասեմք թէ հայր է ա՟ծ: որդի է ա՟ծ: և հոգին ս՟բ է ա՟ծ: անձինք երեք.

երեք. և ա̄ծ մի: Անձինք երեք, սակս առնչականի հակակայութե̄ն, իսկ ա̄ծ մի՝, սակս միոյ բնութե̄ էութե̄ն:

Զսոյն ասեմք և սակս այլոց առընձեռութե̄ցն ա̄յ, այսինքն, հայր է ամենակարող. որդի է ամենակարող, և հոգին ս̄բ է ամենակարող: բայց ոչ երեք ամենակարողք, այլ մի ամենակարող:

Սոյնպէս հայր է յաւիտենական, որդին է յաւիտենական, և հոգին ս̄բ է յաւիտենական, բայց ոչ երեք յաւիտենականք, այլ մի յաւիտենական: Այսպէս հայր է անչափ, որդին է անչափ, և հոգին ս̄բ է անչափ, բայց ոչ երեք անչափք, այլ մի անչափ: Վասն զի ՚ի միջ ամենակարողութե̄ն, յաւիտենականութե̄ն, և անչափութե̄ն ոչ գոյ առնչական հակակայութե̄ի ելողութե̄:

Զի ըստ կանոնին հաստատանոյ, զոր ունիմք ՚յա̄ծ, և առ Նորին առընձեռութիս, ուր առնչական հակակայութի ոչ գտանի, անդ մի են երեք անձինքն; իսկ ուր գտանի, անդ զանազանին:

Ուստի անձն հօր, ոչ է անձն որդւոյ, և ոչ անձն հոգւոյն սրբոյ, սակս հակակայութե̄ առնչականի ելողութե̄ն; բայց որինչ է հայր, է և որդին և հոգին ս̄բ, սակս ոչ գոլոյն ինմա

առնչականի հակակայութե՟ : Նմանապէս անձն որդւոյ, ոչէ անձն հօր, և ոչ անձն հոգւոյն սրբոյ, սակայն որինչ է որդին, է ևհայր ևհոգին ս՟բ : Այսպէս անձն հոգւոյն սրբոյ, ոչէ անձն հօր, և ոչ անձն որդւոյ : սակայն որինչ է հոգին, է ևհայր ևորդին :

Եւզի բազմաւորութի՟ անձանց այսոցիկ զոչ-ինչ պակասութի՟ ևզանկատարութի առբերէ քութէն ա՟յ գոլով առնչական և ոչ ընդարձակ, քանզի եթէ գոյր ընդարձակ, առբերէր զան-կատարութի՟ իմն, զի բազմաւորութին ընդար-ձակ, է ընդունակ բաղադրութե, իսկ բազ-մաւորութին առնչական, ոչէ ընդունակ բա-ղադրութե՟ իմիք : ուրեմն զանկատարութի՟ ինչ, ոչ կարէ առբերել :

Եւզի բաղադրութի՟ մասանց առմիմեանս զխառնումն նշանակէ, բայց երեք անձինք ա՟ծութէն ոչ գոն երեք մասունք, և ոչ երեք ա՟ծութիք, այլ իւրաքանչիւրն ՚ինքեանէ ունի զբոլոր ա՟ծութի՟. Քանզի որինչ է որդի ևհո-գին ս՟բ, է ևհայր : որինչ է հայր ևհոգին ս՟բ, է ևորդի : ևորինչ է հայր ևորդի, է ևհոգին ս՟բ : Ուստի հայր ևորդի ևհոգին ս՟բ, ոչ են երեք մասունք, ոչ թէ ՚ինքեանց ա՟ծ իցէ բա-ղադրեցեալ, այլ իւրաքանչիւրոք ՚ինքեանէ է ա՟ծ կատարեալ : այսպէս երկոքին ՚ի միասին

է մի

է մի ա՟ծ կատարեալ , ևերէքն միահաղոյն են մի ա՟ծ կատարեալ : Սակս որոյ իւրաքանչիւրն 'ինոյունց զոյ 'յերիս ; ևերէքն 'յերկուս ; ևմի՛ն 'յերկուս , ևերկուքն 'ի մի : ևմի՛ն 'ինոյանէ է ո՟պ երկու ևերեք , ևերկուքն ո՟պ մի , ևերեքն ո՟պ երկու ևմի :

Արդ 'յայսցանէ յայտնապէս երևի , զի անձինք այսորիկ ա՟ծայինք ոչե՛ն իբր մասունք բաղադրութե ընդունակք , ևհետևապէս ա՟ծ ո՛չ է բաղադրեցեալ , թէև ունիցի զբազմաւորութի առնչական :

Ուրեմն զորինչ 'իսկզբանէ մինչև 'ցայս վայր շարագրեցաք ևբացայայտեցաք , թէ յաղագս յառաջագայութե իմաստութե՛ն 'իկարողութե, թէ յաղագս բղխման սիրոյն 'իկարողութե և'յիմաստութե , ևթէ յաղագս յառաջագայութեցն , որք եղողութիք են ևոչ բաժանմունք՛, գո՛ն հաւաստիք : Բայց առ 'ի հերքել 'իմտայն ընթերցողաց զբնաւս դժուարութիս գրեցելոցս , յառաջբերցուք զօրինակ հոգւոյն բանականի :

Ասեմք թէ հոգին բանական սիրէ զինքն , ո՟պ հաստատեցաք 'ի վերոյ : քանզի 'իբնութե իւրմէ ունի զայն : Ուրեմն ևծանուցէ զինքն; վ՟ զի ոչինչ է սիրեցեալ , որ ոչիցէ 'նախ ծանուցեալ : Բայց յորժամ հոգին բանական

սիրէ զայլինչ արտաքոյ ինքեան , յայնժամ յայտնապէս երևին երեք իրք , այսինքն , հոգին սիրող , իրն սիրեցեալ , և սէրն , որով սիրողն սիրէ : Նմանապէս երևին երեք իրք յայտնապէս , մինչ ճանաչէ զայլինչ արտաքոյ ինքեան , այսինքն , հոգին ճանաչօղ , իրն ճանաչեցեալ , և ճանաչումն : Իսկ յորժամ հոգին բանական սիրէ զինքն , երևին միայն երկու իրք , այսինքն , հոգին սիրող , և սէրն , որով սիրէ զինքն : Այսպէս յորժամ հոգին ճանաչէ զինքն երկու իրք միայն երևին , այսինքն , հոգին ճանաչօղ , և ճանաչումն : վ՟ս զի ճանաչօղն և ճանաչեցեալն նոյն են : Բայց յորժամ հոգին բանական ճանաչէ զինքն և սիրէ , յայնժամ պարզապէս երևին երեք իրք , այսինքն , հոգին , ճանաչումն , և սէրն : և երեքեանս այսոքիկ մի են , և գոլով կատարեալք , են հաւասարք միմեանց :

Երեք են յաղագս առնչականի հակակայութե՟ , զի ճանաչօղն ճանաչողութե՟ է ճանաչօղ , և ճանաչողութի 'ի ճանաչողէն ասի ճանաչողութի : Սիրօղն սիրով է սիրօղ , և սէրն է 'ի սիրողէն : վ՟ս որոյ ո՛չ սէր առանց սիրողի , և ոչ սիրօղ առանց սիրոյ ասի : Նմանապէս ոչ ճանաչօղ , առանց ճանաչողութե՟ , և ո՛չ ճանաչողութի թարց ճանաչողի :

Արդ՝

Արդ՝ վասն զի ճանաչօղ և ճանաչողութիւն առնչաբար հակակային, ՚ի հարկէ երկու պարտին գոլ, զի են հակակայք: Այսպէս սիրօղ և սէր առնչաբար հակակային, ՚ի հարկէ երկու պարտին գոլ: Աստուստ հոգին ճանաչօղ և սիրօղ, և ճանաչողութիւն և սէր, գոլով առնչականք, ՚ի հարկէ են երեք: Եւ եթէ ոք բացասէ զայսոսիկ, բացասել պարտի ևս թէ հոգին ոչ կարիցէ ճանաչել զինքն և սիրել:

Եւ զի ճանաչողութիւն և սէր են գոյացութիւնք, ուրեմն ոչ են ՚ի հոգւոջ ըստ եղանակի պատահման, քանզի պատահմունք ոչ կարեն արտելանել ՚ի տեղւոջէն ՚ի նորում են, որպէս տեսանի յայտնապէս ՚ի գոյնս, զի գոյն ինչ, որ գունաւորէ զթուղթս զայս, ոչ կարէ զայլ ինչ թուղթ գունաւորել; Բայց հոգի սիրօղն, որով զինքն սիրէ, կարէ և զայլ ինչ արտաքոյ ինքեան սիրել; և ճանաչմամբն, որով զինքն ճանաչէ, կարէ և զայլս ճանաչել:

Ապա ուրեմն ճանաչողութիւն և սէր ՚ի հոգւոջ էականապէս գոն, ըստ որում է ինքն հոգին. Քանզի թէպէտ առնչաբար հակակային միմեանց, սակայն՝ իւրաքանչիւրն ՚ի նոյանէ գոյ ՚ի յիւրում գոյացութեան, և ոչ են որպէս գոյնն և գունաւորեցեալն, զի գոյնն ՚ի գունաւորե-

ցելում է իբր՝ ՚ննթակայօջ, ըստ ինքեան ոչ ենթակայանայ, քանզի մարմինն գունաւորեցեալ է գոյացութի, իսկ գոյնն որ ՚ի նմա է պատահումն :

Զի ոպ̄ զերկուս բարեկամս իմանամք զերկուս մարդս, որոց երկաքանչիւրն ըստ որում են մարդիք, են գոյացութիք, եւ ոչ ինչ կերպիւ առնչականք ; Բայց ըստ որում են բարեկամք են համառնչականք ; Այսպէս սիրող, եւ ճանաչօղ գոյացութիք են : եւ ճանաչողութի, եւ սէր են եւ գոյացութիք ; Բայց սիրող եւ սէր, ճանաչօղ եւ ճանաչողութի համառնչականք են : այլ ոչ հոգի եւ միտ, ոպ̄ եւ ոչ երկու մարդիք համառնչականք եղիցին :

Այլ սիրող եւ սէր, ճանաչօղ եւ ճանաչողութի վ̄զի են համառնչականք, ոչ կարեն անջատիլ ՚ի միմեանց պահելով զառնչականութիւ իւրեանց, ոպ̄ եւ ոչ երկու բարեկամք ; Քանզի եթէ սէրն, որով հոգին սիրէ զինքն ոչնչանայցէ, եւկորուսանիցէ զգոյն իւր, կորուսցէ եւ միանգամայն հոգին զսիրողութի իւր : Այսպէս եթէ ճանաչումն, որով հոգի զինքն ճանաչէ, ոչնչանայցէ, եւկորուսանիցէ զգոյն իւր, կորուսցէ եւ միանգամայն ինքն հոգին զճանաչողութի իւր : Եւ թէպէտ գլուխն եւ գլխաւորն, մասն եւ բոլորն են եւ համառնչականք,

չանանք, սակայն կարէն անջատիլ 'ի միմեանց, այլ ոչ սէրն եւ սիրօղն, ճանաչօղն եւ ճանաչումն:

Եւ զոր ասացաք 'ի վերոյ թէ հոգին, ճանաչումն եւ սէրն, գոլով կատարեալք, են հաւասարք միմեանց, յայտնի իմն է: Քանզի եթէ հոգին բանական սիրիցէ զինքն 'նուազագոյն քան զոր է, այսինքն, եթէ սիրիցէ զինքն այնքան, որքան սիրելի է մարմինն, մեղանչէ, եւ սէր 'նորին առ ինքն ոչ է կատարեալ, զի հոգին գերազանցագոյն է քան զմարմինն, ուստի եւ մեծագունի սիրոյ է արժանի: Եւ եթէ սիրիցէ զինքն առաւել քան զոր է, այսինքն, այնքան, որքան սիրելի է ած ըստ այսմ եւս մեղանչէ, եւ սէր 'նորին ոչ է կատարեալ, զի ած է գերազանցագունեղ, ուստի եւ գերազանցագունեղի սիրոյ է արժանի: Իսկ եթէ սիրիցէ զինքն այնքան որքան է սիրելի, յայնժամ սէրն հաւասար է սիրողին, եւ կատարեալ; եւ սիրօղն սիրոյն հաւասար.

Նմանապէս, եւ ճանաչողութի 'նորա եթէ 'նուազագոյն իցէ քան զճանաչօղն, այսինքն, եթէ ունիցի զկատարեալ զօրութի ճանաչողութե, եւ 'նուազապէս ճանաչիցէ զինքն, ճանաչումն այն, եղիցի անկատար: Եւ եթէ ճանաչիցէ զինքն գերագոյն քան զոր է, գերագոյն եղիցի բնութի ճանաչողին, ըստ որում է

ճանաչօղ, քան զինքն ըստորում է, ճանաչեցեալ, զոր օրինակ, ճանաչումն մարմնոյ, որով մարմինն ճանաչի, գերագոյն է քան զմարմինն, քանզի ճանաչողութիւն կենդանութիւն իմն է ՚ի ճանաչօղն, իսկ մարմինն ոչ է կենդանութիւն: այլ ամ̅ կենդանութիւն գերագոյն է քան զմարմին, թէպէտ ոչ ըստ քանակութեան, այլ ըստ զօրութեան:

Բայց հոգին մինչ ճանաչէ զինքն, ճանաչողութիւն այն, ոչէ գերագոյն քան զինքն, զինոյն է ճանաչօղն և ճանաչեցեալն. Ուրեմն մինչ զինքն միայն ճանաչէ և ոչ զայլ ինչ, յայնժամ ճանաչողութիւն ՚նորին հաւասար է ինքեան, զի ճանաչողութիւն իւր ոչէ ՚ի բնութեան այլոյ ուրուք, մինչ ճանաչէ զինքն: Եւ այսպէս մինչ բոլորովին ճանաչէ զինքն թարց այլում ումեք, յայնժամ ճանաչողութիւն այն, ոչ նուազ, և ոչ առաւել եղիցի քան զճանաչօղն: Այս ուրեմն ստուգիւ ասացաւ, թէ երեքեան այսոքիկ յորժամ են կատարեալք ՚ի հարկէ են հաւասարք:

Դարձեալ, ճանաչողութիւն և սէրն, ոչ էն մասունք հոգւոյ, քանզի ոչ ոք մասն զբոլորն իւր պարունակել կարէ, իսկ հոգին յորժամ զինքն կատարելապէս ճանաչէ և սիրէ, ՚նորին ճանաչողութիւն և սէրն զբոլորն պարունակէ,

Ուրեմն

Ուրեմն ճանաչողութիւն եւսէրն ոչ են մասունք :

Դարձեալ եթէ երեքեան այսոքիկ են գոյացութիք, եւ իւրաքանչիւրոք 'ի նոցունց ոչ է արտաքոյ միւսոյն, ուրեմն են մի գոյացութի :

Բայց ոչ են մի գոյացութի որպիսի է գոյացութի ըմպելոյն 'ի ջրոյ 'ի գինւոյ եւ 'ի մեղերէ խառնեցելոյ. Այլ են հակակայք միմեանց, Քանզի հոգի ինքնին զինքն սիրէ, եւ ինքնին զինքն ճանաչէ, եւ արտաքոյ ինքեան զայլինչ ոչ ճանաչէ, եւ ոչ սիրէ. Ուրեմն 'ի հարկէ երեքեանս այսոքիկ են մի գոյացութի : Բայց եթէ խառնմամբ իմիասին բաղադրիցին, ամենեւիմբ ոչկարեն լինիլ երեք, այլեւ ոչկարեն ունել առ միմեանս զառնչական հակակայութի : Զոր օրինակ եթէ 'ի միոյ դրամէ ոսկւոյ զերիս մատանիս նմանս միմեանց ձուլիցէ ոք, երեքեան այնոքիկ մատանիք գոլով նմանք միմեանց համառնչակիցք եղիցին, եւ երրորդութի իմն 'ի նոսին երեւեսցի, բայց հայելով 'ի նիւթն, այսինքն, 'յոսկին, մի եղիցին: իսկ եթէ խառնիցէ ոք զնոսա ընդ միմեանս, եւ ձուլիցէ զգունտ իմն, երրորդութիւն այն իսկոյն բարձցի 'ի միջոյ, եւ եղիցի մի ոսկի թարց երրորդութե : Այսպէս մինչ հոգի ճանաչէ զինքն եւ սիրէ, զերրորդութի իմն ցուցանէ 'յինքեան, այսինքն, զհոգին, զճանաչումն, եւզսէրն, թարց

շփոթման առ իրեարս, թէ և իւրաքանչիւրքն իյէն ՚յինքեանս, և իւրաքանչիւրքն ՚ըն յիւրաքանչիւրում: և իւրաքանչիւրքն ՚ըն յերկաքանչիւրում: և երկաքանչիւրն ՚ըն յիւրաքանչիւրում: և եռաքանչիւրն ՚նամէնեւեան:

Իւրաքանչիւրքն են ՚յինքեանս, զի հոգի ըստ ինքեան գոլով ՚յինքեան սափ, թէև իցէ ճանաչօղ, ճանաչեցեալ, և ճանաչելի իւրով ճանաչողութբ: կամ սիրօղ, սիրեցեալ, և սիրելի սիրով իւրով: և ըստ այսմ ունիցի զա՚նչափն հակակայութի: Այսպէս ճանաչումն, թէպէտ և ունի զընկատումն առ հոգին ճանաչօղ կամ ճանաչեցեալ, սակայն՝ և ՚յինքեան ճանաչօղ և ճանաչեցեալ ՚է: վս զի ճանաչողութիւն, որով հոգի զինքն ճանաչէ, ՚յինքեան ոչէ անծանօթ: Նմանապէս սէրն, թէպէտ եզնկատումն ունի առ հոգին սիրօղ կամ սիրեցեալ, զի է սէր նորին, սակայն սէր է ինքեանն, ող և ՚յինքեան սէր է, քանզի սէրն է սիրեցեալ, և ոչ իւիք արտաքոյ ինքեան; Եւ այսպէս երեքեանս այսոքիկ, այսինքն, հոգին, ճանաչումն, և սէրն գոն ՚յինքեանս:

Իւրաքանչիւրքն են ՚յիւրաքանչիւրսն, զի հոգին սիրօղ է ՚ըն սիրով: և սէրն է ՚ի ճանաչման հոգւոյն սիրողի, իսկ ճանաչումն է ՚ըն հոգւոյ ճանաչօղում:

Իւրա-

Իւրաքանչիւրքն են ՚յերկաքանչիւրսն, զի հոգի, որ զինքն ճանաչէ եւ սիրէ, է միանգամայն ՚ի սիրոյ եւ ՚ի ճանաչման իւրում ; եւ ճանաչումն է ՚ի հոգւոյ ճանաչողի ինքեան եւ սիրողի եւ ՚ի սիրոյ : իսկ սէրն է ՚ի հոգւոյ սիրողի ինքեան եւ ճանաչողի, եւ ՚ի ճանաչման :

Երկաքանչիւրքն են ՚ի իւրաքանչիւրսն, զի հոգի, որ զինքն ճանաչէ եւ սիրէ, ճանաչողութբ իւրով է ՚ի սիրոյ, եւ սիրովն իւրով է ՚ի ճանաչողութեան : քանզի ՚նոյն սէրն եւ ճանաչողութիւն գոն իմիասին ՚ի հոգւոյ, զի նոքօք զինքն սիրէ եւ ճանաչէ :

Եռաքանչիւրքն են ՚ի ամենեսեան, զի հոգի բոլորովիմբ զինքն ճանաչէ եւ սիրէ ; եւ ճանաչումն զինքն բոլորովիմբ սիրէ : եւ սէրն բոլորովիմբ զինքն ճանաչէ : Այսպ ուրեմն երեքեան սոքիկ անանջատելիք են ՚ի միմեանց, բայց անանջատութիւն նոցա զարմանալի իմն է:

Դարձեալ իւրաքանչիւրքն ՚ի յիւրաքանչիւրսն են գոյացութիւք, եւ երեքեանն մի գոյացութի եւ մի էութի են, վս զի են առ միմեանս համառնչականք :

Արդ՝ զասացեալս զայսոսիկ առ էութիւն այ վերաբերիցուք, քանզի եւ նա զինքն սիրէ եւ ճանաչէ, սակայն կատարելագունեղապէս,

նց երազանցագունեղապէս ; Սակս որոյ, և յա-ռաջածէ զբան իւր, որ զինքն երևակերպէ ճշմարիտ ա̅ծ : Եբղխէ զսէր իւր, որ զինքն առ՚ի սիրելն խոնարհեցուցանէ: Եւ երեքեանս այսոքիկ, այսինքն, ա̅ծն ասօղ ևսիրօղ, ևբանն, ևսէրն են գոյացութիք, ևհետևապէս են մի գոյացութի, ևիւրաքանչիւրքն ՚յինքեանս, ևիւրաքանչիւրքն ՚յերկոքանչիւրս, ևերկա-քանչիւրքն ՚ի յիւրաքանչիւրս, ևեռաքան-չիւրն ՚յերիս : Ուստի և իւրաքանչիւրն է ա̅ծ կատարեալ, ևերկաքանչիւրն մի ա̅ծ կա-տարեալ, ևեռաքանչիւրն մի ա̅ծ կատարեալ, ամենակարօղ, պարզագունեղ, ևառանց ումեք բաղադրութե :

Իսկ զոր ասացաք թէ երեք այսոքիկ, են երեք անձինք, այսինքն, հայր, ևորդի ևհո-գին սբ, զայսոսիկ ըստ հաւատոյ մերում դա-ւանիմք ևխոստովանիմք ; Քանզի ա̅ծն ամե-նակարօղ, ՚իձեռն մարգարէից իւրոց սրբոց յայտնեաց մեզ զնոյնս, որպ ասացաք յառա-ջագոյն՝ :

Դարձեալ գիտելի է ևայս, զի ա̅ծ ոչ գոր-ծէ ըստ եղանակի առեղծուածոցս, որպէս թէ ՚ի կնոջէ ևըստ մարմնոյ ծնանիցի զզաւակ իւր, ևմանաւանդ՝ զայսպիսիս ասելն, ևկամ խորհիլն մեծ հայհոյութի է; Այլ ասելն ևկամ խօսիլն

խօսիլն իւր է ծնունդ որդւոյ իւրոյ: Եւ բանն ստացեալ ՚ի նմանէ, է որդի ծնիցեալ, ամենայնիւ կատարեալ նման հօր իւրոյ, անբաւելի, անճառելի: Եւ զի երեք այսոքիկ անձինք են մի ած կատարեալ Ամենամեծ, ըստ յայտնութեն մարգարէից: Ուստի առ. այս ճշմարտութեն զյարացոյց ինչ ՚ի յերկրայնոցս առբերելն դժուարին և անկարելի իսկ է: Քանզի ամ ծնունդ ՚ի ստեղծուածս անջատմամբ լինի, իսկ ՚ի ն յաստուածում թարց ումեք անջատութե:

Արդ՝ ով Պարսիկք, մինչ ուսայք ումեքէ զած հասարար վարկել ստեղծուածոց, քաւ լիցի այս ձեզ, զի որչափ բարձր է ած եղեր ՚ի վերոյ քան զստեղծուածս, այնչափ բարձրագոյնք են գործքն իւր քան զստեղծուածոցս, քանզի իւրաքանչիւր գործող, գործէ ըստ որում է ինքն:

Վերջ Առաջնոյ
Հատորին:

# ՅՓՍ

Հատոր Երկրորդ.

Յաղագս Քի̅ Ըստ որում է Մսիհ:

Գլուխ Առաջին.

Յաղագս Անուանն Քի̅ :

Քրիստոս անունս առ Եբրայեցիս ասի Մսիհ ; առ յոյնս քրիստոս ; առ լատինացիս ունքթուս ; առ հայս օծեցեալ, կամ օծած ; որոյ թարգմանութիւն ՚ի բարբառս պարսից է Մալխոէ . վ̅ս զի ՚ի ժամանակս Նախկինս սովորութի̅ էր օծել զթագաւորս ըստ հրամանին այ̅, ոպ̅ Սաւուղ առաջին թագաւոր եբրայեցւոց և Դաւիթ մարգարէ և թագաւոր, և այլք օծեցեալք եղեն ; և ոչ միայն սոքա, այլև քահա-

քահանայք և մարգարէք օծանէին հոգւով սրբով :

Ուստի Դաւիթ ՚ի սաղմոսն 104. ՚ի Թիւն 15. ասէ . մի մերձենայք ՚յօծեալս իմ , և ՚ի մարգարէս իմ մի մեղանչէք : Եւ Ամբակում ՚ի գլուխն 3. ՚ի Թիւն 13. ասէ ; ելեր ՚ի փրկութիւն ժողովրդեան քոյ, ՚ի փրկութի՛ն ընդ օծեալոյ քում : Եւ Եսայիաս խօսելով զԿիւրոսէ , հոգւովն ա͞յ ՚ի գլուխն 45. ՚ի Թիւն 1. ասէ , Զայսոսիկ ասէ տ͞ր օծելոյն իմում Կիւրոսի , զորոյ կալայ զաջն զի ենթարկեսցեմ առաջի երեսաց նորա զազգս : Այս Կիւրոս օծեցեալ եղև ՚յա͞յ, նետա ՚ի ձեռանէ զհրաման աւերելոյ զԲաբելօն , սակս բազմութե՛ան յանցանաց նամբարշտութեանց նոցին : Բայց յ͞ս ք͞ս , զորմէ է դիտաւորութի՛ բանիս, օծաւ ՚յա͞յ ոչ ըստ եղանակի այլոց , զի ո՛չ ո͞ք զԿիւրոս առ ՚ի աւաքիլ առ ՚ի միայն քաղաք : և ո՛չ ո͞ք զմարգարէսն առ ՚ի առաքիլ առ ՚ի միայն ազգ , այլ և ոչ ո͞ք զքահանայսն առ ՚ի զոհել զզոհս ցլուց և նոխազաց , և ոչ ևս իբրև զԴաւիթ առ ՚ի յիշխել ՚ի վ͞ր միոյ թագաւորութե ; Այլ օծաւ ՚ի վ͞ր ամենից բնակչաց տիեզերաց , առ ՚ի ազատել զմարդիկ ՚ի մեղաց իւրեանց , և առ ՚ի առնել զհաշտութի՛ ՚ի մէջ ա͞յ և արարածոցս , ո͞ր զի նովաւ և ՚ի նա օրհնիսցին համայնք ծնունդք ազ-

աշխարհի, ըստ որում ճառելոցք եմք առ յապա; Աստուստ յայտէ, զի օծումն յի քի գերագոյն էքան զօծումն հանուրց օծեցելոց :

## Գլուխ Երկրորդ .

### Յաղագս օրհնութենն զոր ընկալաւ ազգ մարդկան ՚ի ձեռն քի ծնեցելոյն ՚ի զաւակէն Նահապետացն :

ՍԵմք, թէ ած խոստացաւ Աբրահամու յարուցանել նմա զզաւակ ՚ի ձեռն որոյ ստանալոցք էին հեթանոսք զօրհնութի : Եւ զայս վկայէ Մովսէս ՚ի գիրս ծննդոց ՚ի գլուխն 12. ՚ի թիւն 1. ասելով, Եւ ասէ տր ՚ցԱբրահամ, Ել ՚յերկրէ քումէ, և ՚յազգականութենէ քումէ, և ՚ի տանէ հօր քոյ, և էկ ՚յերկիր զոր ցուցից քեզ: Եւարարից զքեզ ՚յազգ մեծ, Եօրհնեցից զքեզ, Եմեծացուցից զանուն քո, Եեղիցիս օրհնեցեալ: Օրհնեցից զօրհնիչս քոյս: Եանիծեցից զանիծիչս քոյս: Ե՚ի քեզ օրհնեսցին ընաւք ազգականութիւք երկրի: Եւ ՚ի գլուխն 17. ՚ի թիւն 9. ասէ, Աստ գործեալ ած ՚ցԱբրահամ, Եդու ուխտն պահեսցես զուխտ իմ,

իմ, և սերմի քո զկնի քո, 'ի ծնունդս իւրեանց:
այս է ուխտ իմ, զոր պահեսցէք 'ի մէջ իմ, և ձեր,
և սերման քո զկնի քո: Թլփատեսցի 'ի ձէնջ
ամ արու, և թլփատեսջիք զմարմին թլփման
ձերոյ, զի իցէ 'ի նշան ուխտի 'ի մէջ իմ, և ձեր:
Եւ զկնի սակաւուց 'ի թիւն 15. աստ, Ասաց
և ևս ած 'ցաբրահամ, զՍարայի կին քո մի կո-
չիցես Սարայի, այլ Սառա, և օրհնեցից զնա,
և 'ի նմանէ տաց քեզ զորդի, զոր օրհնելոց եմ,
և եղիցի 'յազգս, և թագաւորք ժողովրդոց ծա-
գեսցին 'ի նմանէ: Անկաւ Աբրահամ 'ի վր
երեսս իւրոց և ծիծաղեցաւ, ասելով 'ի սրտի
իւրում, միթէ հարիւրեմենի ծնանիցի որդի,
և Սառա իննսնամեան ծնանի: և ասաց 'ցած,
օշթէ իսմայէլս այս կեացէ առաջի քո: Եւ
ասէ ած 'ցաբրահամ, Սառա կին քո ծնցէ քեզ
զորդի, և կոչեսցես զանուն նր իսահակ, և հա-
մակացուցից զուխտ իմ ընդ նմա, 'ի յուխտ
յաւիտենական, և ընդ սերման նր զկնի նր:
և 'ի վր իսմայելի ևս անսացի քեզ, ահա օրհնե-
ցից զնա, և աճեցուցից և բազմացուցից զնա
յոյժ; զերկոտասան Դուքս ծնցէ, և արարից
զնա 'յազգ մեծ: Բայց զուխտ իմ կացուցից
ընդ իսահակայ, զոր ծնցէ քեզ Սառա, 'ի ժա-
մանակի այսմիկ 'ի միւսում տարւոջ: Եւ 'ի
գլուխն 18. 'ի թիւն 17. աստ, Եւ ասաց տր,

մի թէ

մի թէ թագուցանել կարացից 'յաբրահամու
զոր առնելոց եմ, որով հետև լինելոց է 'յազգ
մեծ և կորովագունեղ, և օրհնելիք իցեն 'ի նմա
ամք ազգք երկրի: Եւ 'ի գլուխն 21. 'ի թիւն 9.
ասէ, Եւ տեսեալ Սարայի զորդին Ագարայ
եգիպտացւոյ զի խաղայր ընդ իսահակայ որդւոյ
իւրում, ասաց 'ցաբրահամ, 'ի բաց հան զա-
ղախինդ այդ, և զորդի 'նր, քանզի ոչ եղիցի
ժառանգ որդի աղախնոյդ, ընդ որդւոյ իմում
իսահակայ, և խիստ թուեցաւ աբրահամու վս
որդւոյ իւրոյ: Այլ որ ասաց ած, մի՛ խիստ
թուիցի քեզ 'ի վր մանկանն, և 'ի վր աղախ-
նոյ քոյ, զամ ինչ զոր ասիցէ քեզ Սարա, լուր
ձայնի նորա, զի իսահակաւ կոչեսցի քեզ սերմն;
բայց և զորդի աղախնոյդ արարից 'յազգ մեծ, զի
սերմն քո է: Եւ յարեաւ աբրահամ ընդ առա-
ւօտն և առեալ զհաց և զտիկ ջրոյ, եդ 'ի վր ու-
սոց 'նր, և աւանդեաց 'նմա զմանուկն և ար-
ձակեաց զնա. Եւ 'ի գլուխն 22. 'ի թիւն 1. ասէ:
Եւ յետ լինելոյ բանից այսոցիկ, փորձեաց
ած զաբրահամ և ասաց 'ցնա, աբրահամ.
աբրահամ, և նա պատասխանեաց, ահաւա-
սիկ եմ, և ասէ 'ցնա, առ զորդիդ քո միա-
ծին, զոր սիրես զիսահակ, և գնա դու 'յեր-
կիրն տեսութե, և անդ մատուսցես զնա 'յող-
ջակեզ 'ի վր միոյ լերանցն, զոր ցուցանիցեմ

H քեզ,

քեզ, Ուրեմն յարեալ աբրահամու 'ի գիշերի համետեաց զէշ իւր, եածեալ ընդ իւր զերկուս պատանիս, եզիսաակ որդի իւր, եւ իբրեւ համահատեալ լիցեր զփայտս 'յողջակեզ, գնայ 'ի տեղին, զոր հրամայեալ էր նմա ած, եւ 'յաւուրն երրորդի ամբարձեալ զաչս ետես զտեղին 'ի բացուստ, եւ ասաց 'ցպատանիս իւրս, սպասեցէք աստ հանդերձ իշովդ, եւ ես եւ մանուկս մինչեւ ցանդր ձեպեալք, յետ որոյ երկրպագեալք իցեմք դարձցուք առ ձեզ: եւ առեալ զփայտն ողջակիզին եւ եբարձ 'ի վր իսաակայ որդւոյ իւրոյ, իսկ ինքն տանէր 'ի ձեռս զհուրն եւ զսուրն: եւ մինչ երկոքեանն ձեպէին 'ի միասին, ասաց իսաակ 'ցհայր իւր, հայր իմ, եւ նա պատասխանեաց, զի՞նչ կամիս որդի, Ահա աստ հուր, եւ փայտունք, ուր է զոհ ողջակիզի, եւ ասաց աբրահամ, ած նախատեսանիցէ ինքեան զզոհ ողջակիզի որդի իմ. ձեպէին ուրեմն զուգաբար, եւ եկին 'ի տեղին, զոր ցուցեալ էր նմա ած, 'նորում շինեաց զսեղան, եւ համադրեաց 'ի վր զփայտս, եւ իբրեւ կապեալ իցեր զիսաակ որդի իւր, եդ զնա 'ի սեղանի 'ի վր դիզոյ փայտիցն եւ ձգտեաց զձեռն եւ խլեաց զսուրն, զի զենուցու զորդի իւր; Եւ ահա հրեշտակ տն 'յերկնից աղաղակեաց ասելով Աբրահամ Աբրահամ, որ պատասխանեաց, ահաւասիկ եմ;

Եւասաց

Եւ ասաց նմա , մի ձգտիցես զձեռն քո ՚ի վ՟ր
պատանւոյդ , եւ մի առնիցես դմա զիրինչ , այժմ
ծանեայ , թէ երկնչիցիս ՚յ՟յ , եւ ոչ անխնայեցեր
միածնի որդւոյ քում վ՟ս իմ: Ամբարձ Աբրա-
համ զաչս իւրս , եւ ետես ՚ի յետկոյս իւր խոյ
մի ՚ի մէջ ցաքից յենեալ եղջերօքն: Եւ յետ սա-
կաւուց ՚ի թիւն 15. ասէ . Եւ կոչեաց հրեշ-
տակ տ՟ն զաբրահամ երկիցս անգամ ՚յերկնից
եւ ասէ , ՚յանձն իմ երդուայ , ասէ տ՟ր , փո-
խանակ զի արարեր զիրդ զայդ , եւ ոչ անխնա-
յեցեր որդւոյ քում միածնի վ՟ս իմ ; օրհնեցից
զքեզ , եւ բազմացուցից զսերմն քո ո՟պ զաստեղս
երկնի , եւ իբրեւ զաւազ , որ է առ ափն ծովու ;
ժառանգեսցէ սերմն քո զդրունս թշնամեաց
իւրոց. եւ օրհնեսցին ՚ի սերման քում ամ՟ք ազգք
երկրի , զի հնազանդեցար ձայնի իմում:

Արդ ՚ի բանս այսոսիկ ա՟ծային զերկուս իրս
պարտիմք նկատել , նախ զի աբրահամու եր-
կու որդիք եղեն , մինն կոչիւր իսմայէլ , ՚ի յԱ-
գարայ աղախնոյն , իսկ միւսն իսահակ ՚ի Սա-
րայէ կնոջէ: Եւ թէպէտ իսմայէլ եւս եղեւ որդի
աբրահամու , սակայն իսահակ ասի զաւակ
աբրահամու , եւ իսահակայ խոստացաւ ա՟ծ , զի
ամ՟ ազգ երկրի ՚ի նմա օրհնեսցին : իսկ իս-
մայէլի քանզի եւ նա սերմն էր աբրահամու .
խոստացաւ , օրհնել եւ բազմացուցանել զոր-

դիս նր , կտալ նմա զերկոտասան իշխանս ՚յերանեայ նր : Բայց զուխտ եւզխոստումն օրհնութե ամենից ազգաց , եդ ՚ի Սաակ և՚ի ծնունդս նր :

Երկրորդ , զի եթէ ամ ազգ զօրհնութի առանալոց էր . Ուրեմն նախ ամենեքեան ընդ անիծիւք էին . Եւ անիծից այնոցիկ կրկին է պատճառ ; Առաջինն է մեղքն Ադամայ , քանզի Ադամ ստեղծեալ եղև ՚յայ , և շնորհօք Նորին ընտրեցաւ եբարեկամեցաւ նմա , մինչ զի եթէ պահեալէր զպատուիրանս այ , վերափոխեցեալ էր ՚յարքայութիւն երկնից : Բայց քանզի յանցեաւ զպատուիրանաւն այ , ապստամբեցաւ եզրկեցաւ ՚ի շնորհացն : Վն որոյ արքայութիւն երկնից փակեցաւ ընդէմ Նմա եզաւակաց նր , որք ծնանելիք էին ՚ի նմանէ : Եւ այսպէս եղև առաջին պատճառ անիծից մեղքն ադամայ նախահօրն մերոյ : Երկրորդն է մեղք որդւոյն ադամայ , որք ամենեքեան եղէն մեղանչականք . Ուստի Դաւիթ մարգարէն ՚ի սաղմոսն 13. ՚ի թիւն 3. այլև ՚ի սաղմոսն 52. ՚ի թիւն 4. ասէ . Ամենեքեան խոտորեցան ՚ի միասին եւանպիտանացան : ոչոք է որ առնէ զբարի նչէ ոք մինչև ՚ի մի : Քանզի այնքան յաճախեցան ՚ի նոսա մեղք , մինչզի մոռացեալք զածն

ճշմարիտ ,

ծաշմարիտ, ակնեցին պաշտել զարարածս, այսինքն, զաստեղս, զարեգակն, զլուսինն, զքարինս, զծառունս, եզայլս իրս ձեռակերտս: Եւայսպէս մեղանչելով ընդդէմ այ համայնք ծնունդք աշխարհի, հեռացան յարքայութենէն երկնից եւնկան 'ի ներքոյ անիծից; Ուստի կամելով տն այ բառնալ զանէծն զայն եւօրհնել զմարդիկ, եւածել զնոսա 'ի ճանապարհս ուղղութե եկեցութե, կոչեաց զաբրահամ եւասաց 'ցնա, 'իզաւակէ քումէ զօրհնութի ընկալցին համայք ծնունդք երկրի: Եւ զսոյն խոստումն կրկնելով առ իսահակ. եւառ Յակոբ 'յորդին իսահակայ 'իգիրս ծննդոց, 'իգլուխն 26. 'իթիւն 2. ասէ. Մի իջաներ 'յեգիպտոս, այլ հանգիր 'յերկրին, զոր ասիցեմ քեզ, եպանդխտեաց 'ինմա, եեղէց ընդ քեզ, եօրհնեցից զքեզ. զի քեզ եսերման քում տաց զնաւս գաւառս զայդոսիկ, լնլով զերդումն, զոր խոստացայ աբրահամու հօր քում. եբազմացուցից զսերմն քո իբրեւ զաստեղս երկնի, ետաց յեղնորդաց քոց զընաւս գաւառս զայդոսիկ, եօրհնեսցին 'ի սերման քում ամք ազգք, երկրի: փոխանակ զի հնազանդեցաւ եղե աբրահամ ձայնի իմում եպահպանեաց զհրամանս, եզպատուիրանսիմ. եզարդարութիւս եզօրէնս-

 պահեաց:

պահեայ։ Եւ 'ի գլուխն 28. 'ի թիւն 11. զՅակո-
բայ ասի, թէ Ննջեաց 'ի նոյնում տեղւոջ
եւ տես 'յերազս զսանդուխտ կացեալ 'ի վե՛ր
երկրի, որոյ կատարն հասեալ 'յերկին, եւ հրեշ-
տակս ա͞յ, որք ելանէին եւ իջանէին ընդ նա,
եւ զտ͞ր որ յենեալ 'ի սանդուխսն ասէր ին-
քեան, Ես եմ տ͞ր ա͞ծ աբրահամու հօր քո,
եւ ա͞ծ իսահակայ, զերկիրդ 'յորում ննջես, քեզ
տաց եւ սերման քում, եւ եղիցի սերմն քո իբրեւ
զփոշի երկրի, եւ ընդարձակեսցիս 'յարեւմուտս
եւ 'յարեւելս, 'ի հիւսիս, եւ 'ընդ հարաւ։ եւ օր-
հնեսցին 'ի քեզ եւ 'ի սերման քում հանուրք
ցեղք երկրի։ եւ եղէց պահապան քո. 'յոր
ճեպիցես, եւ վերածից զքեզ 'յերկիրս այս,
եւ ոչ թողից մինչեւ համալրեցից զբանս, զորս
ասացի։ Աստուստ յայտ է. թէ որպէս հա-
մայնք ազինք երկրի ընդունելոց էին զօր-
հնութ͞ի 'ի զաւակէն Աբրահամու, իսահա-
կայ, եւ Յակոբայ, որ է ինքն ք͞ս։

Եւ քանզի Յակոբայ երկոտասան որդիք
ծնան, որք եւ 'յերկոտասան ցեղս բաժանե-
ցան. Ուստի տեսանել պարտէ մեզ, թէ
'յորմէ ցեղէ ընտրեալ լիցէ ա͞ծ զք͞ս զորդի իւր
ըստ մարմնոյ։ Եւ այս յայտնի 'ի բանից Յա-
կոբայ նահապետի, որ 'ի գիրս ծննդոց 'ի գլուխն
49. 'ի թիւն 10. մինչ օրհնէր զՅուդա որ-
դի

դի իւր ասաց , Մի բարձցի գայիտոն 'ի Յու-
դայէ , եղուքս 'ի յերանաց նորա , մինչև գայ-
ցէ , որ առաքելին է , և նա եղիցի ակնկա-
լութի՟ հեթանոսաց ։ Այլև 'ի բանից Եսայեայ,
Որ 'ի գլուխ II. 'ի թիւն IO. ասէ , 'Յաւուր
յայնմիկ արմատն Յեսեայ , որ կայ 'ի նշան ժո-
ղովրդոց , զնա հեթանոսք աղերսեսցեն , և
եղիցի գերեզման նո՟ր փառաւոր ։ Ապա ուրեմն
այն է ք՟ս , առ որ հեթանոսք ակնունէին ,
որ և եղև ծնեալ 'ի զաւակէն Յեսեայ 'ի ցե-
ղէն Յուդայի ։ Իսկ եթէ ճշմարտապէս և հա-
ստատապէս այն է ք՟ս 'յոր ազգ կաղինք յու-
սացեալք էին , առ 'ի ընդունել զօրհնութի՟,
ուրեմն նա է իսկապէս դուքս , մարգարէ ,
հովիւ , քահանայ , թագաւոր , փրկիչ , օրէ-
նսդիր , տէ՟ր և ած՟ , որ պարգևեաց զօրհնու-
թի՟ մարդկան , որում ամե՟նք պարտական է
զծառայական երկրպագութի՟ մատուցանել ։

## Գլուխ Երրորդ.

### Յաղագս թէ քս̅ է ճշմարիտ իշխան:

Իշխանութիւն քի̅ հաւաստի 'նախ 'ի բանից Միքիայ Մարգարէին, որ 'ի գլուխն 5. 'ի թիւն 2. ասէ, Եւ դու Բեթղեհեմ Եփրաթայ, փոքրիկ ես 'ի հազարս յուդայ, 'ի քէն ելցէ ինձ, որ իցէ տիրող 'յիսրայէլ:

Երկրորդ 'ի բանից Եսայեայ, որ 'ի գլուխն 55. 'ի թիւն 3. ասէ Զիջուցէք զունկն ձեր, և եկէք առ իս, լուարուք, և կեցցէ հոգի ձեր, և հարից ընդ ձեզ զուխտ յաւիտենական, զողորմութիւն Դաւթի զհաւատարիմս, Ահաւասիկ ետու զնա վկայ ժողովրդոց, Դուքս և հրամանատու հեթանոսաց: Ահաւասիկ զազգն զոր ոչ գիտէիր կոչեսցես; և ազգք, որք ոչ ծանեան զքեզ առ քեզ ընթասցին, վս̅ տ̅ն ա̅յ քոյ և սրբոյն Իսրայէլի, զի փառաւորեաց զքեզ:

Երրորդ 'ի բանից Երեմիայ մարգարէի, որ 'ի գլուխն 33. 'ի թիւն 14. ասէ. Ահա աւուրք գան, ասէ տ̅ր, կյարուցից զբան բարի, զոր խօսեցայ 'ցտունն Իսրայէլի, և ցտունն Յուդայ, 'յաւուրսն յայնոսիկ և 'ի ժամանակին յայնմիկ

բող-

բողբոջեցուցից զԴաւիթ զբողբոջն 'արդարու-
թե̄, կարասցէ զդատաստան եւ զարդարութի̄
'ի յերկրի, յաւուրսն 'յայնոսիկ կեցուսցի Յու-
դա, եւ Երուսաղէմ բնակեսցի ապաւինօրէն ;
եւ այս է անուն, զոր կոչեսցեն նմա, Տր̄ արդար
մեր: Եւ զկնի այլոց բանից 'ի թիւն 20. ասէ.
Զայսոսիկ ասէ Տր̄. Եթէ խանգարումն կա-
րիցէ լինել դաշն իմ ընդ տունջեան, եւ դաշն
իմ ընդ գիշերոյ, զի մի՛ լինիցի տիւ եւ գիշեր
'ի ժամանակի իւրում: Եւ դաշն իմ խանգա-
րումն գոլ կարասցէ ընդ Դաւթի ծառայի
իմում, զի մի լինիցի 'ի նմանէ որդի, որ թա-
գաւորիցէ 'յաթոռ նր̄: Եւ զկնի սակաւուց,
'ի թիւն. 25. ասէ 'Զայսոսիկ ասէ Տր̄, եթէ
զդաշն իմ 'ի մէջ տունջեան եւ գիշերոյ, եւ զօ-
րէնս երկնի եւ երկրի ոչ եդի, ապա եւ զսերմն
Յակոբայ եւ Դաւթի ծառայի իմոյ 'ի բաց հեր-
քեցից, զի մի առնուցում 'ի սերմանէ նորա
զիշխանս սերմանն Աբրահամու, Իսահակայ,
եւ Յակոբայ, զի վերածից զդարձ նոցա, եւ ո-
ղորմեցայց նոցա: Բանք այսոքիկ, զորս Տր̄ Ած̄
խօսեցաւ ընդ տանն Յուդայի, խոստմունք
էն յաղագս Քի̄, որ է ծագումն արդարու-
թե̄, առ 'ի ուղղել զարդարութի̄ 'ի յերկրի,
քանզի անուն նր̄ է Տր̄ արդար մեր: Ուս-
տի 'ի ժամանակի գալստեան նր̄, կեցուցեալ
լիցի

լիցի Յուդա, զի է ինքն ճշմարիտ կեցուցիչ: Եւ որպէս տիւ ևգիշեր պակասիլ ոչ կարեն, զի մի լինիցին 'ի ժամանակի իւրեանց, նոյնպէս պակասիլ ոչկարէ սերմն Դաւթի ևորդւոյ ն̃ր, որք նստցին 'յաթոռ ն̃ր : Զսոյն հաստատէ և ա̃ծ. Եզեկիէլի մարգարէի 'ի գլուխն. 34. 'ի թիւն. 22. ասելով, Եւ կեցուցից զհօտն իմ, և ոչ ևս եղիցի 'յափշտակութի, նդատեցից 'ի մէջ խաշին և խաշին, և յարուցից 'ի վր̃ նոցա զհովիւ մի, որ հովուիցէ զնոսա, զծառայն իմ Դաւիթ, ինքն հովուեսցէ զնոսա, և ինքն եղիցի նոցա 'ի հովիւ; իսկ ես տր̃, եղէց նոցա 'յա̃ծ, և ծառայն իմ Դաւիթ իշխան 'ի միջի նոցա; ես տր̃ խօսեցայ: 'Ի բանս յայսոսիկ կոչէ ա̃ծ զքս̃ Դաւիթ, այսինքն, 'ի զաւակէ Դաւթի, որ եղև ճշմարիտ հովիւ և իշխան 'ի մէջ ժողովրդեան իւրոյ; Ապա ուրեմն քս̃ է ճշմարիտ դաւքս; և իշխան, և հովիւ, և թագաւոր ևտ̃ր 'ի զաւակդէ Դաւթի:

Գլուխ

## Գլուխ Չորրորդ .

### Յաղագս Թէ քս̃ է եւ Մարգարէ :

Ի Գիրս Երկրորդօրինի ՚իգլուխն՝ 18, ՚իթիւն. 15. Ասէ Մովսէսն. Զմարգարէ ՚յազգէ քումէ, և՚յեղբարց քոց, իբրև զիս, յարուսցէ քեզ տր̃ ած̃ քո, ՚նմա լւիցես, ոպ̃ հայցեցեր ՚իտ̃է այ̃ քումէ ՚իՔօրեբի, յորժամ գումարն ժողովեալ եղև, և ասացեր, ոչ յաւելից լսել զձայն տն̃ այ̃ իմոյ, և զհուրդ զայդ մեծագունեղ ոչ ևս տեսից, զի մի մեռայց. Եւ ասէ ՚ցիս տր̃, զա̃մ ինչ բարւոք խօսեցան, զմարգարէ յարուցից ՚նոցա ՚իմիջոյ եղբարց իւրեանց ՚նման քեզ, և եդից զբանս իմս ՚իբերանոյ ՚նր̃, և խօսեսցի ընդ ՚նոսա զա̃մ ինչ զոր հրամայեցից ՚նմա; իսկ որ զբանս ՚նր̃, զորս խօսեսցի ՚յանուն իմ ոչ կամիցի լսել, ես վրէժխնդիր արտակայացայց : Ապա ուրեմն ըստ բանից այսոցիկ քս̃ է եւ Մարգարէ :

## Գլուխ Հինգերորդ .

### Յաղագս թէ Քս̃ է կեցուցիչ :

Զորինչ ՚ի վերոյ ասացաք յաղագս օրհնութեան, զոր ընդունելոցք էին ազգք նազինք ՚ի քս̃է, նոյնքն հաստատեն մեզ թէ քս̃ իցէ եւ կեցուցիչ : Քանզի ասացաւ, թէ ՚յաւուրսն յայնոսիկ կեցուցեալ լիցի Յուդա : Բայց Եսայի մարգարէն զճշմարտութիւն զայս հաստատելով ՚ի գլուխն . 45. և՚ի թիւն 8. ասէ, Յօղեցէք երկինք ՚ի վերուստ եւ ամպք անձրեւեսցեն զարդարն, բացցի երկիր եւ բղխեսցէ զկեցուցիչն : Իսկ ՚ի գլուխն . 62. ՚ի թիւն . I. ասէ, վն̃ սիոնի ոչ լռեցից, եւ վն̃ Երուսաղեմայ ոչ հանգեայց, մինչեւ ելանիցէ իբրեւ զճառագայթ արդարն նր̃, եւ կեցուցիչն նր̃ որպ̃ զղամբար վառեսցի, եւ տեսցեն ազինք զարդարն քո, եւ՚նաւք թագաւորք զվեհափառն քո, եւ կոչեսցի քեզ անուն նորոգ, զոր բերան տն̃ անուանեսցէ : Եւ ՚ի գլխի սակաւուց ՚ի թիւն . II. ասէ : Ասացէք դստեր սիոնի, ահաւասիկ կեցուցիչն քո գայ . Ահաւասիկ վարձ իւր ընդ իւր, եւ գործ իւր առաջի իւր :

խուր ։ Այս ուրեմն 'ի բանից յայսցանէ յայտ է թէ Քս̅ կեցուցիչ իցէ ։

## Գլուխ Վեցերորդ .

### Յաղագս թէ Քս̅ Քահանայ է նոր ։

Ճշմարտութիւն այս հաւաստի պարզապէս 'ի Դաւթէ մարգարէէ, որ 'ի սաղմոսն . 109. 'ի թիւն. 1. խօսելով յաղագս, Քի̅ ասէ . Ասաց Տր̅ 'ցՏր̅ իմ, Նիստ ընդաջմէ իմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց ։ Եւ զ'նի սակաւուց 'ի թիւն. 4. ասէ. Երդուաւ Տր̅, եւ ոչ զղջասցի, դու ես քահանայ 'յաւիտեան, ըստ կարգին Մելքիսեդեկի ։ 'Ի բանից 'յայսցանէ երևի թէ Քս̅ Տր̅ է նքահանայ . Վասնզի Մելքիսեդեկս այս եղև միանգամայն Թագաւոր եւ քահանայ, որ առաջի Աբրահամու ըստ սովորութե̅ իւրում մատոյց զհաց եւ զգինի, մինչ դարձեալ գայր 'ի կոտորածէ Թագաւորացն, եւ օրհնեաց զնա ։ Իսկ Աբրահամ ետ նմա զտասանորդս 'յամենից ընչիցն, զորս աւար հարեալ էր, ըստ որում ասէ Մովսէս 'ի գիրս Ծննդոց 'ի գլուխն. 14. 'ի թիւն . 18.

18. Իսկ Մելքիսեթեկ արքայն Սաղիմայ յառաջբերեալ զհաց եւգինի, քանզի էր քահանայ ա՜յ բարձրագունեղի, օրհնեաց զնա, եւասաց, օրհնեցեալ Աբրահամ ա՜վ բարձրելով, որ եստեղծ զերկին եւզերկիր : Եւ օրհնեցեալ ա՜ծն բարձրեալ, որոյ 'նախախնամելովն թշնամիք 'իձեռս քոյս են : Եւ ետ նմա զտասանորդս 'յամենից : Ապա ուրեմն քն է տր եւքահանայ ըստ կարգին Մելքիսեթեկի :

## Գլուխ Եօթներորդ.

### Ցաղագս թէ քն է օրինադիր եւթագաւոր :

Օրինադիր գոլն քի հաւաստեմք այնու, զի օրէնքն Մովսէսի փոփոխեցան 'ինմա, քանզի 'ինախնումն քահանայք հնոյ օրինին քահանայագործէին ըստ կարգին Ահարոնի, եւորք 'իցեղէն Ղեւեայ զոչխարս եւզեզինս մատուցանէին ; Բայց քն գոլով քահանայ 'իցեղէն Յուդայի եւըստ կարգին Մելքիսեթեկի զհաց եւգինի մատոյց. Եւ զի քահանայութին, եւպատարագքն փոփոխեցան, փոփոխեցան եւ օրէնք; Ուստի Դաւիթ 'իսաղ-

մոսն 39. 'ի Թիւն 7. խօսելով վս՟ մատուցման
պատարագին, 'ի դէմս քի՟ ասէ, զզոհ ևզպա-
տարագ ոչ կամեցար, այլ զլսելիս կատարե-
ցեր ինձ ; Զողջակէզն ևզվս՟ մեղացն ո՛չ խնդ-
րեցեր ; յայնժամ ասացի ։ Ահա գամ ։ 'Ի
գլխոյ գրգոյն գրեցեալ է զինէն, զի առնի-
ցեմ զկամս քո ; տ՟րիմ կամեցայ, ևզօրէնս քո
'ի մէջ սրտի իմոյ ։ 'Ի բանից յայսցանէ յայտ-
նապէս երևի, թէ ա՟ծ, որ հրամայեալ էր զպա-
տարագն, որվս՟ մեղացն մատուցանել, մեր-
ժեաց և հերքեաց ։ Ուստի ասէ քս՟, թէ Ահա
գամ, առ՚ի քահանայագործել ըստ կարգին
Մելքիսեթեկի, ևըստ կամաց քոց զպատա-
րագ մատուցանել ։ Իսկ յաղագս լուծման
ևփոփոխման օրինացն Մովսէսի. Երեմիաս
ուսեալ 'ի տ՟նէ 'ի գլուխն 31. 'ի Թիւն 31. ասէ.
Ահաւասիկ աւուրք եկեսցեն, ասէ տ՟ր, ևհա-
րից ընդ տանն իսրայելի ևընդ տանն Յու-
դայի զուխտ նոր, ոչ ըստ դաշանն, զոր
կռեցի ընդ հարցն նոցա, 'յաւուր յորում կա-
լայ զձեռանէ նոցա, զի արտածիցեի զնոսա
'յերկրէն Եգիպտոսի, զդաշն, զոր խանգա-
րուն արարին, ևես տիրեցի նոցա, ասէ տ՟ր ։
'Ի բանից յայսցանէ ա՟ծայնոց յայտնապէս
Երևի թէ օրէնքն Մովսէսի, ևպատարագքն,
Իսկև քահանայութիւն Ահարոնի զփոփոխումն

առեալք

առեալք իցէն : Իսկ Ք̃ս գոլով քահանայ նո-
րոգ ըստ կարգին Մելքիսեդեկի, իցէ օրի-
նադիր, մարգարէ, իշխան, դուքս, կեցու-
ցիչ, Տ̃ր, եւ Թագաւոր 'ի յեղէն Յուդայի ;

## Գլուխ Ութերորդ.

### Յաղագս թէ որպիսի Թագաւոր իցէ Ք̃ս :

ՍԻ այս, թէ արդեօք Թագա-
ւորութի՛ն Ք̃ի իցէ միայն 'ի վ̃ր
որդւոյն Իսրայէլի, եւ ժամա-
նակաւոր, թէ 'ի վ̃ր բոլորից
տիեզերաց, եւ մշտնջենաւոր,
պատասխանէ Դաւիթ մար-
գարէն 'ի սաղմոսն 2. 'ի թիւն 6. 'ի դէմս Ք̃ի
ասելով, Իսկ ես կացուցեալ եղէ Թագաւոր
'ի նմանէ 'ի վ̃ր սիոնի լերին սրբոյ նորա, քա-
րոզօղ զհրաման նր̃ : Տ̃ր ասաց 'ցիս որդի իմ
ես դու, ես այսօր ծնայ զքեզ : Խնդրեա 'յինէն,
եւ տաց քեզ զհեթանոսս 'ի ժառանգութի քո,
եւ 'ի յստացողութ̃ի քո զեզերս երկրի : Հովես-
ցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ, եւ իբրեւ
զանօթ բրտի փշրեսցես զնոսա ; Եւ արդ'
Թագաւորք իմացարուք, հմտացարուք որք
դատէք զերկիր : 'Ի բանից յայսցանէ յայտ-
նապէս

նապէս երևի թէ ք՟ս է թագաւոր բոլորից տիեզերաց , և թագաւորութ՟ի նր՟ է տրեցեալ ՚յա՟յ ՚ի ժառանգութ՟ի մշտնջենական : Վ՟ս որոյ ո՛վ թագաւորք և դատաւորք երկրի իմացարուք և՚խրատեցէք , ծառայելով նմա երկիւղիւ , և ցնծալով առաջի նր՟ դողութ՟բ :

Զսոյն ճշմարտութ՟ի և մարգարէն Եսայի ՚ի գլուխն 2. ՚ի թիւն 2. հաստատէ ասելով , Եւ եղիցի ՚յաւուրս յետինս նախապատրաստեցեալ լեառն տուն ա՟ծն ՚ի գագաթան լերանց , և վերասցի ՚ի վ՟ր բլրոց , և հեղիցին առ նա ա՟մք հեթանոսք , և երթիցեն ժողովուրդք բազումք , և ասասցեն , եկէք և ելցուք ՚ի լեառն ա՟ծն , և՚ի տունն ա՟յ Յակոբայ , և ուսուսցէ մեզ զճանապարհս իւր , և շրջեսցուք ՚ի շաւիղս նր՟ , զի ՚ի սիոնէ ելցէ օրէն , և բան ա՟ծն ՚յերուսաղէմէ : Եւ դատեսցէ զհեթանոսս , և յանդիմանեսցէ զժողովուրդս բազումս :

Եւ Միքիաս ՚ի գլուխն 4. ՚ի թիւն I. ասէ . Եւ եղիցի : ՚ի յետնում աւուրց եղիցի լեառն տուն ա՟ծն նախապատրաստեցեալ ՚ի գագաթան լերանց , և վսեմ ՚ի վ՟ր բլրոց , և հեղիցին առ նա ժողովուրդք , և կանխեսցեն ազինք բազումք , և ասասցեն , եկէք , ելցուք ՚ի լեառն ա՟ծն , և՚ի տունն ա՟յ Յակոբայ : և ուսուսցէ մեզ զճանապարհաց իւրոց , և երթիցուք ՚ի շաւիղս

՚նր : զի ՚խիռնէ ելցէ օրէ՛ն , և բան տ՛ն ՚ի յերուսաղէմէ , եդատեսցէ ՚ի մէջ ժողովրդոց բազմաց , և կշտամբեսցէ զազինս հզօրս , մինչ ՚ի հեռաւորս : Որեմն ըստ բանից այսոցիկ քս՟ է Թագաւոր և ժառանգորդ համրոյ աշխարհի . որ եդատեսցէ զժողովուրդս , և յանդիմանեսցէ զազինս , և քարոզեսցէ զհրամանս և զօրէնս տ՟յ ՚ի վր՟ սիոնի լերին սրբոյ ՚նր . քանզի օրէնք ՚ի սիոնէ ելցեն , և բան տ՛ն ՚յերուսաղէմէ , և համօրէն ժողովուրդք ընթասցեն առ՛նա ՚ի յընդունել զօրէնս ՚յ՟յ կենդանւոյն , և բնաւք մոլորեալք դարձեալք ՚ի ճանապարհ տ՛ն ուղղեսցեն զինքեանս , եգնասցեն զհետ քի՟ , որ է իշխան և Թագաւոր և քահանայ , ըստ կարգին Մելքիսեթեկի : Ըստ որում ասէ Դաւիթ ՚ի սաղմոսն 71. ՚ի թիւն I. Ած զդատաստան քո արքայի տուր ; և զարդարութի քո որդւոյ Թագաւորի: և զկնի ՚ի թիւն II. ասէ. Եւ երկրպագցեն ՚նմա ա՟մք Թագաւորք երկրի, ա՟մք ազինք ծառայեսցեն ՚նմա : Զկնի որոյ ՚ի թիւն . 17. ասէ, իցէ անուն ՚նր օրհնեցեալ ՚ի յաւիտեանս , յառաջ քան զարև յարամնայ անուն ՚նր : Եւ օրհնեսցին ՚ի նմա ա՟մք ցեղք երկրի , ա՟մք ազինք մեծացուսցեն զնա :

Առայս վկայութի , ոմանք ընդիմաբանեն ասելով, թէ Դաւիթ զբանս զայսոսիկ վս՟ Սողոմոնի

ղոմոնի լցէ ասացեալ: Բայց մեք պատասխա
նեմք, թէ Սողոմոն ոչ՚երբէք 'ի ծովէ մինչև
'ի ծով Թագաւորեաց, ոչ և մինչև 'ի ծագս
աշխարհի : Այլև ոչ՚երբէք երկրպագին նմա
ամ̃ք Թագաւորք երկրի, ոչ և ամ̃ք ազինք
ծառայեցին նմա: Այլ ասացեալէ վ̃ս քի ոմ̃
Երևի յայտնապէս 'ի Թի՟ն 17. ուր ասի, Եւ
օրհնեսցին ի նմա ամ̃ք ցեղք երկրի, ամ̃ք ազինք
մեծասցուսցեն զնա. որ միայն պատշաճի քի,
քանզի 'ի նմա ամ̃ք հեթանոսք ընկալան զօր-
հնութի : Արդ ուրեմն քս̃ տիրեսցէ 'ի ծովէ
մինչև 'ի ծով, և'ի գետոց մինչև 'ի ծագս աշ-
խարհի , և ամ̃ք Թագաւորք երկրպագեսցեն
նմա, և ամ̃ք ժողովուրդք ծառայեսցեն նմա:
Աստուստ' Թագաւորութի՟ն քի ոչէ միայն
'ի վ̃ր միոյ, կամ' երկուց մասանց աշխարհի, կամ'
ժամանակաւոր, այլ 'ի վ̃ր բոլորի աշխարհի
և մշտնջենաւոր: Ուստի ասէ Դաւիթ 'ի սաղ-
մոսն. 131. 'ի Թի՟ն. 10. Վ̃ս Դաւթի ծառայի
քոյ, մի դարձուցաներ զերեսս քրիստոսի քոյ:
Երդուաւ տ̃ր Դաւթի զճշմարտութի , ոչ
զրկեսցէ զնա; 'ի պտղոյ որովայնի քոյ եդից 'ի վ̃ր
աթոռոյ քոյ : Եթէ պահիցեն որդիք քոյ զկը
տակն իմ, և զվկայութիս զայսոսիկ, զորս ու-
սուցից նոցա: Եւ որդիք նոցա մինչև 'յյաւի-
տեան նստցին 'ի վ̃ր աթոռոյ քոյ:

Դարձեալ 'ի սաղմոսն ՁԸ. 'ի թիւն 21. ասէ ; Գտի զԴաւիթ ծառայ իմ: Ձիթով սրբով իմով օծի զնա : Քանզի ձեռն իմ օգնեսցէ նմա , և բազուկ իմ զօրացուսցէ զնա : Ոչինչ շահեսցի թշնամին 'ի նմա , և որդին անիրաւութե մի առադրիցէ վնասել նմա : Եւ համահատից 'յերեսէ նորա զթշնամիս նորա , և զատիչս նորա 'ի փախուստ դարձուցից : Եւ ճշմարտութի իմ, և ողորմութի իմ ընդ նմա , և 'յանուն իմ բարձրասցի եղջիւր նորա : Եւ եդից 'ի ծովու զձեռն նորա , և 'ի գետս զաջ նորա : Նա կարդասցէ առ իս , Հայր իմ ես դու : Ած իմ , և վերընդունող կեցութե իմոյ : Եւ ես անդրանիկ եդից զնա , բարձր գերքան զթագաւորս երկրի: 'Ի յաւիտեան պահեցից նմա զողորմութի իմ , և կտակն իմ հաւատարիմ նմա : Եւ եդից 'ի յաւիտեանն յաւիտենի զսերմն նորա, և զգահոյկ նորա որպէս օրն երկնի: Իսկ եթէ լքանիցեն որդիք նորա զօրէնն իմ, և 'ի դատաստանս իմս ոչ շրջիցին : Եթէ զարդարութիս իմս անյարգիցեն , և զպատուիրանս իմս ոչ պահիցեն : Այցելից գաւազանաւ անիրաւութեց նոցա , և ձաղանօք մեղաց նոցա: Բայց զողորմութի իմ ոչ տարացրեցից 'ի նմանէ, և ոչ վնասեցից 'ի ճշմարտութե իմում: Եւ ոչ անյարգեցից զկտակն իմ , և որք

յառաջա-

յառաջագոյին ՚ի շրթանց իմոց , ոչ արարից խանգարումն : Մի անգամ երդուայ ՚ի սուրբ իմում եթէ Դաւթի ստից եմ ; սերմն նորա ՚ի յաւիտեան մնասցէ : Եւ գահոյք նորա ոպ՟ զարեգակն առաջի իմ , եւ ոպ՟ զլուսինն կատարեալ ՚ի յաւիտեան : եւ վկայ ՚ի յերկինս հաւատարիմ : Այս ուրեմն ըստ բանից այսոցիկ ք՟ս է որդի ա՟յ անդրանիկ , եւ թագաւոր զեր քան զընաւս թագաւորս երկրի , որոյ աթոռն ՚ի յաւիտեան մնալոց է :

Ուստի մարգարէն ո՛չ ասէ , ոպ՟ օրն երկրի , որ վերջանայ ՚ի գիշերի եւ ծածկի ՚ի յստուերաց . այլ ոպ՟ օրն երկնի , առ որ ոչ երբէք հասանին ստուերք , զի լոյս արեգականն միշտ զերկինս լուսաւորէ , եւ պայծառացուցանէ ճառագայթիւք իւրովք : Եւ եթէ որդիք ն՟ր , այսինքն , հաւատացեալքն ՚ի նա ոչ պահիցեն զօրէնս ն՟ր , գաւազանիւք այցարասցէ մեղաց նոցա , այլ զողորմութ՟ի իւր ո՛չ արգելցէ , եւ զուխտ իւր ոչ անյարգեսցէ : Եւ զորինչ խօսեալ իցէ , ոչ երբէք ապուսեսցէ : Եւ այսպէս զաւակն Դաւթի ք՟ս ՚ի յաւիտեան կացցէ , եւ աթոռ նորա ոպ՟ զարեգակն առաջի ա՟յ միշտ մնասցէ : եւ ոպ՟ զլուսինն լրացեալ եւ կատարեալ վկայ հաւատարիմ ՚ի յերկինս եղիցի :

Զսոյն ճշմարտութ՟ի հաստատէ եւ Դանիէլ

'ի գլուխն. 7. 'ի թիւն 9. ասելով, Հայէի. մինչև գահոյկք եդան, և հինն աւուրց նստաւ, հանդերձ նր սպիտակ իբրև զձիւն, և հերք գլխոյ 'նորա իբրև զասր մաքուր։

Եւ յետ սակաւուց 'ի թիւն. 13. ասէ. Հայէի ուրեմն 'ի տեսլեան գիշերոյ, և ահա ընդ ամպս երկնի իբրև զորդի մարդոյ գայր՝ և մինչ 'ց հինն աւուրց ժամանեաց, և յանդիման նորա մատուցին զնա. Եւ ետ 'նմա զպետութի̅, և զպատիւ, և զթագաւորութի̅, և ամ̅ք ժողովուրդք, ազգք, և լեզուք 'նմա ծառայեն։ Պետութի̅ նր պետութի յաւիտենական, որ ոչ բարձցի, և թագաւորութի̅ 'նորա, որ ոչ եղծանի։ Արդ՝ ո՞վ է որդին մարդոյ, որ մատեաւ առ հինն աւուրց, և ա̅ծ ետ 'նմա զպետութի̅. զպատիւ, և զթագաւորութի̅, եթէ ոչ ինքն ք̅ս, որում բնաւք ազինք և ազգք ծառայելոց են։ Ապա ուրեմն թագաւորութի̅ն ք̅ի է յաւիտենական և անվախճան, և կարողութի̅ նր է անբաւելի, զի է ճշմարիտ դուքս, և իշխան, և մարգարէ, և հովիւ, և քահանայ, և օրինադիր, և կեցուցիչ, և թագաւոր, որում հանուրք թագաւորք երկիրպագելոց են. և աթոռ նր ոչ̅ զօր երկնի, և ոչ̅ զարեգակն և զլուսինն լրացեալ 'ի յաւիտեան, և թագաւորութի̅ն նր է անեղծանելի։ 'յորմէ և հա-

նուրք

՚նուրք զօրհնութի̅ ընկալցին, և զկեցութի̅ գտա-
ցէն, որում և երկրպագանիցէն իբր պարաւան-
դեցեալք ՚ի բարերարութե̅ նորին: Աստուստ՝
ծվէ, որ կարիցէ ուրանալ զիշխանութի̅ն քի̅,
կամ արգելուլ, զի ազինք երկրի կամ թա-
գաւորք մի՝ ծառայիցեն նմա; քանզի ինքն
ա̅ծ հրամայեաց, զի ՚ի խիրտ երկրի երկրպագ-
ցեն նմա:

## Գլուխ իններորդ

## Յաղագս Գալստեանն Քի̅:

ԺԱմանակ գալստեանն քի̅ նշա-
նակեցաւ յու աջագոյն՝ ՚ի Յա-
կոբայ նահապետէ, որ ՚ի յօր-
հնելն զորդին իւր Յուդա
՚ի գիրս ծննդոց ՚ի գլուխն 49.
՚ի թիւն. 10. ասաց, Մի բառ-
նիցի գայիառն ՚ի Յուդայէ, և դուքս ՚յերանաց
նորա, մինչև գայցէ որ առաքելին է, և նա
Էղիցի ակնկալութի̅ հեթանոսաց:

Այսինքն, քս̅ յս̅ խոստացեալն Աբրահա-
մու, իսահակայ. և Յակոբայ, որում ակնու-
նէին հեթանոսք առ՚ի ընդունել զօրհնու-
թի̅, ոչ եկեսցէ ՚յորքան ժամանակս գտանի-

ցին Թագաւորք եւ իշխանք 'ի ցեղէն Յուդայի, այլ եկեսցէ յայնժամ, մինչ Թագաւորք և իշխանք պակասեսցին 'ի նմանէ : Բայց որդիքն Իսրայէլի զբանս զայսոսիկ ոչ իմացան, եւ ոչ ծանեան զժամանակ գալստեան Նր : Ուստի Յովսէէ մարգարէն 'ի գլուխն .3. 'ի Թւն 4. ասէ . Զի զաւուրս բազում նստցին որդիքն Իսրայէլի առանց Թագաւորի, եւ առանց իշխանի, եւ առանց պատարագի, եւ առանց սեղանոյ, եւ առանց եփուտի, եւ առանց Թերափի, եւ յետ այսորիկ դարձցին որդիքն Իսրայէլի եւ խնդրեսցեն զՏր Ած իւրեանց, եւ զԴաւիթ արքայն իւրեանց: Այսինքն, որդիքն Իսրայէլի տգիտանալով զժամանակ գալստեանն Քի սպասեսցեն զամս բազումս Թարց Թագաւորի եւ իշխանի . իսկ 'ի վախճանի տեսանելով զմոլորութիւն իւրեանց, դարձցին եւ խնդրեսցեն զՏր Ած իւրեանց, և զՅս Քս, որ է որդի Դաւթի ըստ մարմնոյ : Եւ այս յայտնի իմն է, քանզի որ 'ի ճանապարհէն իւրմէ դարձեալ ընդ կրունկն, զայլ իմն ճանապարհ խնդրէ, ցուցանէ, թէ նախ մոլորեալ էր : Այլև որ զայլ իմն իր խնդրէ, ցուցանէ, թէ ոչ ունիցի զնոյնն : Ըստ այսմ եւ եբրայեցիք կալով զամս բազումս զրկեցեալք 'ի Թագաւորաց, 'յիշխանաց, 'ի պատարագէ, և 'ի սեղանոյ

ղմնոյ , ոպ̄ տեսանի 'նայսմիկ ժամանակի ; 'նորում գոն ցրուեցեալք յա̄մուրէք , ըմբռնեցեալք 'ի գերութի̄ս ; 'ի վախճանի դառնալոյք են առ տր̄ ած̄ն իւրեանց, և խնդրելոցք են զԴաւիթ թագաւորն իւրեանց, այսինքն, զքս̄, զոր մեք այժմ եկեալ ճանաչեմք , և նոքա յիմարեցեալք տգիտանան , և շրջին թափառականք :

## Գլուխ Տասներորդ :

### Յաղագս թէ քս̄ ծնանելոյ գոյր 'ի կուսէն 'ի Բեթղեհեմ քաղաքի :

Ի Պակասիլ թագաւորացն եւ իշխանացն 'ի ցեղէն Յուդայի , ծնաւ քս̄ և նստաւ 'յաթոռն Դաւթի , առ'ի հաստատել զտ̄րութի նորա մինչև 'յաւիտեան ; Որոյ ծնունդն եղև 'ի կուսէն Մարիամու 'ի Բեթղեհեմ քաղաքի , ըստ որում ճառ է մարգարէն Եսայի 'ի գլուխն 7. 'ի թիւն 14. Ահա կոյս յղասցէ , և ծնցէ զորդի , և կոչեսցի անուն նորա Էմմանուէլ ;

Եւ Միքիաս մարգարէն 'ի գլուխն 5. 'ի թիւն 2. ասէ , Եւ դու Բեթղեհեմ Եփրաթայ փոք-

րիկ

րեկ ես ՚ի հազարս Յուդայ, ՚ի քէն ելցէ ինձ, որ իցէ տիրող ՚ի յիսրայէլ. Ապա ուրեմն հաւաստապէս Քս ծնեալ եղև ՚ի կուսէ ՚ի բեթ֊ղէհէմ քաղաքի:

## Գլուխ Մետասաներորդ՝

Յաղագս թէ հարկաւոր էր գալուստն, քարոզութին, և սքանչելագործութին Քի:

ԶՔս օրինադիր գոլ հաստատեցաք ՚ի վերոյ, Ուրեմն հարկեր ՚նմա, զի եկեալ զօրէնս նզպատուիրանս ՚ոյ քարոզիցէր, ոչ միայն ՚ի վր լերինն Սիոնի, այսինքն, ՚ի յերուսաղէմ, այլև ՚ի՛ն բոլորում աշխարհի. Ուստի Դաւիթ խօսելով ՚ի դէմս Քի ՚ի սաղմոսն. 2. ՚ի թիւն. 6. ասէ, Իսկ ես կացուցեալ եղէ թագաւոր ՚ի վր սիոնի լերին սրբոյ ՚նր, քարոզել զհրաման ՚նորա: Զսոյն նէսայի և Միքիաս վկայեցին ՚ի վերոյ ասելով, թէ ՚ի սիոնէ ելցէ օրէն, նբան ՚տն ՚յերուսաղէմէ, նթէ հա֊՚նուրք ազինք նժողովուրդք ընթանալոցք իցէն առ ՚նա ասելով, եկայք ելցուք՝ ՚ի լեառն ՚տն, և ՚ի տունն ՚ոյ Յակոբայ, կուսուցէ մեզ զճա֊

՚նապարհս

նապարհս իւրս, եւ գնացուք 'ի շաւիղս նորա: Դարձեալ նոյն Եսայի մարգարէն 'ի գլուխն 42. 'ի թիւն 1. ասէ . Ահաւասիկ ծառայ իմ, վերընկալայց զնա . ընտրեցեալն իմ, ընդ որ հաճեցաւ հոգի իմ . ետու զոգի իմ 'ի վր նորա . զդատաստան հեթանոսաց յառաջ բերցէ, ոչ աղաղակեսցէ, եւ ոչ աչառեսցէ, եւ ոչ լւիցի ձայն նորա արտաքս, զեղէգն ջախջախեցեալ ոչ փշրեսցէ, եւ զպատրոյկն ծխուն ոչ շիջուսցէ, 'ի ճշմարտութե արտածիցէ զդատաստան, ոչ եղիցի տրտում, եւ ոչ ամբոխուն . մինչեւ դնիցէ 'ի յերկրի զդատաստան, եւ օրինի նորա կղզիք սպասեսցեն: Իսկ 'ի գլուխն 61. 'ի թիւն 1. Ասէ, Հոգի տն 'ի վր իմ, վս այնր զի օծեալ իցէ տր զիս, առ 'ի յաւետարանել հեզոց առաքեաց զիս, զի բուժիցեմ զբեկեցեալս սրտիւ, եւ քարոզիցեմ գերեաց զներողութի, եւ փակեցելոց զբացումն, զի քարոզիցեմ զամ տն ընդունելի, եւ զօր վրէժխնդրութե այ մերոյ, զի մխիթարիցեմ զամն սգաւորս, եւ այլն:

Արդ 'ի բանս յայսոսիկ խօսի քն զինքենէ թէ օծեալ իցէ զինքն այծ, եւ առաքեալ իցէ 'յաշխարհ, զի տայցէ զառողջութի հիւանդաց, եւ քարոզիցէ գերեաց զազատութի, բանտարգեցելոց զփրկութի, եւ զամ հաճոյական, այսինքն,

այսինքն, զժամանակ ընդունելի ՚նորում պարտէ առնել զապաշխարութի̅, զի մերձ է օր վրէժխնդրութե̅, եւ օր հատուցման, որ է օր մեծի դատաստանին: Քան զի զայնոսիկ, որք ոչ հաւատան բանին Քի̅, եւ ոչ կամին լսել ՚նմա, դատապարտելոց է ա̅ծ: Ըստ որում ասէ Մովսէս ՚յերկրորդօրինի ՚ի գլուխն 18. ՚ի թիւն. 17. Զմարգարէ յարուցից նոցա ՚ի միջոյ եղբարց իւրեանց ՚նման քեզ, եւ եդից զբանս իմ ՚ի բերան նորա, եւ խօսեսցի առ ՚նոսա զա̅մ ինչ, զորս հրամայեցից ՚նմա. Իսկ որ զբանս նորա, զորս խօսիցի ՚յանուն իմ, լսել ոչ կամիցի, ես վրէժխնդիր արտակայացայց. Ապա ուրեմն հարկաւորէր գալուստն Քի̅, եւ քարոզութի̅ նորա: Այսպէս եւ սքանչելագործութիւն նորա, ըստ որում ասէ Եսայի ՚ի գլուխն 35. ՚ի թիւն 4. Ասացէք փոքրահոգեաց, զօրացարուք եւ մի՛ երկնչիք, ահաւասիկ ա̅ծ ձեր զվրէժխնդրութի̅ հատուցման առածեսցէ, ա̅ծ ինքն եկեսցէ, եւ կեցուսցէ զձեզ, յայնժամ բացցին աչք կուրաց, եւ ականջք խլից ընդարձակիցին, յայնժամ ցաթքեսցէ կաղն իբրեւ զեղջերու, եւ բացեալ եղիցի լեզու համերց: Իսկ ՚ի գլուխն 42. ՚ի թիւն 6. ասէ. Ես տէր կոչեցի զքեզ արդարութե̅, եւ կալայ զձեռանէ քումէ, եւ պահեցի զքեզ, եւ ետու

զքեզ 'յուխտ ժողովրդեան , 'ի լոյս հեթա-նոսաց , զի բանայցէիր զաչս կուրաց , եւ ար-տածիցէիր 'ի յարգելմանէ զկապեցեալսն , 'ի-տանէ բանտի զնստեալսն 'ի խաւարի , Ես տր , այս է անուն իմ : Արդ ուրեմն ըստ բանից այսոցիկ զհաչակումն օրինաց , եւ զարարումն մեծամեծից սքանչելեաց ունիմք 'ի քսէ ; եւ թէ ճշմարտապէս ինքն իցէ կեցուցիչ եւ ած : քան-զի ոչ ասէ թէ առաքեսցէ ած ձեզ կեցու-ցիչ , այլ թէ ինքն եկեսցէ եւ կեցուսցէ զձեզ. Աստուստ' 'նկատելիք են բանք մարգարէիցն , թէ որպ յարմարք եւ համաձայնք իցեն միմեանց :

Գլուխ Երկոտասաներորդ

## Յաղագս Չարչարանաց եւ մահուանն քի :

Թէ որպէս զնի հաչակման եւ հրատարակման օրինացն այ , պարտիցէր մեռանիլ քս , վկայէ մարգարէն Եսայի 'ի գլուխն . 53 . 'ի թիւն 1 . ասելով . Ո՞ հաւատաց լրոյ մերում , եւ բազուկ տն ում յայտնեցաւ , եւ ելեւ այսա-ւիբրեւ զընձիւղ առաջի 'նորա , եւ իբրեւ զար-մատ 'ի յերկրէ ծարաւուտէ , ոչ գոյ 'նմա տե-

սակ

սակ , և ոչ վայելչութի . և տեսաք զնա , և ոչ գոյր հայեցուած . և րղձայաք 'նմա : Քամահեցելոյ և յետնորդի արանց , առն ցաւոց , և գիտողի զտկարութի , և իբրև թագուցեալ երես 'նի , և քամահեցեալ . ուստի և ոչ վարկաք զնա . Իրաւի զախտաժետութիս մեր ինքն եբարձ , և զցաւս մեր ինքն կրեաց . և մեք համարեցաք զնա իբրև զբորոտ , և հարկանեցեալ 'յայ . և խոնարհեցեալ . իսկ ինքն վիրաւորեցաւ վս անիրաւութեց մերոց , և ձաղեցաւ վս չարագործութեց մերոց . խրատ խաղաղութե մերոյ 'ի վր 'նորա , և հարուածով 'նորա առողջացաք . Ամենեքեան մեք իբրև զոչխարս մոլորեցաք , իւրաքանչիւրոք խոյսետ 'ի ճանապարհ իւր , և եդ տր 'ի նմա զանօրէնութի մերոց ամենից . մատուցաւ զի ինքն կամեցաւ , և ոչ եբաց զբերան իւր . որպ զոչխար 'ի սպա'նումն ածցի , և իբրև զգառն առաջի խուզողի իւրեան անմռ'նչաւցի , և ո՛չ բացցէ զբերան իւր , 'ի յանձկութէ , և 'ի դատաստանէ բարձաւ , զտոհմն 'նորա ո՞ պատմեսցէ , զի բացահատեցաւ 'ի յերկրէն կենդանեաց . վս չարագործութե ժողովրդեան իմոյ բախեցի զնա , և տացէ զամբարիշտս փոխանակ գամբարանի , և զփարթամն փոխանակ մահուան իւրոյ . վս այնր զի զանիրաւութի ոչ գործեաց , և ո՛չ

գտաւ

գտաւ 'նենգութի̅ 'ի բերանոջ 'նորա . Եւ Տ̅ր կամեցաւ փշրել զնա 'ի տկարութե̅ . եթէ դնիցէ վ̅ն մեղի զհոգի իւր , տեսցէ զսերմն երկայնակեաց , եւ կամ Տ̅ն 'ի ձեռն 'նորա ուղղեսցի . փոխանակ զի աշխատեցաւ հոգի 'նորա . տեսցէ եւ յագեսցի , 'ի գիտութե̅ իւրում արդարացուսցէ ինքն արդար ծառայ իմ զբազումս , եւ զանօրէնութի̅ս 'նոցին ինքն տարցէ . վ̅ն որոյ բաշխեսցի 'նմա զյոգունս , եւ հզօրիցն բաժանեսցէ զաւարս , փոխանակ զի մատնեաց 'ի մահ զհոգի իւր . եւ ընդ չարագործս համարեցաւ . եւ ինքն զմեղս բազմաց կրեաց . եւ վ̅ն յանցաւորաց աղաչեաց : Ապա ուրեմն ըստ բանից այսոցիկ պարտէր չարչարիլ Ք̅ի եւ մեռանիլ :

## Գլուխ Երեքտասաներորդ .

### Յաղագս ժամանակի մահուանն Ք̅ի :

Զժամանակն , 'յորում մեռանելոց էր Ք̅ս . բացայայտէ Դանիէլ մարգարէն 'ի գլուխն 9. 'ի թիւն 21. ասելով , Եւ մինչ դեռ խօսէի 'յաղօթի , ահաւասիկ այրն Գաբրիէլ , զոր տեսեալ էի 'ի տեսլեան 'յսկզբանն , փաղփա-

ղակի

ղակի թռեալ մերձեցաւ 'յիս 'ի ժամանակի պա-
տարագին երեկոյեան, եւ ուսոյց զիս, եւ խօ-
սեցաւ ինձ, եւ ասաց, Դանիէլ այժմ ելի, զի
ուսուցանիցեմ զքեզ, եւ իմանայցես, 'ի սկզբա-
նէ աղաչանաց քոց ել խօս, եւ ես եկի, զի
զեկուցանիցեմ քեզ, զի այր բաղձանաց ես.
դու ուրեմն ուշ դիր խօսին, եւ իմա զտեսիլն,
եօթանասուն եօթներեակք համառօտեցան
'ի վերայ ժողովրդեան քո, եւ 'ի վերայ քաղաքի սրբոյ
քո, զի սպառիցի սխալումն, եւ զվախճան
առնուցու մեղն, եւ ջնջիցի անիրաւութի,
եւ առածիցի արդարութի յաւիտենական, եւ լը-
նանիցի տեսիլն եւ մարգարէութի, եւ օծանիցի
Սբն սրբոց. գիտեա ուրեմն, եւ խելամուտ լեր,
'ի յելից խօսին, զի վերստին շինիցի Երուսա-
ղէմ, մինչ 'ի Քս̅ դուքսն, եօթներեակք եօթն,
Վեցերեակք վացսուն եւ երկու եղիցին, եւ վեր-
ստին շինեսցի հրապարակ եւ պարիսպք 'ի նե-
ղութե ժամանակաց, եւ զկնի եօթներեկաց
վաթսներկուց սպանցի Քս̅, եւ ոչ եղիցի ժողո-
վուրդ նր̅, որ ուրանալոց է զնա, եւ զքաղաքն
եւ զսրբարանն տարացրեսցէ ժողովուրդն ընդ
Դքսին, որ գալոց է. եւ վախճան նր̅ ցրումն:

Արդ՝ զեօթներեակս զայսոսիկ, այսինքն,
'ի շաբաթս, զորս Դանիէլ ասաց՝ յիշէ. զեօթն
ամ իմանամք զմինն, ըստ համարոյս այսորիկ

եօթ-

եօթներեակք եօթանասունք․ Եղիցին չորս հարիւր եինըսուն ամք, որոյ թւոյ զսկիզբն խմանամք 'ի ժամանակէն Արտաշիսի թագաւորին պարսից, յորժամ հրամայեաց զԵրուսաղէմ վերանորոգել․ մինչև 'ի ժամանակն, 'յորում Վեսպասիանոս թագաւորն հռօմայեցւոց զնոյն Երուսաղէմ աւերեաց ։ Եւայս է զոր Գաբրիէլ կանխաւ ասաց, թէ զքաղաքն եզտեղի նուիրանայն աւերեսցեն զինուորք ընդ իշխանին, որ գալոց է, եվախճան նորա ապաստակութ̅ի եղիցի ։ Եւ թէ 'յայնմիկ ժամանակի սպառեսցին յանցանք եթողցին մեղք ։ Վ̅ս այսորիկ 'ի գալստեան ք̅ի 'ի մէջ՝ այնր ժամանակի բարձցի կռապաշտութ̅ի, եբնակիչք երկրի ինքեանք զինքեանս մատուցանիցեն առ նա, եմեղք եանօրէնութ̅իք թողեցեալք լիցին, եհամայնք ծնունդք երկրի հաւատացեալք 'ի ք̅ս զթողութ̅ի մեղաց առնուցուն, եզօրհնութ̅ի գտցեն, ե'յայնմ ժամանակի փրկութ̅ի մշտնջենաւոր յառաջասցի, այսինքն, ա̅մ մարդ 'ի ձեռն ք̅ի կեցցէ՝ եանեսիլ եմարգարէութ̅ի, որ յաղագս ք̅ի զվախճան առցէ․ քանզի զկնի գալստեանն ք̅ի մարգարէութ̅իք ոչես էն հարկաւորք․ եօծանիցի ս̅բն սրբոց, որ է ք̅ս, հոգւովն սրբով․ օծմամբ ա̅ծութեն․ ո̅պ ասացաք 'ի վերոյ ։ Եւայս յայտ-

նի իմն է, քանզի ոչոք 'ի ստուկից մարդկանց ասի մ՟բ սրբոց, այլ միայն ա՟ծ. ուրեմն մարգարէութ՟իս այս է զ՟քնէ:

Զինի այսոցիկ ասաց Գաբրիէլ 'ց Դանիէլ. Եթէ զինի վացսուն և երկու շաբաթուց սպանցի ք՟ս, այսինքն, զինի չորից հարիւրից ամաց, և որք զ՟քս ուրասցի, ոչ եղիցի ժողովուրդ նորա, և ոչ գտցէ զօրհնութ՟ի, և զարքայութ՟ին ա՟յ: Ապա ուրեմն Դանիէլ բացայայտագոյն՝ խօսի յաղագս գալստեանն ք՟ի. և ժամանակի մահուան նորա, ըստ որում և Թուիցես:

## Գլուխ Չորեքտասաներորդ.

## Յաղագս որպիսութ՟ե մահուանն ք՟ի:

Որպիսութ՟ի մահուանն ք՟ի մասամբ իւիք 'ի բանից Եսայեայ մարգարէի, զորս յիշեցաք 'ի վերոյ բացայայտեցաւ. իսկ այժմ առ բերցուք զասացեալսն Սողոմոնի, որ 'ի գիրս իմաստութ՟ե 'ի գլուխն. 2. 'ի թիւն 12. մարգարէանայ խօսելով բառանաբար զսպանչացն ք՟ի այսպէս, Դարանեսցուք ուրեմն զարդարն,

վն

վ՟զի անօգուտ է մեզ , ևհակառակ է գոր-
ծոց մերոց, ևնախատէ զմեզ մեղօք օրինացն ,
ևվատահամբաւէ 'իմեզ զմեղս խրատու մե-
րոյ , խոստանայ զինքենէ զգիտութին ա՟յ ու-
նել . ևորդի ա՟յ զինքն անուանէ : Եղև մեզ
'իխայտառակութի խորհրդոց մերոց . ծանր
է մեզ ևս առ'ի տեսանել , քանզի աննման է
այլոց կեանն նորա . ևփոփոխեցան ճանա-
պարհք նորա : Իբր զխաղալիս համարեցեալք
եմք 'ինմանէ . ևխորշի 'իճանապարհաց մե-
րոց իբրև 'իգարշութեց . ևգերաբերէ զվախ-
ճանս արդարոց , ևպարծի ինքեան զա՟ծ
հայր ունել . Տեսցուք ուրեմն եթէ խօսք
նորին իրաւիք իցեն , ևփորձեսցուք զայնս ,
որք գալոց են նմա , ևգիտացուք զայնս, որք
եղիցին վերջք նորա . Զի եթէ է ճշմարիտ
որդի ա՟յ . վերընկալցի զնա , ևազատեսցէ
զնա 'իձեռաց հակառակորդաց . Թշնամա-
նաւ ևտառապանաւ հարցցուք զնա, զի գի-
տիցեմք զպատկառ նորա , ևխելամուտք լի-
նիցիմք համբերութե նորա : մահուամբ վատ-
թարագունեղիւ դատապարտեսցուք զնա .
քանզի եղիցի նմա նկատումն 'իխօսից նորա.

Զայսոսիկ խորհեցան ևմոլորեցան , քան զի
կուրացոյց զնոսա չարութի նոցա, ևոչ գիտա-
ցին զխորհուրդս ա՟յ :

Արդ բանք այսոքիկ Սողոմոնի բացայայտէն զչարաբարոյութիւս յուդայեանց , որք ասէին խաբեսցուք զարդարն , այսինքն , զՔս . որ 'ի մարգարէից վերաձայնի , տր արդար մեր : Մահուամբ խայտառակիւ սպանցուք զնա . այսինքն , մահուամբ խաչին , զի գրեցեալ է թէ անիծեցեալ ամ մարդ, որ կախեցեալ կայցէ զփայտէ : Ապա ուրեմն ունիմք յայտնապէս 'ի Սողոմոնէ, թէ Քս մահուամբ խաչի մեռանելոց իցէր : զի ասաց զինքն որդի այ , եւ հայր իւր կոչեաց զած :

Իսկ Զաքարիաս մարգարէն 'ի գլուխն II. 'ի թիւն 12. խօսելով 'ի դէմս Քի , ասէ . Եւ կշռեցին զվարձն իմ զերեսուն արծաթիս. Եւ ասաց տր 'ցիս, Ձգեա՛ զդա՛ առ ձուլակերտն, զգինդ վայելուչ , որով գնահատեցայ 'ի նոցունց . Եւ բերի զերեսուն արծաթիս եւ ընկեցի զնոսա 'ի տուն տն առ ձուլակերտն : Յայսոցիկ բանից յայտնապէս տեսանի վաճառեցումն Քի ընդ երեսուն արծաթեաց: Եւ թէ ինքն իցէ ճշմարիտ տր եւ ած խաչեցեալ վն մեր:

Իսկ Դաւիթ մարգարէն 'ի սաղմոսն 40. 'ի թիւն 10. խօսելով 'ի դէմս Քի յաղագս մատնչացն յուդայեանց ասէ. Եւ քանզի մարդն խաղաղութէ իմոյ 'յոր յուսացայ : որ ուտէր զհացս իմ. մեծարար 'ի վր իմ զխաբէութի :

Եւ

Եւ 'ի սաղմոսն 72. 'ի թիւն 14. ասէ. Եւ եղէ ձաղեցեալ զօրհանապազ. Եւ կշտամբութիւն իմ 'ի յառաւօտս : Եւ 'ի սաղմոսն 68. 'ի թիւն 22. ասէ. Եւ ետուն 'ի կերակուր իմ զլեղի, և'ի ծարաւոջ իմում արբուցին ինձ զքացախ : Եւ 'ի սաղմոսն 21. 'ի թիւն 17. ասէ. Քանզի շրջապատեցին զինև շունք բազումք, ժողովն չարաբարոյից պաշարեաց զիս: Ծակեցին զձեռս իմ եւ զոտս իմ, եւ թւեցին զա̄մս ոսկերս իմ: Իսկ ինքեանք համանկատեցին եւ ներդիտեցին 'ի յիս, բաժանեցին ինքեանց զհանդերձս իմ, եւ 'ի վե̄ր պատմուճանի իմոյ արկին զվիճակ :

Իսկ Եսայի 'ի գլուխն 50. 'ի թիւն 6. ասէ Զմարմինն իմ ետու բախողաց. Եւ զայտունս իմ փետողաց, զերես իմ ոչ դարձուցի 'ի նախատչաց, եւ 'ի թքանողաց 'ի յիս :

Եւ Զաքարիաս 'ի գլուխն 13. 'ի թիւն 6. ասէ. Եւ ասացի նմա. Զինչ են վէրքդ այդոքիկ 'ի միջոյ ձեռաց քոց: Եւ ասասցէ. Այսոքիկ վիրաւորեցայ 'ի տան այնոցիկ, որք սիրէին զիս: Եւ 'ի գլուխն 12. 'ի թիւն 10. ասէ, Եւ հեղից 'ի վե̄ր տանն Դաւթի, եւ 'ի վե̄ր բնակչացն Երուսաղէմի զոգի շնորհի եւ պաղատանաց, եւ հայեսցին առ իս, զոր սևեռեցին, եւ կոծեսցեն զնա կոծ ի բրև 'ի վե̄ր միածնի. եւ ցաւեսցին 'ի վե̄ր նորա, ոպ̄ սովորութի̄ է ցաւել 'ի վե̄ր անդրանկի :

Դարձեալ Եսայի 'ի գլուխն 11. 'ի թիւն 10. ասէ. 'յաւուր յայնմիկ արմատն Յեսսեայ, որ կայ 'ի նշան ժողովրդոց, զնա հեթանոսք աղաչեսցեն, և եղիցի գերեզման նորա փառաւոր: Ապա ուրեմն ըստ մարգարէից այսոցիկ հարկէր քի̅ ճաշակել զմահ. մատնիլ 'ի ձեռս թշնամեաց. վաճառիլ ընդ երեսուն արծաթեաց. թքանիլ, կշտամբիլ, գանիլ. լեղեաւ և քացախաւ արբուցանիլ. մահու և խաչի դատապարտիլ, 'ի ձեռս և՛յոտս խոցիլ, բևեռօք պնտիլ, մեռանիլ, և թաղիլ 'ի գերեզմանի:

## Գլուխ Հնգետասաներորդ:

## Յաղագս իջմանն քի̅ 'ի Դժոխս:

Արկաւոր էր իջումն քի̅ 'ի դժոխս, առ 'ի ազատել զհոգիս բանտարգելեալս սակս մեղաց, և անհնազանդութե̅ նախնոյ հօրն մերոյ Ադամայ. Քանզի 'ի մեղանչելն նորա, մեղան և ընդ նմա համայնք ծնունդք նորա, և որք միանգամ վախճանեցան մինչև 'ի քս̅ իջին 'ի լիմպոսն. Ուստի քս̅ եկեալ վս̅ թո-

ղութե̅

ղութե՟ մեղաց, կամաւ ՚յանձն էառ զմահ, ՚ի վ՟ր խաչին, և էջ ՚ի դժոխս, և զնախահարս սուրբս, այսինքն, զԱդամ, զՆոյ, զԱբրահամ, զիսահակ, զՅակոբ, և զայլս մարգարէս, որք ակնունէին գալստեան Նորին, ազատեաց; վ՟ս որոյ ասէ Զաքարիաս մարգարէն ՚ի գլուխն 9. ՚ի Թիւն 9. Ցնծա՛ յոյժ դուստր սիոնի, զւարճացի՛ր դուստր երուսաղէմի, ահա՛ թագաւոր քո եկեսցէ քեզ, արդար, և կեցուցիչ, ինքն աղքատ և հեծեալ ՚ի վ՟ր իշոյ և ՚ի վ՟ր աւանակի իշորդւոյ: Եւ կորուսից զկառն ՚ի յեփրաիմայ, և զերիվարն ՚ի յերուսաղէմայ, և տարացրեսցի աղեղն պատերազմի, և խօսեսցի զխաղաղութի՟ հեթանոսաց, և պետութի՟ նորա ՚ի ծովէ մինչև ՚ի ծով, և ՚ի գետոց մինչև ՚ի ծագս երկրի. Դու ևս արեամբ կտակի քոյ զերծուցեր զկապեցեալս քոյս ՚ի լճէն ՚նորում ոչ գոյ ջուր:

՚Ի բանից ՚յայսցանէ յայտ է, զի ք՟ս թագաւորն Իսրայէլի, արդարն, և կեցուցիչն, որ ըստ նմանութե՟ աղքատի ուրուք հեծեալ ՚ի վ՟ր աւանակի իշոյ տիրեաց ՚ի ծովէ մինչև ՚ի ծով, և մինչ՚ի ծագս աշխարհի, և արեամբն իւրով վերածեաց զարգելեալս ՚ի բանտի, որ է դժոխն:

## Գլուխ Վեշտասաներորդ

### Յաղագս թէ մարմինն քի ոչ եւտես զապականութի ՚ի գերեզմանի :

ՄԱրմինն քի վն այնորիկ ո՛չ եւտես զապականութի, զի եր միաւորեցեալ ընդ աստուածութեն անձնաւորապէս : Ուստի զկնի սատարագելոյ զնոյնն հօր ամ ՚ի վր խաչին վն կեցութե ազգի մարդկան. վերստին կենդանացոյց զնա անապականապէս, և յարեաւ ՚ի գերեզմանէն. Եւ զայս վկայէ մարգարէն Դաւիթ ՚ի սաղմոսն. 15. ՚ի թիւն 8. ասելով, Նախատեսանէի զտր առաջի իմ յամ ժամ. զի է ընդ աջմէ իմէ, զի մի սասանեցայց : Վն այսորիկ ուրախացաւ սիրտ իմ, եւ ցնծացաւ լեզու իմ, եւս և մարմին իմ վերահանգիցէ յուսով : Քանզի ոչ թողեսցես զհոգի իմ ՚ի դժոխում, եւ ո՛չ տացես սրբոյ քում տեսանել զապականութի :

Արդ զբանս զայսոսիկ, ո՛չ ասաց Դաւիթ վն ինքեան, զի նա զկնի մահուան ոչ յարեաւ ՚ի մեռելոց, այլ վն քի : Ապա ուրեմն մարմինն քի ՚ի գերեզմանի ո՛չ եւտես զապականութի : և հոգի նր ո՛չ յամեաց ՚ի դժոխս, այլ յարեաւ ՚ի մեռելոց :

## Գլուխ Եօթնևտասաներորդ

## Յաղագս թէ քս̅ ընդ աջմէ հօր բազմի ։

Քրիստոս յարեալ ՚ի մեռելոց, և ըստ հաճութե հօր ա̅յ ել ՚յերկինս, նստի ընդ աջմէ նորա, և հանուրք ազգ կազինք պարտին նմա երկիրպագանել. ո̅պ ասէ մարգարէն Դաւիթ. ՚ի սաղմոսն 109. ՚ի թիւն 1. Ասաց տ̅ր ՚ց̅տ̅ր իմ, նիստ ընդ աջմէ իմ, մինչև եդից զթշնամիս քոյս, պատուանդան ոտից քոց ։ Եւ ՚ի սաղմոսն 71. ՚ի թիւն 8. ասէ, Տիրեսցէ նա ՚ի ծովէ մինչև ՚ի ծով. և ՚ի գետոց մինչև ՚յեզերս ոլորտի երկրաց ։ իսկ ՚ի թիւն 11. ասէ, Եւ երկիրպագցեն նմա ա̅մ թագաւորք երկրի, ա̅մ ազինք ծառայեսցեն նմա ։ Ապա ուրեմն ըստ բանից այսոցիկ քս̅ նստի ընդ աջմէ հօր, և համայնք ազինք երկրի երկրպագելոց են նմա ։ Բայց ոչ վաղվաղակի ՚ի գալստեան նր̅, այլ զկնի մահուանն, յարութեն, համբարձմանն ՚ի յերկինս, և նստմանն ընդ աջմէ հօր իւրոյ, մինչ թշնամիք նորա, որք ոչ ընկալան զնա լինիցին պատուանդան ոտից նր̅, հաւատալով նկէնլով ՚ի նա ։ Այսպէս ընդ հանուր աշխարհ ընկա-

ընկալեալ զօրհնութի՟ նորա, արքայութե՟ն երկնից մասնակիցք եղիցին 'ի յաւիտեան ;

## Գլուխ Ութևտասներորդ.

### Յաղագս թէ Քս՟ տր՟ է բոլորի աշխարհի ։

’Յայնցանէ, զորս ասացաք 'ի վերոյ, բաւականապէս ծանուցաւ մեզ, թէ Քս՟ տր՟ ևդատաւոր իցէ ընդհանրոյ աշխարհի. Զի իւրաքանչիւր թագաւոր տր՟ է իւրոյ թագաւորութե՟. ևմեծագոյն քան զինքն ոչոք է 'ի թագաւորութե՟ իւրում, ևոչոք զպատուիրանաւ նորա զանցանել կարէ. զոր օրինակ 'ի թագաւորութե՟ այսմիկ պարսկականի, ով է որ կարիցէ ընդդիմանալ կամ անհնազանդ լինել հրամանի թագաւորին, որով հետև ոչոք է մեծագոյն քան զինքն ; Ապա ուրեմն Քս՟, որ ըստ հաճութե՟ն հյ՟ հօր կացուցեալ է թագաւոր 'ի վր՟ հանրոյ աշխարհի, ևժառանգորդ տիեզերաց, ունելով զտր՟ութի՟ իւր 'ի ծովէ մինչև 'ի ծով, ևստացուած նր՟ մինչև 'ի ծագս երկրի, համայնք ազինք ևթագաւորք ծառայ-

էն

էն 'նմա , ևերկիրպագանէն , ևաթոռ նորա ոպ̅ զօր երկնի , ևիբրև զարեգակն առաջի այ̅, ևոպ̅ զլուսինն լրացեալ 'իյերկինս, իշխանութի̅ նորա , իշխանութի յաւիտենական, որ ոչ բարձցի , ևտ̅րութի̅ նորա 'յազգաց 'ցազգս , ևոչ խանգարեսցի : ևայսպէս օրինադիր ևհրամանատու է համայնից բնակչաց երկրի, ոպ̅ ցուցաք 'իվերոյ :

## Գլուխ իննևտասներորդ .

## Յաղագս թէ քս̅ է 'յազգէն Դաւթի և ծնիցեալ 'իկուսէ 'իբեթղեհէմ քաղաքի :

Վկայութիւնքն առբերեցելովք 'ի վերոյ բաւականապէս հաւաստեցաք, թէ տ̅ր յս̅ է ճշմարիտ քս̅ն,զոր մարգարէք գալոց զոլ նախաճառեցին : իսկ այժմ տեսցուք ևհաստատեսցուք թէ քս̅ է 'իզաւակէ Դաւթի , ևորդի կուսին Մարիամու , ոպ̅ ևեբրայեցիք հակավկայեն . քանզի մայր Մարիամու էր Աննայ , ևհայր նորա Յովակիմ, իսկ Յովակիմ էր որդի Մատաթեայ , որ եղև որդի Ղևեայ . զաւակ 'իզաւակէ իջանելով մինչև 'ինաթան եղբայրն Սողո-

Սողոմոնի, և երկաքանչիւրն որդիք Դաւթի մարգարէին, ըստ որում ճառէ աւետարանն Ղուկասու: Ուրեմն Մարիամ 'ի կողմանէ հօրն է 'ի խնդրմանէ Նաթանայ, որ է որդի Դաւթի, իսկ Աննայ դուստր Մատթանայ, որ եղև որդի Եղիազարու, և այսպէս զաւակ 'ի զաւակէ մինչև 'ի Սողոմոն որդի Դաւթի և եղբայր Նաթանայ վերոգեցելոյ: Ապա ուրեմն սրբուհի կոյսն Մարիամ 'ի կողմանէ հօր և մօր է դուստր Դաւթի: Ուրեմն և տր̃ յս̃ 'ի կողմանէ ծնողաց է որդի Դաւթի և ժառանգորդ իշխանութե̃ և թագաւորութե̃ նորա: Բայց զգուշաբար նկատելիք են աստ՝ բանք աւետարանչացն սրբոց, մի գուցէ ոք զ յս̃ վարկիցէ գոլ որդի Յովսեփայ ըստ մարմնոյ, քանզի յս̃ 'ի մաքրագոյնեղէ յարենէ կուսին Մարիամու յղացաւ, այլոչ 'ի յերանացն Յովսեփայ. զի Յովսեփ ոչ մերձեցաւ առ կոյսն Մարիամ, այլ միայն փեսայացաւ նմա, զի մի եբրայեցիք տեսանելով յղացեալ զնա թարց առն քարկոծիցեն. Եւ զի էր սովորութի̃ և օրէն, հրէից, զի դստերք նոցին պսակաւ շարազուգեին ընդ արանց, 'ի համազգակցութիս իւրեանց. Ուստի և սրբուհին Մարիամ որ էր 'ի զաւակէն Դաւթի, եղև ընդ Յովսեփայ փեսային իւրում: Քանզի վերոգրեցելոյն Մատ-

Մատթանայ երեք ծնունդք եղեն, ուստր մի անուամբ Յակոբ. և երկու դստերք. որոց մինն կոչիւր Սաբէ. և միւսն Աննա: 'ի Սաբէէ ծնիցեալ եղև Եղիսաբէթ կինն Զաքարեայ, որև մայր եղև Յովհաննու մկրտչին: և'Յաննայէ ծնիցեալ եղև Մարիամ կոյսն: Աստուստ Յակոբ է հայր Յովսէփու ամուսնացելոյ ընդ կուսին Մարիամու. Եւ մայր կուսին Մարիամու է քոյր Յակոբայ: իսկ Մատթան է պապ Երանուհւոյն Մարիամու և Յովսէփայ. Եւ երկոքեանս այսոքիկ են 'յազգէն Դաւթի: Այս ուրեմն Յովսէփ ամուսինն Երանուհւոյն Մարիամու է փեսայ Յովակիմայ. Աստուստ տ̅ր յ̅ս̅ որդի Յովսէփայ ասացաւ, զի մի հրէայքն գշարացեալք կարկածիցէին զՄարիամ կոյսն: Բայց յ̅ս̅ ոչ եղև յղացեալ 'ի սերմանէ առն, այլ 'ի զօրութ̅է հոգւոյն սրբոյ. և յարենէ մաքրագունեղէ Երանուհւոյն Մարիամու. Ուստի ինքն Երանուհին Մարիամ զինի ծննդեանն կոյս մնաց, ոպ̅ և նախ քան զծընանիլն զտ̅էրն մեր յ̅ս̅ ք̅ս̅: Եւ այսպէս կնա միշտ կոյս ճանաչեմք և հաւատամք. Ուրեմն տ̅էրն մեր յ̅ս̅ ք̅ս̅ ծնիցեալ եղև 'ի կուսէ ըստ նախագուշակութ̅է մարգարէիցն: Այլև տ̅էրն մեր յ̅ս̅ ք̅ս̅ ծնաւ 'ի բեթղէհէմ քաղաքի ըստ մարգարէիցն. և թագաւորք երեք հմուտք

իմաս-

իմաստութե͞ եկին ՚յարեւելից երկրպագանել
նմա . որոց մինն էր ՚ի եթովպիոյ . երկրորդն
՚ի հնդկաց . եւերրորդն ՚ի պարսից ;

Գլուխ վաթսաներորդ .

Յաղագս թէ ք͞ս ծնիցեալ եղեւ ՚ի ժամանակի
այնմիկ ՚նորում ոչ թագաւոր գոյր եւոչ
դուքս ՚ի ցեղէն Յուդայի :

Վերջին թագաւոր ՚ի ցեղէն Յու-
դայի եղեւ Սեթեկիա . ո͞պ
վկայէն գիրք եբրայեցւոց , որեւ
՚ի ձեռն Նաբուգոդոնոսորայ
գերեցեալ , վարեցաւ ՚ի Բաբե-
լոն , եւանդ մեռաւ ;

Իսկ զկնի նորա այլոք թագաւոր ՚ի զաւա-
կէն Յուդայի ոչեղեւ . այլ միայն իշխանք
ոմանք , որոց վերջինն , ո͞պ պատմէ Յովսէփոս
եբրայեցին , եղեւ Յաննիա հայր Մելքեայ , որ
էր հայր Ղեւեայ . եՂեւի հայր Մատաթեայ .
որ եղեւ հայր Եղիակիմայ , այսինքն , Յովակիմայ
որ էր հայր սրբուհւոյն Մարիամու ՚յորմէ
ծնաւ ք͞ս : Ուրեմն տ͞րյ͞ս է ՚ի զաւակէ Դաւթի
ծնիցեալ ՚ի ժամանակի յայնմիկ ՚նորում ոչ
թագաւոր գոյր եւոչ իշխան ;

Գլուխ

## Գլուխ Քսանևմիերորդ .

### Յաղագս թէ ո̅ր յս̅ զքանչելիս արար ։

ԶՈր ինչ Քս̅ գործելոց էր ՚յաշխարհի աստ, մարգարէքն սբ̅ք նախագուշակեցին, ըստ որում և զքանչելիս նորա . Ուստի մինչ Յովաննէս մկրտիչ առաքեաց զաշակերտս իւրս առ յս̅ ասելով , Դու ես որ գալոց էիր , թէ այլում ակնկալցուք , զինչ ասես , զո՞րպիսի պատասխանի տարցուք այմ, որ առաքեացն զմեզ։ Պատասխանեաց յս̅ . գնացէք և պատմեցէք Յովհաննու , զոր լուայք և տեսիք , կոյրք տեսանեն , կաղք գնան , բորոտք սրբին , խուլք լսեն , մեռեալք յառնեն , աղքատք աւետարանին . և այլն . Եւ զայսոսիկ ոչ ասաց միայն բանիւ , այլ և գործով կատարեաց , զի յորժամ ընդ քաղաքս և ընդ գիւղս անցանէր , զհիւանդութիւնս և զախտաժէտութիւնս զանազանս բժշկէր , զցաւս և զտկարութիւնս փարատէր , զդևս հալածէր , զայսահարս ազատէր , հողմոց և ծովու հրամայէր , զմեռեալս յարուցանէր , զկաղս գնացուցանէր և զկոյրս լուսաւորէր . Բայց զայս ամ̅ կուրացեալքն հրէայքըն

կղմե-

կղմեցեալք ՚յանգիտութիս իւրեանց ոչ կամե-
ցան ճանաչել. Թէ կյայտնապէս տեանէին
զեղեալս ՚ի նմանէ. վ̃ս որոյ և ոչ գտցեն զա-
ւիթս ազպատճառանս անմեղութե։ Արդ՝
ասեմք առ նոսա, մի թէ ք̃ն գալոց, առաւել
քան զայսոսիկ առնելոցէր ՚նշանս, դուք աչօք
ձերովք տեսիք զյարութի մանկանն, զկան-
գնումն անդամալուծին, զկենդանանալն ՚Ղա-
զարու, զգնալն ք̃ի ՚ի վ̃ր ծովու. զհրամայելն
հողմոց և ծովու. և զայլս ոցին ՚նմանս, և զար-
մացայք ասելով, ո՞վ է սա, զի և հողմք և ծովք
հնազանդին սմա։ Եւ ո՛չ միայն զայս, այլև
աշակերտաց իւրոց ընձեռեաց զնոյն զօրութի
առնելոյ զքանչելիս, զորս մինչև ՚ցայս վայր
տեսանեմք, ո՛չ միայն ՚ի հոգեաց, այլև ՚ի մար-
մնոց, ՚ի յոսկերաց և ՚ի գերեզմաց ՚նոյին արտա-
գործիլ։ Զսոյն ևս աշակերտք աշակերտայն
գործեն, ՚ի զանազանս գաւառս և ՚ի թագաւո-
րութիս քրիստոնէից, ՚յորոց զբազումս ես
շարադրօղ գրգոյս Պօղոս փիրօմալուս աչօք
տեսի ; Վ̃ն զի ՚ի թուականութե մերում.
1644. ՚Նամսեանն օգոստոսի, ՚ի քաղաքին
Սուրիանի, ՚ի գաւառին Գալաբրիայ ՚յեկե-
ղեցւոջ սրբոյն Տօմինիկոսի, ուր էին բազմու-
թիք մարդկան ժողովեցեալք իբրև հարիւրից
հազարաց ՚ի խօնախմբութի, և ես և ընկերա-
կիցք

կիցք իմ կայաք 'ի սպասու սրբոյ սեղանոյն ,
ևմատուցան երկու պատանեակք, մինն տաս-
նամեայ 'ի քաղաքէն Մայիդայ , համր ևան-
դամալոյծ ևամենևիմբ տապղարացեալ . իսկ
միւսն հնգետասանամեայ կոյր 'ի ծնէ , ևան-
կեալք առաջի սրբոյն խնդրէին զառողջութի,
ևիսկոյն շնորհօքն այ ևմիջնորդութբ սրբոյն ,
կոյրն 'ի ծնէ լուսաւորեցաւ երկոքումբ աչօքն .
ևանդամալոյծն ևհամրն զարձակումն լեզուի
ևզամբողջութի անդամոցն ընկալաւ , 'ի զար-
մացումն ամենից ժողովրդոց : Արդ 'նայսմիկ
եկեղեցւոջ ոչ անցանեն աւուրք նորս ոչ գոր-
ծիցին սքանչելիք . Ուստի և'յամենից գաւա-
ռաց ևքաղաքաց ընթանան առ նա , ևթա-
գաւորք ևիշխանք ընծայիւք այցելանեն նմա.
Իսկ զայլս սքանչելիս , որք 'ի զանազանս տե-
ղիս քրիստոնէից օրըստօրէ տրտագործին, ո՞
կարէ պատմել . Ապա ուրեմն ոչ միայն ք՚
այլև ծառայք նորին գործեցին ևգործեն մին-
չև 'ցայսօր զսքանչելիս :

## Գլուխ Քսաներկուերորդ.

### Յաղագս թէ քս չարչարեցաւ եմեռաւ :

ԶՄահ եղչարչարանս քի համայնք մարգարէք վկայեցին. ոպ Դաւիթ, Դանիէլ, Սողոմոն, Եսայիաս, եայլք. որք զանազանիւք պարագայիւք բացայայտէն զնոյնս; քան զի Տէրն մեր յս քս ոպ զոչխար 'ի սպանդ վարեցաւ, եւ վս մեղաց մերոց 'ի մէջ աւազակաց խաչեցաւ, վս սպանչաց իւրոց աղօթեաց առ հայր ասելով Թող սոցա, զի ոչ գիտեն, զինչ գործեն, խոշտանկեցաւ, ապտակեցաւ, թքեցաւ, փշովք պսակեցաւ, զմահ խաչի 'ի յանձն էառ եւ մեռաւ, վս զի զինքն որդի այ ասաց, եւ հայր իւր կոչեաց զած. Ուստի եւ խաչահանուքն ասէին 'ցմիմեանս, եթէ որդի այ իցէ, փրկեսցէ զանձն իւր 'ի ձեռաց մերոց : Եւ ըստ մարգարէութեն Դաւթի, ծակեցին զձեռս եւ զոտս Ն[illegible]ս, բաժանեցին զհանդերձս Նորա, եւ 'ի վր պատմուճանի Նորա վիճակս արկին : Եւ Յուդա միւն 'յաշակերտաց իւրոց մատնեաց զՆա 'ի ձեռս թշնամեաց Նորին, որք եւ արբուցին Նմա զքացախ լեղեաւ խառնեցելով, Զերեմիոյ սրծաթեայ զՆա վաճառեցին,

եյետ

նշեա վճարելոյ 'ի նմա զբնաւս դժնաբարոյու-
թիս իւրեանց, ապանին զնա 'ի ժամանակին
այնմիկ, զոր մարգարէք նախածանուցին. 'Ցո-
րոց նէղ աան չորրորդ, որ 'ի գլուխն 7. 'ի թիւն
28. ասէ. քանզի յայտնեսցի որդի իմ Յս՟
հանդերձ այնոքիւք, որք են ընդ նմա, նվայել-
չասցին որք մնացեալքն են յամս չորսհարիւր,
Եւ եղիցի զկնի ամաց այսոցիկ նմեռցի որդի
իմ քս՟ : Վկայութիս այս յայտնի իմն հաւաս-
տութի է զքս՟է, թէ յաղագս մնութեն նթէ
յաղագս մահուան նորա. Ապա ուրեմն ըստ
բանից մարգարէիցն չարչարեցաւ նմեռաւ քս՟,
և'յերրորդում յաւուր յարեաւ; Բայց զերիս
այսոսիկ աւուրս, ոչ իմանանք աւուրս կատա-
րեալս, այլ ըստ սովորութե գրոց մնայնոց
զմասն փոխանակ բոլորի առնումք, այսինքն,
'յիններորդէ ժամու ուրբաթու աւուր 'Նո-
րում մեռաւ քս՟, նյերեկոյի եղաւ 'ի գերեզմանի,
մինչև 'ցկեսգիշերն նոյնոյ ուրբաթուն թուեմք
զմի օրն : և'ի կիսոյ գիշերոյն յայնմանէ մին-
չև 'ցկէսգ իշերն շաբաթուն, թուեմք զերկ-
րորդ օրն. իսկ 'ի միջոյ գիշերոյն յայնմանէ մին-
չև 'ցարշալոյսն կիրակէի աւուր, 'յորում ժա-
մու յարեաւ քս՟ 'ի մեռելոց, թուեմք զերրորդ
օրն : Եւ ըստ այսմ ասեմք, թէ յարեաւ քս՟
'ի մեռելոց 'յերրորդում աւուր, կյարութեն

իւրով զսբ՟ս ա՟մս, որք էին 'ի դժոխս ընդ ին-
քեան վերաբերեաց, ևմինչև 'ցքառասուն
աւուրս կենցաղավարեցաւ ընդ աշակերտաց
իւրոց, ևուսոյց նոցա զբնաւս հաճութ՟իս ա՟յ,
ևհրամայեաց նոցա քարոզել զաւետարանն
իւր ընդ ոլորտս տիեզերաց: Այլև պատուի
րեաց նոցա զի մի' մեկնիցին 'յերուսաղէմէ,
մինչև առաքիցէ առ նոսա 'յերկնից զմխիթա-
րիչ հոգին ս՟բ: Եւզկնի այսոցիկ բանից համ-
բարձաւ 'յերկինս, ևնստաւ ընդաջմէ հօր
ա՟յ ամենակարողի: Ուստի ևգալոցէ 'յաւուր
դատաստանի մեծի 'ի դատել զկենդանիս
ևզմեռեալս:

Ուրեմն ըստ բնաւից այսոցիկ վերոգրեցելոցն
բանից ա՟ծայնոց, տ՟րն մեր յս՟ քս՟ ծնաւ 'ի կոյ-
սէն Մարիամայ 'ի ցեղէն Դաւթի 'յարմատոյն
Յեսեայ 'ի բեթղեհեմ քաղաքի 'յերկրին յու-
դայի, 'ի ժամանակի 'յորում ոչ գոյր թագաւոր
ևիշխան, ևարար զքանչելիս բազումս, ևըզ
նոյն իշխանութ՟ի սքանչելագործութ՟ե շնոր-
հեաց աշակերտաց իւրոց, մեռաւ, ևյարեաւ
ըստ մարգարէիցն վկայութ՟եց: Բայց զայսո-
ւիկ բնաւս, զորս հաւաստեցաք 'ի վերոյ ցուց-
ցուք այժմ վերստին ըստ աւետարանականի
վկայութ՟են. առ 'ի հաստատել թէ յս՟ քս՟ է
ճշմարիտ ա՟ծ ևմ՟ր բոլորից:

Գլուխ

## Գլուխ Վսանևերեքերորդ .

### Յաղագս թէ յս քս, է իշխան եդուքս եթագաւոր ըստ աւետարանականի վկայութե :

Տէրութիւն իշխանութիւն եթագաւորութինքի յայտնապէս Յառի ՚յաւետարանս . եթէ ած հայր առաքեալիցէ զնա ՚յաշխարհ , զի համայնք ազգ ազինք ՚ինմանէ զօրհնութի ընկալցին , ըստ որում խօսեցեալ էր առ Նախահայրն : իսկ օրհնութիս այս է հաշտութի ՚իմէջ մարդկան եայ , քանզի ապստամբեցեալք էին մարդիք , նախ յանցանօք նախահօրն Ադամայ . եերկրորդ անհնազանդութեքն իւրեանց յատկականօք, եիւրաքանչիւրոք ՚իթիւրս խոտորիւր , ոպ ասացաւ ՚իվերոյ. Բայց զայսպիսի ըղձալի հաշտութիս ոչոք սոսկ մարդ յօրինել կարաց . գոլով իւրաքանչիւրոյն զգածեցեալք պտաւորութե իւիք. Այլ ոչ ՚իձեռն պատարագաց ցլուց ենոխազաց վէր ընդունիլ մարթիւր : Ուստի որն մեր յս քս հայելով ՚իթշուառութիս ե՚ի հարկաւորութիս մարդկայնոյ բնութե , խօսեցաւ առ հայր

իւր բերանոյն Դաւթի ասելով. Զզոհ եզպատարագ ոչ կամեցար, այլ զլսելիս կատարեցեր ինձ, զողջակէզն եզվս̅ մեղացն ոչ խնդրեցեր. յայնժամ ասացի. ահա գամ. 'ի գլխոյ գրքոյն գրեցեալ է զինէն. զի առնիցեմ զկամս քո: Եւ այսպէս էկն առ'ի կատարել զկամս ա̅յ: Իսկ կամք ա̅յ այն էր, զի զմեղս ամենեցուն մարդկան բարձեալ 'ի վ̅ր ինքեան, զինքն 'ի կեցութի̅ նոյին նուիրիցէր, ո̅ր ասէ Եսայի մարգարէն, ամենեքեան մեք իբրեւ զոչխարս մոլորեցաք, եւ իւրաքանչիւրոք խոյս ետ 'ի ճանապարհ իւր, եւ եղ տ̅ր 'ի նմա զանօրէնութի̅ մերոյ ամենից: Եթէ վս̅ չարագործութե̅ ժողովրդեան իմոյ բախեցի զնա, եւ տացէ զամբարիշտս փոխանակ դամբարանի, եզփարթամս փոխանակ մահուան իւրոյ. վս̅ այնր զի զանիրաւութի̅ ոչ գործեաց, եւ ոչ գտաւ նենգութի̅ 'ի բերանոջ նորա: Եւ ըստ այսմ հնազանդեցաւ հաճոյթե̅ հօր վս̅ մեղաց մերոց, զի նա միայն էր առանց մեղաց եւ մաքուր 'յամենից բծից: Ուստի գալուստն ք̅ի 'յաշխարհ ոչէր զի վաղվաղակի զիշխանութի̅ եւ զթագաւորութի̅ առցէ. ըստ որում կարծէին հրեայք, զի եթէ այսպէս իցէր, եկեալ իցէր մեծաւ իշխանութե̅ւ եւ փառօք. բայց նա էկն իբրեւ զաղքատ հե-

ծեալ

ծեալ 'ի վ՟ր իշոյ 'ի կրել զչարչարանս, վ՟ս բարձման, և շիջուցման մեղաց. վ՟ս որոյ և խոնարհութբ՟ և ստրկութ՟ մեծաւ կենցաղավարեցաւ, անարգ և նուաղ քան զա՟մս որդիս մարդկան, և առոչինչ համարեցաւ, ո՟պ ասէ Եսայի մարգարէն: Եւ այս է գրեցեալն 'ի Յոհաննու աւետարանչէն 'ի գլուխն 3. 'ի թիւն 14. Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն 'յանապատի, այսպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ, զի ա՟մ որ հաւատայ 'ի նա, մի՛ կորիցէ, այլ ունիցի զկեանսն յաւիտենականս. քանզի ոչ առաքեաց ա՟ծ զորդի իւր 'յաշխարհ, զի դատիցէ զաշխարհ, այլ զի կեցուցանիցի աշխարհ նովաւ: Աստուած զինքն հօր բանաւոր պատարագ մատոյց վ՟ս մեղաց մերոց, և արար զհաշտութի 'ի մէջ ա՟յ և մարդկան, և ազատեաց զժողովուրդ իւր 'յանիծից: Եւ յետ կատարելոյ զա՟մ հնազանդութի ել 'յերկինս, ուր և թագաւորէ 'ի յաւիտեանս յաւիտենից, և թագաւորութե նորա վախճան մի՛ լիցի. ո՟պ ասէ Դանիէլ 'ի գլուխն 7. 'ի թիւն 14. Պետութի նորա պետութի յաւիտենական, որ ոչ բարձցի, և թագաւորութի նորա, որ ոչ եղծանիցի: Ուրեմն ք՟ս էկն, զի 'նախ զանձկութի և զչարչարանս կրիցէ, և զմահ 'յանձն առնուցու, իսկ յետոյ մինչև 'ի յաւիտեան թագաւո-

րիցէ. Ուստի եՄատթէոս 'ի գլուխն 18. 'ի թիւն 11. ԵւՄարկոս 'ի գլուխն 10. և'ի թիւն 45. ասէ՛. Քանզի եւ որդին մարդոյ ոչ էկն զի սպասաւորիցիւր նմա, այլ զի սպասաւորիցէր, եւտայցէր զ՛հոգին փրկա՛ն փոխանակ բազմաց: Իսկ Ղուկաս 'ի գլուխն վերջին 26. ասէ, Ուշապաքէն, զնոյնս պարտ էղև քրիստոսի կրել, եւ այսպէս մտանել 'ի փառսն իւր: Ապա ուրեմն տ͞ր յ͞ս էկն, զի նախ չարչարիցի եւ մեռանիցի և'ի ձեռն մահուան իւրոյ զպարտս անհնազանդութե͞ մերոյ վճարիցէ, և ընդ արարչին մերում զմեզ հաշտեցուցանիցէ, եւ ժողովրդոց իւրոց զօրհնութի տայցէ:

Եւ թէպէտ այսօրիկ ամենեքեան ճշմարիտք են, սակայն ոչ վ͞ս այսորիկ զիշխանութի թագաւորութե͞ իւրոյ 'իբաց ընկէց, այլ ջատագովեաց, ըստ որում ասէ Մատթէոս 'ի գլուխն 16. 'ի թիւն 27. Քանզի որդի մարդոյ գալոց է փառիւ հօր իւրոյ:

Եւ Ղուկաս 'ի գլուխն 19. խօսելով 'զամբոխից աշակերտայն 'ի թիւն 37. ասէ, թէ մինչ ակսան խնդութե͞ երգել զօրհնութիւս յի ասելով օրհնեցեալ թագաւորն, որ էկն 'յանուն տ͞ն, խաղաղութի 'յերկնի, եւ փառք 'ի բարձունս. Եւ փարիսեցիքն լուեալք կամէին, զի սաստիցէր նոցա, իսկ յ͞ս պատասխանեաց նոցա, զի եթէ

սոքա

սոքա լռիցեն, քարինքդ աղաղակեսցեն :

Նաև յորժամ արտաքսեաց 'ի տաճարէն զգնօղս ևզվաճառօղս, զթագաւորական իշխանութի 'ի կիրէարկ ասելով, տունն իմ տուն աղօթի կոչեսցի : Եւզայլս սոցին նմանս արարս, որովք նշանակեաց զիշխանութի իւր արքայական. Բայց յորժամ ամբոխն հրէից կամեցաւ կացուցանել զնա թագաւոր, ոչ համեցաւ ինքն, այլ փախեաւ 'ի նոցանէ, վս զի թագաւորութի նորա տրեցեալ գոյր 'յայ, ևոչ 'ի մարդկանէ. Որպ ասէ Դաւիթ 'ի սաղմոսն երկու, իսկ ես կացուցեալ եղէ թագաւոր 'ի նմանէ 'ի վր սիոնի լերին սրբոյ նորա : Այլև զի հրէայքն կամէին 'ի ձեռն նորա ազատիլ 'ի գերութենէ հռոմայեցւոց, բայց տրն մեր յսքս ոչէր եկեալ, զի զազգս ևզազինս սրով յաղթահարիցէր, ևզթշնամիս նոցին պարտիցէր, այլ զի 'ի ձեռն շնորհի իւրոյ առաջնորդիցէր 'յարքայութին երկնից, ևհաւատացելոց իւրոց, իսկև յուսացելոց զսէր ևզճշմարտութի ուսուցանիցէր: Այլև ոչէր եկեալ զի սպանցէր զայլս, այլ զի ինքն սպանանիցիւր ևզանձն իւր տայցէր փոխանակ բազմաց. Եւ այս է, զոր Դաւիթ 'ի սաղմոսն 109. 'ի թիւն 7. ասէ, 'ի յուղխոյ 'ի ճանապարհի արբցէ, վասն այնորիկ բարձրացուսցէ զգլուխն : այսինքն քս նախ չարչարեացի

բեացի

րեսցի և խաչի համբերեսցէ, և յետ այնորիկ բարձրասցուսցէ զգլուխ իւր, զի մշտնջենաւորապէս թագաւորեսցէ. Քանզի ած կամեցաւ մեղմաբար զբնաւս թշնամիս նր դնել ՚ի ներքոյ ոտից նորա: Եւ կատարեսցի այս նախասահմանութի, յորժամ համայնք ցեղք երկրի, և հանուրք թագաւորութիք նմա ծառայեսցեն և երկիրպագանիցեն: Որպէսն տէրն մեր յս քս է դուքս և թագաւոր, և տիրեսցէ աշխարհի ՚ի յաւիտեանս յաւիտենից, ըստ որում այժմ սկսեցեալ տեսանեմք:

## Գլուխ Քառասնեչորսերորդ:

### Յաղագս թէ քս է քահանայ և հովիւ ըստ վկայութե սրբոյ աւետարանին:

Քրիստոս ճշմարտապէս քահանայ է, որ ոչ զոչխարս և ոչ զառջառս մատոյց, ոչ զԱհարոն, այլ զհաց և զգինի, այսինքն, զմարմին և զարիւն իւր ՚ի ներքոյ տեսակաց հացի և գինւոյ, զնշանակեցեալս ՚ի Մելքիսեդեկէ, և զձևակերպեցեալս ՚ի յոչխարս և յառջառս Ահարոնի, քան զի ոչ զոչխար ՚ի սպանդ վարեցաւ, և ոչ

եբաց

եբայ գրերան իւր ըստ մարգարէութեն Եսայ-
եայ ։ Եւ այսպէս զինքն անարատապէս պա-
տարագեայ , ըստ չորից աւետարանչացն , եվ̄
քաւութե̄ մեղաց բոլորի աշխարհի , կամաւո-
րապէս 'յանձն էառ զմահ ։ Ուրեմն քահա-
նայ է ճշմարտապէս ։ Է և ս հովիւ, ըստ որում
վկայէ աւետարանն Յոհաննու , 'ի գլուխն 10.
'ի թիւն 11. Ես եմ հովիւն բարի, հովիւն բարի
տայ զհոգի իւր վս̄ ոչխարայ իւրոց ։ և'ի թիւն
14. ասէ Ես եմ հովիւն բարի, և ճանաչեմ զիմս
և ճանաչեն զիս իմոյքն ։ Իսկ 'ի թիւն 16. ասէ,
և զայլս ոչխարս ունիմ , որք ոչեն 'յայսմանէ
փարախէ , և զայնոսիկ պարտէ ինձ ածել,
և զձայնն իմ լսիցեն , և եղիցի մի փարախ , և մի
հովիւ ։ Ոչխարք այսոքիկ, զորոց խօսի քս̄, են
ազգք մարդկան , որք հետևելով կռապաշտու-
թե արտաքսեցան 'ի հօտէ ա̄ծապաշտից, և ցրը-
ւեցան . ուստի եկն քս̄ առ կոչել զամենեսեան
ոպ̄ հովիւ ճշմարիտ և դուքս համայնից ոչխա-
րաց , այսինքն, ամենից ժողովրդոց , զի զամե
նեսեան միահաղոյն գումարիցէ 'ի մի փարախ
'ի լսել զկենարար ձայնն Նորա ։

Գլուխ

## Գլուխ Քսանեհինգերորդ :

### Ցաղագս թէ ք̅ս է և Մարգարէ ըստ աւետարանականի վկայութե̅ :

Մարգարէութի̅ն ք̅ի վկայի 'ի բանից իւրոց, որ 'ըն յաւետարանում Մատթէոսի 'ի գլուխն 13. 'ի թիւն 57. և 'ըն յաւետարանում Մարկոսի 'ի գըլուխն 6. 'ի թիւն 4. ասէ :

Զի ոչէ մարգարէ առանց պատուոյ, եթէ ոչ 'ի հայրենիւոջ իւրում: Իսկ 'ըն յաւետարանում Ղուկասու 'ի գլուխն 7: 'ի թիւն 16. մինչ տեսին զսքանչելին, զոր արար յ̅ս, ասացին : Զի մարգարէ մեծ յարեաւ 'ի մեզ : Այս ուրեմն ք̅ս մարգարէ է, զի մարգարէացաւ 'նախ 'ի գուշակելն զմահն, զխաչիլն, զյարութի̅ն 'ի մեռելոց, և զհամբարձումն իւր 'յերկինս :

Երկրորդ 'ի նախագուշակելն զաւերումն երուսաղէմի : Երրորդ 'ի նախաճառելն զտարածումն աւետարանականի ճշմարտութե̅, զդարձումն հեթանոսաց, և զկամակորութի̅ս հրէից : Չորրորդ 'ի նախագիտելն զսքանչելագործութի̅ս աշակերտացն 'յանուն իւր, զհալածանս, զչարչարանս, և զմահս նոցա :

Հին-

Հինկերորդ, ՚ինախասէլն զտառապանս եզհա-լածմունս, զորս կրելոց էին հաւատացեալքն նա, եթէ որպէս յաղթօղք գտանելոց էին ՚ի վախճանի : Այլ Մօսէս գրեաց վ̃ նորա, որպ̃ և ինքն տր̃ յս̃ ասէ ՚Նաւետարանում Յոհաննու, զի եթէ հաւատայիք Մովսէսի, հաւատայիք արդեօք ինձ, զի նա վ̃ իմ գրեաց: Ուստի վայ այնոցիկ, ըստ մարգարէիս այսորիկ, որք ոչ հաւատային ՚ի տր̃ յս̃, եւ տակաւին ոչ կամին հաւատալ, քան զի ինքն ա̃ծ վրէժխնդիր լինելոց է նոցա :

## Գլուխ Քսանևվեցերորդ :

### Յաղագս թէ ք̃ս է օրինադիր ըստ աւետարանականի վկայութե :

Օրինադիր ասեմք զք̃ս, զի զօրէնս նորա քարոզեաց ՚ի լերինն Սիոնի, և՚յԵրուսաղէմ, քանզի անտի ակնկալութի ունէին ազգք հազինք, ըստ խոստման մարգարէիցն, որք ասացին, թէ ՚ի Սիոնէ ելցէ օրէնք, և բան տն̃ ՚յԵրուսաղէմ :

Իսկ Նոր օրէնս այս է օրէն ըղձի եւ սիրոյ

որպ̃

ոպ̃ աւետարանն Յոհաննու 'ի գլուխն 13. 'ի թիւն 34. ասէ, զպատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս, ոպ̃ սիրեցի զձեզ, զի և դուք սիրիցէք զմիմեանս: Զսոյն և Մատթէոս 'ի գլուխն 22. 'ի թիւն 39. սիրեսցես զմերձաւոր քո իբրև զքեզ: Ուրեմն պատուիրանս այս, նոր ինն է, քանզի ոչմիայն զբարեկամս, այլ և զթշնամիս հրամայէ սիրել. ըստ որում խօսի Մատթէոս 'ի գլուխն 5. 'ի թիւն 44. ասելով: Սիրեցէք զթշնամիս ձերս, բարիարարէք այնոցիկ, որք ատեն զձեզ և աղօթեցէք վ̃ս հալածողաց, և զրպարտողաց զձեզ: Եւ 'յայլում տեղւոջ հրամայէ թողուլ զպարտիս պարտաւորաց մերոց, որ քանիցս զմեզ գթեցուցանիցեն: Այլև զի մի՛ ումեք մեղիցեմք, և մի՛ հատուցանիցեմք զչար փոխանակ չարի. Եւ այսորիկ սրբոյ օրինի զկանոն իւրն համառօտ կարգեաց ասելով, զորինչ կամիք թէ առնիցեն ձեզ մարդիք, նոյնպէս արարէք և դուք նոցա, և զորինչ ոչ կամիք թէ առնիցեն ձեզ այլք, և դուք մի՛ առնէք նոցա: Եւ այս պատուիրանս լուսաւոր և դիւրին 'յամենեցուն վերընդունելի է, գոլով ըստ բնութե̃, քանզի իւրաքանչիւր հաճութի̃ և փափաք զայս խնդրէ, և յօժարի:

Եւ բաց 'յայսմանէ զայլս բազումս օրէնս

Նորս

նորս հրամայեաց, զորս օրէնն Մովսիսական ոչ հրամայէ. Քանզի նա ասէ, մի սպանաներ. Իսկ Սա ասէ, մի՛ բարկանար եղբօր քում՝ ՚ի տարապարտուց, որ է նոր նպատականագոյն: Նա ասէ, մի՛ շնար; Իսկ սա ասէ, եթէ հայիցիս ՚ի կին մարդ առ ՚ի ցանկանալոյ նմա, անդէն շնացար ՚ի սրտի քում: Նա ասէ, մի երդնուցուս սուտ. Իսկ սա հրամայէ ամենեւին մի՛ երդնուլ, մի՛ ՚յերկինս եւ մի՛ ՚յերկիր եւ մի ՚ի գլուխ քո, եւ մի՛ ՚յայլինչ, այլ եղիցի ձեր այո՛ն այո, եւ ո՛չն ոչ: Նա պատուիրէ ասելով, ակն ընդական, եւ ատամն ընդ ատաման; Իսկ սա ասէ, մի կալ հակառակ չարին, այլ թողուլ զպարտս միմեանց, եւ շնորհել իրերաց: Նա ասէ, սիրեսցես զսիրելիս, Իսկ սա հրամայէ սիրել եւ զթշնամիս. քանզի եթէ զայս առնիցէք ասէ, եղիցիք որդիք հօր ձերոյ երկնաւորի, որ զարեգակն իւր ծագէ ՚ի վ͞ր չարաց եւ բարեաց: եւ ածէ զանձրեւ իւր ՚ի վ͞ր արդարոց եւ մեղաւորաց: Արդ՝ այսոքիկ ամենեքեան նորք են, եւ գեր քան զօրէնս Մովսէսի: Իսկ ինքն ք͞ս ասէ ոչ եկի լուծանել զօրէնս, այլ լնուլ, քանզի որինչ ՚յօրէնս Մովսէսի պակասիւր ՚ի սրբութ͞ն եւ ՚ի կեցութ͞ն հոգեաց, զնոյն օրէնն ք͞ս գերազանցապէս կատարունակեաց:

Դարձեալ

Դարձեալ նոր ասեմք օրինացն քո՛, զի զարձակումն կնոջ մերժեաց և արգել, ասելով քանզի 'ի սկզբանն ոչ եղև այդպէս, իբր կամելով մեզ ծանուցանել զայն, որ գրեցեալ է 'ի գիրս ծննդոց, թէ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեանն 'ի մարմին մի: զի զոր ա͞ծ զուգեաց, մարդ մի՛ մեկնիցէ: Եւ որ արձակէ զկին իւր, արկցէ զնա 'ի շնութի͞, այլ և որ զարձակեցեալն առնու շնայ:

Դարձեալ նոր ասեմք, զի զքահանայութի͞ւն հաստատեաց, որ է ըստ կարգին Մելքիսեդեկի, և զպատարագն հին փոխարկեաց 'ի հաց և 'ի գինի, այսինքն, 'ի մարմին և 'յարիւն իւր, որովք զթողութի͞ մեղաց ընդունիմք, և զկեանս յաւիտենականս գտանեմք: Եւ այսորիկ սրբազանի պատարագիս 'ի հաստատիլն, իսկոյն առաջաւաց և ոչխարաց զենմունք խանգարեցեալք եղեն, ըստ որում տեսանեմք 'ի հազար վեցհարիւր եօթանասուն և հինգ ամաց, զի հրեայք զպատարագ ոչ ունին, զի եթէ զայսոսիկ զգուշապէս նկատէին և բարեպէս տեղեկանային, արդարև զք͞ս յ͞ս եկեալ արդէն ճանաչէին:

Դարձեալ նորասեմք, զի քո͞ եբարձ զխտրութի͞ կերակրոյն, մինչ առաջեաց զաշակերտա-

ւորս

իւրս քարոզել ղաւետարանն ընդ ամ աշխարհ հասայ , զորինչ առաջի ձեր դնիցեն կերիջիք : Եւ այս օրէն վերընդունելի հպատուկանացն է քան զառաջինն, քանզի հրամայէ զայնպիսիս , որք սրբեն զմարդ . հարգելու 'յայնպիսեաց, որք պղծեն զմարդ : Իսկ կերակուրք ոչ զսրբութի եւ ոչ զպղծութի առբերեն . Ըստ այնմ , որ ընդ բերանն մտանէ, 'յորովայնն երթայ , եւ արտաքս ելանէ, եւ ոչ կարէ պղծել զմարդն : Այլ պղծեն զմարդն , որք 'ի բերանոյն արտաքս գան , զի 'ի սրտէ անտի' ելանեն խորհուրդք չարք , շնութիք, պոռնկութիք , գողութիք , սուտվկայութիք, և հայհոյութիք , այսոքիկ են , որք ստուգիւ պղծեն զմարդն . եւ ոչ զայսինչ , կամ զայն ինչ ուտելն 'ի պէտս մարմնոյ : Այլև ամ կերակուր արարած այ է , ապա ուրեմն սբ է . զի զորինչ ստեղծ ած բարի է, ըստ վկայութեն Մովսէսի 'ի գիրս ծննդոց . 'ի գլուխն. I. Իսկ 'ի բաց կալն 'ի կերակրոց ոմանց հրամայեցաւ հրէից. քանզի էին խստասիրտք, անխմայք, հետեւողք զգայութեց իւրեանց , եւ նմանիք մանկանց, որք եթէ ոչ ունիցեն զկառ ավարից, ձգեն զձեռս իւրեանց 'ի հուրս, եւ անկանին 'ի զանազանս վտանգս : Այլև մանկտիք ըստ անանելեացն իւրեանց փոխարկեն զբարս , զի եթէ

ուտիցեն միշտ զմիս դաղանի ուրուք, զգենուն զբարս նորին : Այսպէս և հրէայք եթէ ուտէին զմիս աղուէսուց, աղուէսաբարոյք լինէին, այսինքն, նենգաւորք. և եթէ ուտէին 'ի զոհից կռոց, կռապաշտք լինէին. Ուստի ա̅ծ արգել զնոսա 'յայսպիսեաց մոլութեց 'ի ձեռն կերակրոց : Բայց ժողովուրդք քրիստոնէից որք զօրէնս, զիմացողութիւն, և զսէր 'ի մ̅նէ ընկալան, կեան ըստ բանականութե̅, և ոչ ունին զպէտս այսպիսեաց օրինաց մանկականաց. Բաւական է եթէ ունիցին զհաւատս առ տ̅ր յ̅ս, և զօրէնս նորա պահիցեն. Թէև ուտիցեն զմիս աղուէսուց և այլոց կենդանեաց, ոչ վ̅ս այնորիկ փոխարկեն զբնութիւս իւրեանց. Թէև ուտիցեն զզոհեցեալս կռոց, ոչ վ̅ս այնորիկ կռապաշտք լիցին : զի հետևին խելաց բանականութե̅. և ոչ ոգւոյ, եցանկութե̅ զգայարանաց. Գիտեն ճշմարտիւ թէ մի է ա̅ծ բարձրեալ, ամենակարօղ, տ̅ր տերանց, և արարիչ ամենեցուն :

Դարձեալ նոր ասեմք օրինի այսմիկ, զի 'ի քարոզութե̅ սորին բարձաւ հրաման թլփատութե̅, քանզի ոչ տ̅ր յ̅ս, և ոչ աշակերտքն նորա պատուիրեցին մեզ թլփատել, այլ 'ի բաց հերքեն զնա, որ տրեցեալ եղև Աբրահամու զարդուոյն իսրայէլի 'ի նշան ժողովրդեանն,

ճշմարտի

Ճշմարտի այ երկրպագողի, առ՝ ի որոշիլ ՚ի կռապաշտից: Բայց գալստեամբն քի բարձաւ թլփատութիւն, զի համայնք, ազգք եւ ազինք տիեզերաց անզանազանապէս կարիցեն դառնալ ՚ի կռապաշտութենէ առ հաւատն քի, ներնդունիլ ՚ի նմանէ զօրհնութիւն. Ապա ուրեմն նշանս այս զանազանիչ ազգաց ոչ եւս ունի զտեղի:

## Գլուխ Քսաննեօթներորդ:

### Յաղագս թէ էր քս թլփատեցաւ:

Թլփատեցաւ քս, զի ՚յօրէնս Մովսէսի գրեցեալ էր թլփատել զամս մանկունս ութօրեայս. Իսկ մինչ յս էր ութօրեայ, դեռ եւս նոր օրէնն ոչ էր հաստատեցեալ, եւ հինն տակաւին տեւէր, վասնորոյ հարկ եղեւ հնազանդիլ նմա:

Այլ եթէ քս ոչ էր թլփատեցեալ, հրէայքն ոչ երբէք անսային բանից նորա, այլ արտաքսէին զնա ՚ի միջոյ ժողովրդոց: Բայց մեզ պատուիրանս, այս ոչ եղեւ տրեցեալ. ուստի ոչ եմք պարտական թլփատիլ: զի ոչ է մեզ հարկ

 առնել

առնել զայն ա̅մ, զոր արար յ̅ս, այլ բաւա-
կան է, զի կատարիցեմք զհրամանս ք̅ի և ա-
շակերտաց Նորին. Վ̅ս այսորիկ ամենից քրիս-
տոնէից հարկ է մկրտիլ, զի Ինքն ք̅ս մկրտե-
ցաւ, և պատուիրեաց ամենեցուն մկրտիլ :
Ուստի և մինչ առաքեաց զաշակերտսն 'ի քա-
րոզութի̅ ասաց, գնացէք այսուհետև քարո-
զեցէք զաւետարանն ամենից ստեղծուածոց,
մկրտեցէք զնոսա 'յանուն Հօր և որդւոյ և հոգ-
ւոյն սրբոյ, և այլն: իսկ այլուրեք ասաց,
որ հաւատասցէ և մկրտեսցի, կեցցէ : իսկ որք
ոչն հաւատան, դատապարտեսցին: Սովա-
ւորեմք զերծանիմք 'ի բնաւից մեղաց մերոց, թէ
'յսկզբնականաց և թէ 'ի գործնականաց, և ըն-
դունելով զօրհնութի̅ 'ի ք̅է լինիմք ժառան-
գորդք արքայութե̅ երկնից: իսկ եթէ զկնի
մկրտութեն դարձեալ անկանիցիմք 'ի մեղս,
հաստատեաց զայլ ի̅մն բժշկութի̅, զի զմեղս
մերս խոստովանիցիմք քահանայից, որք եթէ
արձակիցեն զմեզ, եղիցուք արձակեցեալք
առաջի ա̅յ. Առ այս և տ̅ր յ̅ս զաշակերտս
Իւրս քահանայս կարգեաց, և ետ Նոյա իշխա-
նութի̅ կարգելոյ զայլս քահանայս, և թողլոյ
զմեղս ձրի, և ասաց, Առէք զհոգի ս̅բ, որոց
թողուցուք զմեղս, թողեցեալք լիցին Նոցա,
և զորս կապիցէք, կապեցեալք լիցին: Զայսո-
սիկ

սիկ եղբայրս սոյին նմանս պատուիրեաց մեզ ի ձեռն աշակերտաց իւրոց ։

## Գլուխ քսանևութներորդ ։

### Համառօտութիւն վերոգրեցելոցս ։

Քրիստոս օրէնսդիր մեզ եղև, զի զնոր օրէն քարոզեաց, այսինքն, զօրէն սիրոյ եղբօր ։ Իսկ զօրէնն Մովսիսի զոր եցեալն ի լերինն Սինայի ոչ եղոյծ, այլ ելից, և կատարունակեաց ի կեցութի հոգեաց մերոց. Եզէնաւս պատուիրանս յերկուս համառօտեալ միաւորեաց, այսինքն, ի սէրն Այ և ընկերին։ Զպատուիրանն որ վս շաբաթու պատճառաւոր վարկաւ, զոր աշակերտքն նորա զօրութն, զոր ի նմանէ ընկալեալք էին, փոխարկեցին ի միաշաբաթն կարբեցին ։ Զպսակն սրբազնագործեաց, յորժամ ի կանա գալիլիացւոց ի հարսանիս կոչեցաւ ։ Զարձակումն կնոջ արգել, և զզուգաւորութին զայն ածադիր վերահաստատեաց ։ Զպատարագս մատուցանելիս ըստ կարգին Ահարոնի, փոխարկեաց ի պատարագն ըստ կարգին Մելքիսեդեկի ։ Զթլփա-

տութ՟ին, որ էր ՚նշան բաժանման ազանց, ելոյծ, ևզամենեսեան միահաղոյն ՚ի ճշմարիտ ա՟ծպաշտութ՟ի հրաւիրեաց: Զկերակրոց խտրութիւս ՚ի բաց ըկեց, ևզուտելիս ընաւս միահաղոյն սրբեաց: Զմկրտութ՟ին, որով ծնունդք երկրի օրհնին ՚ի ք՟ս ևդառնան առ ճշմարիտն ա՟ծ, հաստատեաց ևհրամայեաց. Եւ զսրբազնութ՟ի ապաշխարութ՟ե որով վերս-տին գործեցելոց մեղաց ներում՟ն շնորհի, կարգեաց: Այսոքիկ ամենեքեան գրեցեալք գոն ՚ըն յաւետարանում: Եւայսէ նոր օրէնն զոր ետ մեզ ք՟ս:

Եւ վ՟ս այսորիկ ա՟ծ ՚ի ձեռն Երեմիայի մար-գարէի խոստացաւ որդւոցն իսրայէլի ՚ի գլ-լուխն 31. ՚ի թիւն 31. ասելով. Ահաւասիկ աւուրք գան, ևհարից տանդ իսրայէլի ևտանդ Յակոբայ զուխտ նոր, ոչ ըստ դաշինն, զոր կռեցի ընդ հարցն նոցա, ՚յաւուր այնմիկ ՚յորում կալայ զձեռանէ նոցա, զի արտածի-ցեի զնոսա ՚յերկրէն Եգիպտոսի. զդաշն զոր խանգարուն արարին, ևես տիրիցի նոցա, ասէ տ՟ր: տաց զօրէնն իմ ՚ի յաղիս նոցա, ե՚ըն սրտի նոցին գրեցից զնա: ևեղէց նոցա ՚յա՟ծ, ևնքեանք եղիցին ինձ ՚ի ժողովուրդ: ՚Ի բանից այսցանէ հաւաստեմք, Նախ՝ թէ ա՟ծ յետ օրինացն Մովսէսի ետ զայլ՟ն օրէն

որդւոցն

որդւոյն իսրայէլի , առ'ի բառնալ զհինն : Երկրորդ , թէ նոր օրէնս այս քանզի տևելոց իցէ հաստատուն մինչև 'ի վախճան աշխարհի , ո̃պ և թագաւորութիւն քի : Երրորդ թէ նոր օրէնս այս ոչ իցէր գրելի 'ի տախտակս քարեղէնս , կամ 'ի քարտէզս , այլ 'ի միտս և 'ի սիրտս մարդկան , ո̃պզի ամենեքեան 'ի սրտի իւրում ընթեռնուցուն զնոյնն , և մի՛ եղիցին կարօտք վարդապետի ումեք առ'ի ճանաչել զա̃ծ , այլ 'ի մեծագունից մինչև 'ի փոքրագոյնս ինքնին ճանաչիցեն զնա , և ա̃ծ 'ի ճշմարտութե յայտնեսցի նոցա , և եղիցի բացափայլ 'ի նորոց օրինաց : Ստուգիւ օրէնս այս , զորմէ խօսի Երեմիաս է օրէն տ̃ն յի , զի ոչ 'յերկինս գրեալ առաքեցաւ 'յերկիր , ո̃պ անիմայք և անզգայք ոմանք կարծեն , այլ ինքն տ̃ր յա̃ բերանով իւրով օրհնեցելով ուսոյց զնոյնս , և գծագրեաց 'ի սիրտս աշակերտաց իւրոց . Ուստի նմին առաքեաց զնոսա 'ի քարոզել զաւետարանն , ոչ եւ նոցա զգիրքս գրեցեալս 'ի քարտիզի , այլ միայն զպատուէրս ասելով , գնացէք այսուհետև աշակերտեցէք զա̃մ հեթանոսս , մկրտեցէք զն̃ս 'յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , ուսուցէք նոցա պահել զա̃մ զօրինչ պատուիրեցի ձեզ , և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զա̃մս աւուրս մինչև 'ի կատարած

աշխարհի ։ Դարձեալ 'ի վերջնում գլխոյն Մարկոսի ասէ, գնացէք ընդ հանուր աշխարհ, և քարոզեցէք զաւետարանն ամենից արարածոց, ոչ զաւետարանն գրեցեալ 'ի քարտիզի, այլ զհամբաւն կամ զաւետին բարի, զի մերձեցաւ արքայութիւն ա̄յ, ո̄պ ասէ Մատթէոս գնացէք և քարոզեցէք, թէ մերձեալ է արքայութիւն ա̄յ, այսինքն, արքայութիւն ք̄ի, որով թողանին մեզք և յանցանք հախահօրն Ադամայ, և բանի փակեցեալ դուռն արքայութե̄, և օրհնին համայնք ազգք և ազինք ։ Եւ որք միանգամ ընդունին զօրէն Նորա, այսինքն, զօրէն սիրելոյ զա̄ծ և զընկերն, և հաւատան 'ի նա, կեցցեն ։ Այս է համբաւն բարի, զոր առաքեալքն ս̄բք աւետարանեցին ընդ ընդհանուր աշխարհ, և որք ընկալան զնա, լուսաւորեցան միտք, և ծանեան զա̄ծ ճշմարիտ ; Ապա ուրեմն տախտակն կտակարանաց Նորոյ այսորիկ օրինի է միտ և սիրտ մարդկան ։ քանզի հաւատալն 'յա̄ծ է գործ մտաց ։ իսկ սիրելն զա̄ծ և զընկերն է գործ կամաց և սրտի ։ Եւ 'յայսցանէ երկուց կախին համայնք օրէնք և մարգարէութիւնք ։ որ սիրէ, զօրէնսն կատարէ ։ Բայց քանզի զկնի հրատարակման աւետարանականի այսորիկ հաւատոյ, յարեան խաբեբայք բազումք, որք խնդրէին խաւարե-

ցուցանել

ցուցանել զօրէնս. Ուստի երկնչելով քրիստոնէից թէ միգուցէ զկնի մահուան առաքելոյն մոլորութիւք զօրանայցեն, եւ ինքեանք ոչ կարիցեն ընդդիմամարտիլ եւ արտաքսել զնոյնս. խնդրեցին յառաքելոցն, զի զիրս գլխաւորս եւ զհարկաւորս կեցութէ հոգեւոր գրիցեն, եւ քարոզիցին աւանդիցեն նոցին: Այլեւ զի յիշատակաւ նուսմամբ հրամանայն քի կարիցեն հերքել զառաքեալս սուտս: վասն որոյ Մատթէոս զկնի համբարձմանն քի յետ հնգետասանից ամաց յԵրուսաղէմ քաղաքի լեզուաւ եբրայականաւ գրեաց զաւետարան իւր: Եւ Մարկոս որ էղեւ աշակերտ Պետրոսի առաքելոյն, զկնի 30. ամաց ի Հռոմ գրեաց զաւետարան իւր: Ղուկաս, որ էղեւ աշակերտ Պօղոսի առաքելոյն ի նոյն ժամանակի: Իսկ Յոհաննէս սիրելի աշակերտն քի զկնի 60. ամաց: Եւ յայսցանէ աւետարանչաց երկուքն, այսինքն Մատթէոս եւ Յոհաննէս անմիջապէս ուսեալք ի Քրիստոսէ գրեցին: Իսկ երկուքն, այսինքն, Մարկոս եւ Ղուկաս միջնորդութբ այլոց: Իսկ զաւետարանն քի գիրք աւետեաց յորջորջեմք, ոչ վասն այնորիկ իբր թէ գրեցեալ իցէ յերկինս եւ առ մեզ իջեալ ըստ բարբանջման տգիտաց, այլ զի տրն մեր յս քս ինքն ուսոյց եւ աւանդեաց

մեզ

մեզ 'ի ձեռն առաքելոց իւրոց սրբոց : զի ըն-
թերցմամբ նորին զօրացեալք ընդդէմ հակա-
ռակորդաց, գտանիցեմք զմխիթարութի͞, եղկե-
ցութի͞ հոգեաց մերոց :

Ապա ուրեմն տէրն մեր յս͞ քս͞ օրէնսդիր է,
ըստ մարգարէից, և քարոզ աւետեաց 'ի վե͞ր լե-
րինն Սիոնի , որ զձայնս պարհս կեցութե͞
'ի ձեռն առաքելոց իւրոց սրբոց ծանոյց աշ-
խարհի : Եօրըստօրէ համասփռէ զնոյն ,
եւ տարածէ , զոր օրինակ 'ի հնդիկս արեւելա-
կանս , և 'ի հնդիկս արեւմտականս , 'ի կղզիս
հեռաւորս և 'յանծանօթս , 'ի գիւղս և 'ի քա-
ղաքս , ո՛վ զի ամենեքեան միահաղոյն եմիա-
բան կարիցեմք երկիրպագանել տ͞ն յի͞ :

## Գլուխ Քսանևիններորդ .

### Յաղագս թէ քս͞ է փրկիչ ըստ աւետարանականի վկայութե͞ :

Տեառն յի͞ զփրկիչ գոլն, անունն
իւր օրհնեցեալ համահա-
ւաստէ . զի անունս այս յս͞
եբրայական , զփրկիչ նշա-
նակէ 'ի մերում լեզուի եբար-
բառոյ : Աւստի հրեշտակ
տ͞ն մինչ էկն առ Յովսէփ 'ի տեսլեան ասաց ,

Յովսէփ

Յովսէփ որդի Դաւթի , մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո , զի որ 'ի նմա է ծնեցեալ , է 'ի Հոգւոյն սրբոյ , ծնցէ զորդի, և կոչեսցեն զանուն նորա յ՟ս , զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց : Եւ առ հովիւսն ասաց , ահաւասիկ աւետարանեմ ձեզ զուրախութի մեծ, որ եղիցի ամենից ժողովրդոց,զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեցեալ տ՟ր 'ի քաղաքի Դաւթի : Զսոյն ճշմարտութ՟ի վկայեցին սամարացիքն , մինչ ասացին 'ցկինն սամարուհի , մեք գիտեմք , զի սա է փրկիչն աշխարհի : Ապա ուրեմն ըստ բանից այսոցիկ ք՟ս է փրկիչ :

## Գլուխ Երեսներորդ .

### Յաղագս թէ ք՟ս է տ՟ր ըստ աւետարանական վկայութ՟ե :

Զտ՟րութ՟ին ք՟ի աւետարանն մ՟զ վկայէ 'ի բազում տեղիս , որոց զոմանս առբերցուք աստ 'ի հաւաստութ՟ի ճշմարտութ՟ես:

'Ըն յաւետարանում Ղուկասու 'ի գլուխն 1. 'ի թիւն 43. ասէ Եղիսաբէթ 'ց կոյսն Մարիամ, Եւ ուստի

է այս ինձ, զի գայցէ մայր տ̅ն իմոյ առ իս:
այսինքն,զիա՛րդ դու որ ես մայր տ̅ն իմոյ ողջու-
նես զիս, որ եմ աղախին նորա: Եւ 'ր՛ն 'նոյ-
նում գլխոյ, 'ի թիւն 28. ասէ հրեշտակ տ̅ն
'ցկոյսն Մարիամ, Ողջլեր լի շնորհիւ, տ̅ր
ընդ քեզ: Այլև 'ր՛ն նոյնում գլխոյ, 'ի թիւն
76. Զաքարիաս լցեալ հոգւով սրբով ասաց
'ցմանուկն Յովհաննէս, Եւ դու մանուկ, մար-
գարէ բարձրելոյն կոչեսցիս, քանզի նախագը-
նասցես առաջի երեսաց տ̅ն պատրաստել
զճանապարհս նորա:

Իսկ ինքն ք̅ս ասաց 'ցաշակերտս իւրս, դուք
կոչէք զիս վարդապետ և տ̅ր, և բարւոք առնէք,
քանզի եմ իսկ, զի եթէ ես տ̅րս և վարդա-
պետս լուացի զոտս ձերս, և դուք պարտիք
միմեանց զոտս լուանալ: Ապա ուրեմն ըստ
ջանից այսոցիկ ք̅ս տ̅ր է:

## Գլուխ Երեսունեւմիերորդ .

### Յաղագս թէ ք̅ս է ա̅ծ ըստ աւետարանական վկայութե̅ :

Զա̅ծութի̅ն ք̅ի համայնք առաքեալք և աւետարանիչք և բնաւք գրեանք հարցն սրբոց վկայեն, և հանուրք քրիստոնեայք նմանաւանդ իմաստնագոյնք նոյն զք̅ս ա̅ծ և որդի ա̅յ ստորասեն, խոստովանին, եւ քարոզեն. Քանզի 'ըն յաւետարանում Մատթէոսի 'ի գլուխն 3. 'ի թիւն 17. զկնի մկրտութե̅ն յ̅ի 'ի յորդանան, Աղաղակեաց հայր ա̅ծ 'ի յերկնից 'ի լուր ամենեցուն ասելով, Դա է որդի իմ սիրեցեալ ընդ որ հաճեցայ ; և 'ըն յաւետարանում Մարկոսի 'ի գլուխն 1. 'ի թիւն 11. նոյն ձայնն հայրական վկայեաց 'ի յերկնից ասելով, Դու ես որդի իմ սիրեցեալ 'ի քեզ հաճեցայ : իսկ 'ըն յաւետարանում Ղուկասու և 'ըն յաւետարանում Յոհաննու նոյնպէս : Դարձեալ 'ըն յաւետարանում Յոհաննու 'ի գլուխն 1. 'ի թիւն 34. ասէ Յոհաննէս մկրտիչ, Ես տեսի և վկայեցի, զի սա է որդին ա̅յ : Զնոյն ասէ և Նաթանայէլ 'ըն նոյնում գլխոյ 'ի թիւն 49. Ռաբբի, դուես որդի ա̅յ :

Եւ

Եւ 'ըն յաւետարանում Մատթէոսի 'իգլուխն 14. 'իթիւն 33. ասի, իսկ որք էին 'ինաւակն եկին երկրպագեցին 'նմա ասելով, արդարև որդի ա̅յ ես: Եւևս 'ըն յաւետարանում Մատթէոսի 'իգլուխն 16. 'իթիւն 16. պատասխանեաց Պետրոս յ̅սի ասելով, դու ես ք̅ն որդին ա̅յ կենդանւոյ:

Այլև 'ըն 'նոյնում աւետարանում 'իգլուխն 27. 'իթիւն 54. ասաց հարիւրապետն, իրաւի որդի ա̅յ էր սա: Իսկ 'ըն յաւետարանում Մարկոսի 'իգլուխն 1. 'իթիւն 1. ասի. Սկիզբն աւետարանի յ̅ի ք̅ի որդւոյ ա̅յ: Դարձեալ ա̅քն Թովմաս 'ըն յաւետարանում Յոհաննու 'իգլուխն 20. 'իթիւն 28. ասաց 'ց յ̅ս. տ̅ր իմ և ա̅ծ իմ: Եւ 'յայլս բազումս տեղիս վկայի նոյն ճշմարտութ̅իս, թէ 'ի հրէից, և թէ 'ի յայսահարայց, զորս աւելորդ համարիմք գրել. Ապաուրեմն ճշմարտապէս ք̅ս ա̅ծ է, և որդի ա̅յ:

Գլուխ

## Գլուխ Երեսուններկուերորդ.

### Առարկութի̅ք հակառակորդայ:

ՍԷՆ ոմանք, ք̅ս է որդի ա̅յ ո̅ղ ևմէք, այլ ոչ որդի ա̅յ ճշմարիտ: Պատասխանեմք, թէ զվկայութի̅ս բնաւս զորս առբերաք վ̅ս յ̅ի հաստատեն նորին զըստ բնութե̅ որդի գոլն ա̅յ: Դիձէլ, բաղումք կոչին որդիք ա̅յ, սակայն յ̅ս ք̅ս ասի որդի ա̅յ միածին, ո՛պ ասէ Յոհաննէս 'ի գլուխն 3. 'ի թիւն 16. քանզի այնպէս ա̅ծ սիրեաց զաշխարհ, զի զորդին իւր միածին տայցէր, զի ա̅մ որ հաւատայ 'ի նա, մի՛ կորիցէ, այլ ունիցի զկեանն յաւիտենական: իսկ 'ի գլուխն 1. 'ի թիւն 18. ասէ. Զա̅ծ ոչոք ետես երբէք, միածին որդին որէ 'ի ծոցում հօր նա պատմեաց: Դարձեալ, 'ի յաւետարանում Յոհաննու 'ի գլուխն 9. 'ի թիւն 35. եհարց ք̅ս 'ցկոյրն լուսաւորեցեալ ասելով, դու հաւատաս 'յորդին ա̅յ. Պատասխանեաց նա ևասաց, ո՛վ է տ̅ր, զի հաւատայցեմ 'ի նա, ևասաց նմա յ̅ս, և տեսեր զնա, և որ խօսի ընդ քեզ, նա է: իսկ նա ասաց, հաւատամ տ̅ր, և'յերեսս անկեալ եր-

կիրեպագ

կիրեպագ նմա: Եւս յիգլուխն 11. յիթիւն 4. լուեալ յս՟ զհիւանդութիւն Ղազարու ասաց, հիւանդութիւնս այս ոչէ առ մահ, այլ վս՟ փառացն այ՟, զի փառաւորեսցի որդին այ՟ այնուիկ: Այլեւ յիգլուխն 17. յիթիւն 1. ասէ յս՟, հայր եկն ժամ, փառաւորեա զորդի քո, զի եւ որդի քո փառաւորեսցէ զքեզ:

Ապա ուրեմն ըստ վկայութեց այսոցիկ յս՟ է ճշմարիտ որդի այ՟ միածին եւ էակից հօր, եւ հաւատացելոց իւրոց զկեանս պարգեւօղ:

Պատասխանեմք եւ թէ արտաքոյ այ՟ ոչ գոյ կարողութի զկեանս մշտնջենաւորս շնորհե-լոյ, իսկ քս՟ է շնորհօղ կենաց մշտնջենակա-նաց, ըստ այնմ որ հաւատայ ինձ կեցցէ յաւի-տեան, ուրեմն քս՟ է ճշմարիտ այ՟: Դար-ձեալ, միածին ասի այն, որ է որդի ըստ բնու թե եւ ոչ ըստ որդեգրութե. իսկ քս՟ է որդի միածին այ՟. որ՟ ցուցաք, ապա ուրեմն եւ այլն:

Դարձեալ, որդի ըստ էութե ունի զբնու թի հօր, իսկ քս՟ ունի զբնութի հօր ըստ մարգարէից, քանզի մարգարէք վկայեցին վս՟ ք՟ի, թէ իցէ որդի այ՟ եւ այ՟. իսկ գիրք աւե-տարանականք մինչ զյս՟ որդի այ՟ ասեն, հա-մաձայնին մարգարէից, զի եթէ այլապէս խօսէին, ընդդիմաբանէին նախատեսութե մար-գարէիցն, եւ այսպէս սուտք լինէին, ապա ու

րեմն

րէմն քս̃ է ճշմարիտ որդի այ̃ ըստ բնութե̃,
Նա̃ծ :

Արդ՝ յիսկզբանէ մինչև ՚ցարդ եզրակացուցանելով ասեմք, թէ քս̃ է Մեսիհն ՚ի մարգարէից աւետարանեցեալ, ՚ի կուսէն Մարիամու ՚ի Բեթղեհեմ քաղաքի, ՚ի ժամանակի յորում ոչ գոյր իշխան ՚ի ցեղէն Յուդայի ծնիցեալ. որ զսքանչելիս մեծամեծս ՚ի կեցութ̃ի ազանց արտագործեաց, մահու խաչի դատապարտեցաւ, ըստ Դանիէլի և ըստ Եսայեայ մարգարէից. Թաղեցաւ ՚ի յերկրի, յարեաւ ՚ի մեռելոց զկնի երից աւուրց, համբարձաւ ՚ի յերկինս, Նստաւ ընդ աջմէ հօր. որ և է մարգարէ, հովիւ, քահանայ, իշխան, դուքս, Թագաւոր, և ժառանգ յա̃յ կացուցեալ հանրոյ աշխարհի, որում և ծնունդք երկրի ծառայեն, և համայնք Թագաւորք և իշխանք երկիրպագանեն, որոյ իշխանութիւն է անզրաւելի, և Թագաւորութիւն անփախճանելի. Օրէնսդիր է և փրկիչ, Տր̃ է բոլորից և որդի այ̃. Ուստի համայնք ազինք ՚ի նմանէ օրհնին, և բնաւք բարութիք ՚ի նմանէ յառաջանան, և որք միանգամ խակութբ̃ հաւատան ՚ի նա և պահեն զպատուիրանս նորա, կեցցեն յաւիտեան : Այսորիկ ամենեքեան են ճշմարտագոյնք ճշմարտութիք, և պայծառագոյնք քան զարեգակն, և

N այնքան

այնքան հաւաստագոյնք, մինչզի թէև ոչ իցէին գրեանք աւետարանականք, սակայն քարշէին զմեզ 'ի հարկէ հաւատալ քի, և հետևիլ լուսազարդից շաւղաց նորին :

## Գլուխ Երեսուններեքերորդ .

### Ուսումն և խրատ վն պատասխանելոյ յառաջարկութեց :

Ո՛չ զի իւրաքանչիւրոք կարիցէ պատասխանել և լուծել զառարկութիս հակառակորդաց ընդդէմ հաստատեցելոյ ճշմարտութեն . Ասեմք, թէ օրհնեցեալ անունս այս, Քս, զօծումն նշանակէ, բայց զօծումն իմն անհամեմատ այլոց, եզական, և գերազանց քան զամ օծումն, քանզի է ածային, որպ ասացաք 'ի վերոյ : Քանզի յն օծաւ նոյնով ածութբն . Զի յորժամ հաճեցաւ կամն ածային ընուլ զխոստմունս, զորս խոստացեալ էր առ Աբրահամ, իսահակ, և Յակոբ, իբր թէ 'ի սերմանէ նոցա օրհնելիք իցէին ազգք ազինք, առաքեաց զԳաբրիէլ հրեշտակապետն առ կոյսն Մարիամ, աւետեաց նմա, թէ 'ի նմանէ ծնցի

ծնցի ք̅ն, զոր մարգարէք գալոց գոլ քարո-
զէցին. իսկ 'ի լսէլն Մարիամու զբանս զայս,
քսկոյն՝ ամենակարողն ա̅ծ 'ըն կուսականում
որովայնի 'նորա, 'ի ձեռն զօրութե̅ հոգւոյն
սրբոյ, բաղկացոյց զմարմին իւ̅ն իմաքրագու-
նեղէ 'յարենէ նորա, զոր և հոգւով բանակա-
նաւ կենդանացոյց, և արար մարդ ճշմարիտ,
և'ի նոյնում կիտի ժամանակի բանն ա̅յ, որ
և է ա̅ծ և որդի ա̅յ միածին, զմարդկութին
զայն 'իյանձն իւր սեփական միաւորեաց, և
առ այս միաւորութի բոլոր երրորդութին
ներգործեաց, այսինքն հայր և որդի և հոգին
սբ̅ 'իմիասին. Քանզի առք երրորդութեն
առ արտաքս են անբաժանելիք, բայց միաւո-
րութին այն եղերեցաւ 'յանձն բանին, վ̅ս
այսորիկ միածին որդին ա̅յ, կատարեալն 'ըն
յա̅ծութե̅, զի նի միաւորութեն այնորիկ ընդ
մարդկութեն, եղև մարդ կատարեալ, նման
մեզ ամենևին բայց 'իմեղաց. Թարց ումեք փոփո-
խութե̅ և այլայլութե̅ բնութեցն, այսինքն,
ա̅ծայնոյն, և մարդկայնոյն, զի երկաքանչիւր
բնութին 'նի րում էութե̅, յարամնայ, այս-
ինքն մարդկութին 'ըն յէութե̅ իւրում ստեղ-
ծականում, և ա̅ծութին 'ըն յէութե̅ իւրում
անստեղծականում. Եւ այսպէս որդին ա̅յ
մնայ ա̅ծ կատարեալ 'ըն ա̅ծութե̅, ո̅ք միշտ

էր: Նոյն ինքն 'ի յառեցելում մարդկու-
թե մարդ ճշմարիտ նկատարեալ. Եւ այս է
զոր Յովհաննէս 'ի սկզբան իւրոյ աւետարա-
նին ասաց, 'ի սկզբանն էր բանն, եւ բանն էր
առ ա̅ծ, եւ ա̅ծ էր բանն. Եւ բանն միս
եղեւ, եւ բնակեաց 'ի մեզ. այսինքն, բանն ա̅յ
յաւիտենական 'ի ժամանակի եղեւ մարդ: Ապա-
տուստ երկու բնութիւքն առանց փոխարկու-
թե, 'ի մի յանձն նոյնոյ բանին ա̅յ միաւորե-
ցեալք, մի ք̅ս ասին եւ օծեցեալ: Վ̅ս որոյ ք̅ս
անունս ոչ յաղագս միայնոյ ա̅ծութե, եւ ոչ
յաղագս միայնոյ մարդկութե քարոզի: այլ
յաղագս երկուցն 'ի միասին միաւորեցելոյ, ըստ
որում անունն, Օծած, նշանակէ. որ երկուց
նոցա ունի զնշանակութի, այսինքն զիրին
զօծեցելոյ որ է բնութի մարդկային, եւ զիրին
որով օծեցաւ. որ է ինքն ա̅ծութին: Ապա-
ուրեմն ք̅ս է ա̅ծ եւ մարդ, ոչ 'յայնմանէ զի է
ա̅ծ օծեցեալ, այլ 'յայնմանէ զի է մարդ օծե-
ցեալ, զի մարդկութին ա̅ծութե̅ն օծեցեալ
եղեւ, այսինքն ընդ նոյնոյ ա̅ծութեն միաւորե-
ցեալ եղեւ: Վ̅ս որոյ ք̅ս մարդ է եւ ա̅ծ, մարդ
է մարդկութեն, եւ ա̅ծ է ա̅ծութեն. զի ա̅մ ինչ
որ միանգամ ստորոգի զա̅յ եզբանէն ա̅յ,
ստորոգի զմ̅նէ յս̅է, ըստ որում է ա̅ծ եւ բան
ա̅յ: Եւ ա̅մ ինչ որ միանգամ ստորոգի զմարդոյ,

ըստ

ստորոգի ևս զՔնէ յէ ըստ որում է մարդ: Աստի համայնք ստորոգութիք ածութե և մարդկութե ստորոգին զմիոյ և զնոյնոյ յէ քէ, որ ունի զերկու բնութիս. այսինքն՝ զածային և զմարդկային: Վն որոյ մինչ ասեմք թէ յս է որդի այ, ոչ իմանամք թէ մարմին, ոսկր, ևարիւն, և հոգի նորա իցէ որդի այ, այլ թէ ածութիւն իցէ որդի այ: Նմանապէս մինչ ասեմք թէ յս է որդի մարդոյ, ո՛չ իմանամք թէ ըստ ածութեն իցէ որդի մարդոյ, այլ ըստ մարմնոյն և ըստ հոգւոյն, զի է մարդ:

Եւ այսպէս միշտ զնոյն կանոն պահեմք սակս այլոց ստորոգութեցն, քանզի տր յս է մի անձն երկոքումբք բնութեբք միաւորեցեալ, որոյ մինն է արարած և միւսն արարիչ: մինն մարդկային և չարչարանաց և մահուան ընդունակ, իսկ միւսն ածային անչարչարելի և անմահ: Եւ զայսոսիկ յարացուցիւ մարդոյ բացայայտեմք, զի՛ ըն մարդում զերկուս բնութիս հակադրեցեալս միմեանց նկատեմք, զմարմին և զհոգի բանական, մարմինն տեսանելի է և շօշափելի, ապականելի է և մահացու. Իսկ հոգին բանական է ան տեսանելի, անշօշափելի, անապական, և անմահ: մարմինն ուտէ և ըմպէ, ննջէ և հիւանդանայ, աղտեղանայ տկարանայ և զօրանայ.

Իսկ հոգին բանական 'յայսմանէ յատկութենց ամենևիմբ բացակայանայ, զի ոչ ուտէ և ոչ ըմպէ, ոչ հիւանդանայ և ոչ առողջանայ, ոչ տկարանայ և ոչ զօրանայ: զի այսպիսեաց անընդունակ է. և մի՛շտ էութե՛ և յատկութե՛ք իւրովք բնականօք, ըստ որում 'իսկզբանէ զօրութե՛ն ա՛յ ստեղծեցեալ է: Արդ' եթէ հոգին բանական և մարմինն հականերհակք են, ուրեմն 'ի հարկէ են երկու բնութիք: որք թէպէտ միաւորեցեալք են 'ի մի մարդ. սակայն միշտ պահեն զերկոյութի՛, և ոչ երբէք լինին մի բնութի՛, եթէ ոչ անկարաբար փոխարկեցեալք առ միմեանս խառնիցին և շփոթիցին և առնիցեն զմի ինչ, ըստ որում հանդիպի 'ի տարերս, որք խառնեցեալք առ միմեանս առնեն զայլինն:

Բայց այս է անկարելի, զի մարմինն ոչ կար է, լինել հոգի բանական, և ոչ հոգին բանական մարմին: Եւ քանզի 'ի մարդում երկու են բնութիք, և 'ի յերկուցն բաղկանայ մի մարդ, զոր օրինակ ես մի եմ, և ունիմ զերկուս բնութիս միաւորեցեալս, զմինն մարմնական, և զմիւսն հոգեկան, որք թէպէտ միաւորեցեալք են ընդ միմեանս, սակայն մինն ոչէ միւսն, զի 'ի յորոշին 'ի միմեանց, ոչ մարմինն, և ոչ հոգին, առանձնապէս առեցեալք

ասին

տան մարդ , ուրեմն են երկու բնութիք անշփոթաբար միաւորեցեալք , որք միշտ պահեն անխախտօրէն զյատկութիս իւրեանց . իսկ երկու իրքն ոչ լինին մի . Ոպ եւ մին ոչ լինի երկու . Ուստի է ուրեմն ինձ , զի իցեմ մի . ոչ սոսկ 'ի միութէ հոգւոյ , եւ ոչ եւս 'ի միութէ մարմնոյ , զի ոչ համակայիմ 'ի մարմնոյ միայն , եւ ոչ եւս 'ի հոգւոյ միայն . այլ 'ի հոգւոյ եւ 'ի մարմնոյ միաւորեցելոց ընդ միմեանս , ուրեմն մի եմ 'ի միութէ անձին , ոպ եւ համայնք իմաստասէրք ուսուցանեն ; Եւ քանզի անձն մարդոյ մի է , վս որոյ մի ասեմք զմարդ , եւ զերկուս բնութիւս միաւորեցեալս 'ի նմա , զի իմաստասէրք սահմանեն զանձն գոլ բանականի բնութէ անտրոհելի գոյացութի . Եւ եթէ անձն է եզական իմն , ուրեմն 'ի հարկէ մի է, եւ իւրաքանչիւր մարդ միութեն իւրով անձնականաւ մի ասի: Ապաուրեմն մինչ մի ասեմք զմարդ, որ է բաղադրեցեալ 'ի յերկուց, այսինքն 'ի հոգւոյ եւ 'ի մարմնոյ, զմիութի Նորին անձնաւորական 'ի միտ ածեմք : Ըստ այսմ եւս խորհիլ պարտիմք զքէ, զի քս մի է 'ի յերկուց բնութեց անշփոթապէս միաւորեցելոց, այսինքն 'ի յօծեցելոյն , եւ 'յայնմանէ որով օծաւ. երկու է նկատելով 'ի բնութիւն ածային, եւ մարդկային ; եւ մի է նկատելով 'ի միութի անձ-

ձին ա՟յ բանին, ՚Նորում գոն միաւորեցեալք նախասացեալքն բնութիւնք: Եւ այսու պատճառաւ ասեմք, թէ քս՟ ա՟ծ մարդ է, և ա՟ծ մարդացեալ է, և թէ ա՟ծ մարդացեալ է որդի մարդոյ, և թէ երանուհին Մարիամ կոյս է մայր ա՟յ մարդացելոյ, թէև ա՟ծութիւն քի ոչ էառ ՚ի նմանէ զէղանիլն ծննդեամբ, քանզի ա՟ծութիւն ոչ ծնանի ՚յարարածոյ, որով հետև է յաւիտենական. Սակայն երանի կոյսն Մարիամ ասի մայր ա՟յ, և ա՟ծ ասի մարդ եղեալ, և որդի մարդոյ, կամ որդի Մարիամու, զի ՚յայսոսիկ ոչ վերախնդրի թէ ա՟ծութիւն ծնանիցի, այլ բաւական է միայն, զի մարդկութիւն ՚ի սրբուհւոյ կուսէն Մարիամու յղացեալ, ՚ի ծնէլութեն իւրում իցէ միաւորեցեալ ընդ անձին բանին ա՟յ: զի այսու միաւորութեամբ ասի ա՟ծ որդի մարդոյ: Զոր օրինակ մարդն յղացեալ ՚յարգանտի մօր, ՚ի յղացմանն ծնւրում միայն առնու ՚ի ծնողաց իւրոց զմարմինն, այլ ոչ զհոգին բանական, որ ստեղծագործեցեալ զօրութեամբն ա՟յ, ներհեղանի. սակայն որով հետև մարմինն և հոգին բանական միաւորեցեալք են ՚ի մի անձն մարդկային, զբոլոր բաղադրութիւն այն, ասի որդի մարդոյ. Եւ թէպէտ հոգին բանական որ է մասն ազնուագոյն, ոչ յառաջագայիցի ՚ի ծնողաց,

այլ

այլ միայն մարմինն, սակայն բոլորն այն, մարդ կորջորջի եորդի մարդոյ, քանզի ՚ի ծննելութե̅ ֆերում՝ գոյ անձնաւորաբար միաւորեցեալ ընդ հոգւոյն բանականի։ Նոյնպէս ասեմք եւ յաղագս ք̅ի, զի մարմին նորա ՚ի մաքրագունեղէ յարենէ երանուհւոյ կուսին Մարիամու, գործակցութե̅ հոգւոյն սրբոյ յղացեալ, եւ հոգի նորին բանական զօրութե̅ն ա̅յ ստեղծագործեցեալ, այսինքն, բոլոր մարդկութի̅ն ք̅ի ընդ ա̅ծութե̅ն միաւորեցաւ ՚ի յանձն բանին ա̅յ. եւ բոլորս այս՝ ասի որդի ա̅յ; ասի եւ որդի մարդոյ ըստ մարդկութեն ծնիցելոյ ՚ի յերանուհւոյ կուսէն Մարիամայ։ Իսկ Մարիամ կոյս, ասի մայր ա̅յ, եւ մայր որդւոյն ա̅յ մարդացելոյ, ոչ վ̅ս այնորիկ իբրթէ ա̅ծութի̅ն անսերելի սերեցեալ իցէ ՚ի կուսէն Մարիամայ, այլ քանզի սիրեցեալ մարդկութի̅ն միաւորեցեալ գոյր ՚ի յանձն բանին ա̅յ, ո̅պ ասացաք ՚ի վերոյ։

Գլուխ

## Գլուխ Երեսուներկչորսերորդ .

### Առարկութիւնք ոմանք ընդդիմադրականք :

Ընդէմ այսմիկ ճշմարտութ՟ե առարկեն ոմանք ասելով . Ք՟Ս ա՟ծ է ըստ մարգարէիցն , ապա ուրեմն ոչ կարէ ծնանիլ ՚ի կնոջէ , զի որ ծնանի ՚ի կնոջէ է արարած , եւ ոչ ա՟ծ արարչագործ : Պատասխանեմք , Ք՟Ս ծնաւ ՚ի կուսէն Մարիամայ ըստ որում է մարդ , ոչ ըստ որում է ա՟ծ , այլ քանզի մարդկութի՟ն այն գոյր միաւորեցեալ ընդ ա՟ծութե՟ն ՚ի յաւիտենական բանին ա՟յ , վ՟ն որոյ ասի ք՟ս ծնիցեալ ՚ի Մարիամայ . այսինքն ըստ մարդկութե՟ն , զի ըստ ա՟ծութե՟ն ծնիցեալ գոյր ք՟ս ՚ի յա՟յ Հօրէ նախ քան զյաւիտեանս : Աստուստ ք՟ս զերկուս ունի զծնունդս , մին յաւիտենական ըստ ա՟ծութե՟ն , ՚ի Հօրէ ա՟յ , իսկ միւսն ժամանակաւոր ըստ մարդկութե՟ն ՚ի կուսէն Մարիամայ : Ապա ուրեմն ք՟ս , որ ունի զերկուս բնութի՟ս միաւորեցեալս ՚ի մի անձն բանին ա՟յ ըստ միոյն ասի ծնանիլ ՚ի յաւիտենից եւ ըստ միւսոյն ծնանիլ ՚ի ժամանակի : Ուստի եզրակացուցանիլ ոչ կարէ , թէ ք՟ս իցէ արարած ,

եթէ

էթէ ոչ ըստ մարդկութեան : զի մարդկութիւն քն̄ է Ճշմարիտ արարած, եւ ժամանակաւոր, բայց ըստ ած̄ութեան է յաւիտենական : Եւ զայս նշանակեաց ինքն քն̄ մինչ ասաց, Յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես : Թէպէտ եւ յետ քառասնից ծննդոց զկնի Աբրահամու ծնաւ ՚ի կուսէն Մարիամայ :

Առարկեն հակառակորդք . արարիչն ոչ կարէ ծնանիլ յարարածոյ իւրմէ. իսկ քն̄ ած̄ է արարիչ . եւ Մարիամ կոյս արարած այ̄, ապա ուրեմն քն̄ ոչ կարէ ծնանիլ ՚ի Մարիամայ կուսէ :

Պատասխանեմք, քն̄ է համանգամայն ած̄ եւ մարդ . ըստ որում է ած̄, է արարիչ ամենից արարածոց, նա եւ երանուհւոյն Մարիամու . իսկ ըստ որում է մարդ, է որդի երանուհւոյն Մարիամու :

Առարկեն հակառակորդք, Որդին մարդոյ է արարած, իսկ քն̄ է որդի մարդոյ, ապաուրեմն քն̄ ոչ է ած̄, այլ արարած : Պատասխանեմք, քն̄ ըստ որում է մարդ, է որդի մարդոյ եւ արարած . իսկ ըստ որում է ած̄, է որդի այ̄ եւ ած̄ :

Առարկեն հակառակորդք, քահանայն պարտի ունել ինքեան զվեհագոյն ոք, որում պատարագիցէ, իսկ քն̄ է քահանայ, ապա

ուրեմն

ուրեմն ունի զվեհագոյն ոք, նոյնպէս ոչ եղիցի ա̄ծ :

Պատասխանեմք, քս̄ քահանայ է ըստ որում է մարդ, և ըստ մարդկութեն ունի զվեհագոյն ոք ինքեան, այսինքն զա̄ծ, վս̄ որոյ և ասաց Հայր իմ մեծ է քան զիս. իսկ ըստ որում է ա̄ծ, 'է հաւասար հօր յաւիտենականի, ուստի և ասաց, ես և Հայր իմ մի եմք :

Առարկեն հակառակորդք, ա̄մ որ ընդունակ է մահու, է ապականելի, և ոչ է ա̄ծ, իսկ քս̄ մեռաւ ըստ մարգարէից, ապա ուրեմն քս̄ ոչ է ա̄ծ : Պատասխանեմք, քս̄ մեռաւ ըստ որում է մարդ, և ոչ ըստ որում է ա̄ծ :

Առարկեն հակառակորդք, ծառայն ա̄յ ոչ կարէ գոլ ա̄ծ, այլ արարած. իսկ քս̄ է ծառայ ա̄յ ըստ մարգարէից, ապա ուրեմն քս̄ ոչէ ա̄ծ : Պատասխանեմք, քս̄ է ծառայ ա̄յ ըստ մարդկութեն, ըստ որում է մարդ, այլ ոչ ըստ ա̄ծութեն, ըստ որում է ա̄ծ և տէր ամենից արարածոց :

Առարկեն հակառակորդք, քս̄ է նման մեզ, ըստ որում աւետարանն ս̄բ վկայէ, քանզի եկեր, էարբ, տեսանիւր, շօշափիւր և այլն, ապա ուրեմն ոչէ ա̄ծ : Պատասխանեմք, քս̄ է ա̄ծ և մարդ. ըստ որում է ա̄ծ, ոչ է նման մեզ, այլ 'ի վեր քան զմեզ, և գեր քան զա̄մ

ստեղծ

ստեղծուած. իսկ ըստ որում է մարդ, է նման մեզ ամենևիմբ բաց 'ի մեղաց:

Առարկէն հակառակորդք. Ա՛ծ ունի զմի միայն կամ, իսկ ք̄ս զայլ ինչ ունի 'ի նմանէ, քանզի 'յաղօթելն իւրում առ հայր ասաց, ո՛չ իմ կամ, այլ քո դ լիցի, ապա ուրեմն ք̄ս ոչէ ա̄ծ: Պատասխանեմք, ք̄ս է ա̄ծ կատարեալ և մարդ կատարեալ, վ̄ որոյ ունի զերկուս կամս, այսինքն զա̄ծային և զմարդկային, որք ոչէն միմեանց ներհակականք, այլ մարդկայինն ա̄ծայնոյն համահետևօղ, և հպատակ.

Ուստի ասաց ոչ իմ կամ, այսինքն, ոչ մարդկայինն իմ կամ, այլ ա̄ծայինն, որով ես և դու մի եմք:

Առարկէն հակառակորդք, ք̄ս է փոքրագոյն քան զհայր, քանզի ինքն ասաց, հայր իմ մեծ է քան զիս, ապա ուրեմն ոչէ ա̄ծ: Պատասխանեմք, ք̄ս ըստ որում է մարդ, է փոքրագոյն քան զհայր, նա և քան զհրեշտակս, սակայն ըստ որում է ա̄ծ, է վեհագոյն քան զամենայն, և հաւասար հօր, և մի ա̄ծ ընդ նմա, ուստի ասէ, ես և հայր իմ մի եմք:

Առարկէն հակառակորդք, ա̄ծ է հայր ք̄ի և մեր, ո̄պ և ասաց ինքն ք̄ս, ելանեմ ես առ հայրն իմ և առ հայր ձեր, և ա̄ծն իմ և ա̄ծ ձեր, ապա ուրեմն ո̄պ մեք արարածք եմք,

Նոյն

նոյնպէս է եւ քս: Պատասխանեմք, թէ մինչ ասեմք ած, ունիմք զնկատումն առ ստեղծուածս, եւ մինչ ասեմք Հայր, ունիմք զնկատումն առ որդիս: Եւ զի կրկին է որդի, մինն է բնական, որ ունի զբնութի եզէութի Հօր, եւ ասի ճշմարիտ որդի: իսկ միւսն է պատուհական, որ ոչէ 'ի բնութե Հօր եւ ասի որդեգրական որդի: Ասեմք ուրեմն առ առարկութին, քս ասաց եղանեմ ես առ Հայրն իմ, այսինքն առ Հայրն իմ բնութենական, որոյ եմ ես ճշմարիտ եւ իսկական եւ միածին որդի: եւ առ Հայր ձեր, այսինքն առ Հայր ձեր պատուհական, որոյ ոչէք դուք որդիք բնութենականք, այլ 'ի ձեռն շնորհաց վերընկալեցեալք 'յորդեգրութի, ուստի եւք բազումք, եւ ոչ միածին: իսկ մինչ ասաց եղանեմ ես առ ածն իմ, խօսեցաւ վս մարդկութե իւրոյ ըստ որում է ստեղծուած, ոպ եմեք: ըստ այսմ եւ մեկնի եղանելն եւ նստիլն, զի ած ոչ եղանէ եւ ոչ նստի, որովհետեւ է անեզր, եւ անուր:

Ահա այս է ով թագաւոր մեծարգոյ հաւատն քրիստոնէից, որ զմեզ եղբնաւս հաւատացեալս վերածէ 'յարքայութին երկնից, որպէս խոստացաւ ինքն քս յոյսն ամենեցուն ասելով, որ հաւատայ յիս, տաց նմա զկեանս

յաւի-

յաւիտենականս. Եւ զայս սրբազան եւմիակ
հաւատս համառօտեցին առաքեալքն մեր
այսպէս.

Հաւատամ 'ի յԱծ հայրն ամենակարող, ստեղծողն երկնի եւերկրի. Եւ 'ի յՅս Քս որդի 'նորա միակ տէրն մեր, որ յղացեալ եղեւ 'ի հոգւոյն սրբոյ, ծնաւ 'ի Մարիամայ կուսէն, չարչարեցաւ ընդ փոնտիոսիւ Պիղատոսիւ, խաչեցաւ մեռաւ եւթաղեցաւ, էջ 'ի դժոխս, 'յերրորդում աւուր յարեաւ 'ի մեռելոց, ել 'յերկինս, 'նստի ընդ աջմէ այ հօր ամենակարողի, ուստի գալոց է 'ի դատել զկենդանիս եւ զմեռեալս. Հաւատամ 'ի հոգին սբ, 'ի սբ կաթուղիկէ եկեղեցին, 'ի հաղորդութին սրբոց, 'ի թողութին մեղաց, 'ի յարութին մարմնոյ, եւ 'ի կեանս յաւիտենական. Ամէն:

ՎԱԽՃԱՆ ԳՐԳՈՅՍ:

## Սխալանք Տպագրողին։

| Էջ. | Տող. | Սխալ. | Սրբագրեա՛. |
| --- | --- | --- | --- |
| 15. | 20. | իւրոմ | իւրում |
| 29. | 9. | որղի | որդի |
| 30. | 9. | Մարգա-րէին | Մարգարէին |
| 112. | 23. | դուքս ծն-ցէ | դուքսս ծնցէ |
| 142. | 5. | նիրև | նիբրև |
| 149. | 9. | ղեձուս | զձեռս |
|  | 17. | 'իթգանո-ղաց | 'իթքանողաց |
| 163. | 22. | 'ցկէսգ ի-չերն | 'ցկէս գիշերն |

ՅԱՆԿ

## Յ Ա Ն Կ։

Առաջաբանութի՟ 3.

### Հատոր. 1.

Ճանաչիլութի՟ այ՟. 7.
Գոյութի՟ այ՟. 10.
Միութի՟ այ՟. 12.
Գիտելիք գերբնականք. 14.
Մարդկութի՟ քի՟. 19.
Ածութի՟ քի՟. 26.
Մի բնութի՟ ներեք անձինք. 35.
Մի էութի՟ ներեք անձինք. 44.
Առարկութի՟ք և նոյին պատասխանիք. 52.
Պատասխանի երկրորդ. 79.

### Հատոր. 2.

Անունն քի՟. 109.
Օրհնութի՟ ՚ի ձեռն քի՟. 111.
Քս՟ է ճշմարիտ իշխան. 120.
Քս՟ է մարգարէ. 123.
Քս՟ է կեցուցիչ 124.
Քս՟ է քահանայ և տր՟. 125.
Քս՟ է օրինադիր և թգր՟ : 126.
Որպիսի թգր՟ է քս՟. 128.
Երէն գալստեանն քի՟. 135.

# Ց Ա Ն Կ:


Մայրն քո եքաղաք 'նորին. 137.
Հարկ էր գալն քարոզն եհրաշքն քո. 138.
Չարչարանք և մահն քո. 141.
Ժամանակ մահուան քո. 143.
Որպիսութիւն մահու 'նորին. 146.
Իջումն 'նորին 'ի դժոխս. 150.
Մարմին քո 'ի գերեզմանի. 152.
Ընդ աջմէ հօր բազմի քո: 153.
Տր է քո բոլորի աշխարհի. 154.
Յազգէ Դաւթի, 'ի կուսէ ծնաւ քո 'ի բեթ-
լեհէմ. 155.
Վաղճան Թգրոց եդքսից. քո 158.
Քո արար զօքանչելիս. 159.
Չարչարեցաւ եմեռաւ քո. 162.
Յո քո է իշխան եդուքս եթգի. 165.
Է քո քահանայ եհովլի. 170.
Է եւ մարգարէ քո. 172.
Օրէնադիր 'նորոյ օրէնի քո. 173.
Վո էր թլփատեցաւ քո. 179.
Համառօտութիւն վերոդեցելոյ. 181.
Փրկիչ է քո. 186.
Տր է քո. 187.
Աշ է քո 189.
Պատասխանիք առարկութեց. 191.
Ուսումն և խրատ պատասխանելոյ. 194.
Առարկութիւք եպատասխանիք. 202.

[30r]

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]